Հուր

ԻՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ
2500–ԱՄԵԱԿԻՆ ՆՒԻՐՒԱԾ
ԲԱՑԱՌԻԿ ԹԻՒ 3–4

3–4

Ա. ՏԱՐԻ 1971 ՍԵՊՏ. – ՀՈԿՏ.

«ՀՈՒՐ» ԱՄՍԱԳԻՐ
Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն՝
Դոկտ. ԳԱԳԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Պող. Խարիմխանը Զանդ թիւ 94
Բ. յարկ
ՀԵՌԱԽՕՍ 834170

HOOR MONTHLY
Proprietor and director
Dr. GAGUIK HOVAKIMIAN
2-nd fl. No. 94
Kharimkhan Zand Ave.
Tehran—Iran
Tel. 834170

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

1.—Առաքելութիւն հայրենիքիս համար
Ն. Կ. Մ. Մոհամմէդ Ռեզա Շահ Փահլեւի
Թարգմ. Կ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ 1
2.—Փառանդից Տեղեկատուութիւններ ԱՐՏԱԿ ԱՐՓ ՄԱՆՈՒԿԵԱՆ 20
3.—Պարսկական Կայսրութիւնը Թարգմ. Ա. ԱՄՈՒՐԵԱՆ 27
4.—Կարծիքներ Կիւրոս Բ. Մեծի մասին Ա. ԱՄՈՒՐԵԱՆ 40
5.—Դարեհ Ա. Մեծը եւ Մազդեզնացութիւնը Ա. ԱՄՈՒՐԵԱՆ 43
6.—Նախախրանք ՄԱՆՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ԲՈՂԱՏԵԱՆ 45
7.—Իրան (բան.) ԻՐՀԱ ԳԱՌՈՆԷ 54
8.—Երգ երգ Իրանին (բան.) ԱՐԱՄ ԳԱՌՈՆԷ 55
9.—Աքեմենեան ժամանակագրական ցանկ Ա. ԱՄՈՒՐԵԱՆ 58
10.—Շահ Աբբաս Մեծի կարծիքը Նոր Ջուղայի
հայերի եւ նրանց տէրերի մասին Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ 62
11.—Նկարներ Իրանական եւ հայկական
Մշակութային կայքերից Լ. Ս. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ 65
12.—Ճանապարհորդութիւն դէպի Հայաստան
եւ Իրան-Փիւր ծովերը Թարգմ. Դր. ՀՐԱՉ ԲԺՇԿԵԱՆ 70
13.—Կիւրոսապատում Թարգմ. Ա. ՄՈՒՐԱԴԽԱՆԵԱՆ 77
14.—Քանդից դուր (բան.) ՀԱՅԳԱԼ 89
15.—Ցնծա՛ Կիւրոս (բան.) Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ 90
16.—Արեւոտ Իրանին (բան.) Ն. Տ. ՄԵԼՔՈՆԵԱՆ 92
17.—Զօներգ Իրանին (բան.) » » » 92
18.—Մեծեր Իրանի նշանաւոր Բանաստեղծներից Թարգմ. ԾԱԽԱԿՊ 93
19.—Մի քանի խօսք Հաֆէզի մասին ԱՇՈՏ ՄԻՆԱՍԵԱՆ 94
20.—Գազելներ Հաֆէզից Թարգմ. ԱՇՈՏ ՄԻՆԱՍԵԱՆ 95
21.—Իրանական կեանք Ամփոփից ԱՐՄԻՆԷ ՄԱՐՈՒԹԽԱՆԵԱՆ 99
22.—Իրանի Հայ Եկեղեցիներն ու Վանքերը
ԷՄԻԼ ՅԱԿՈԲԵԱՆ 117

ՏՊԱՐԱՆ «ՀՈՒՐԵԱՆ» ԹԵՀՐԱՆ

Քսան հինգ դար առաջ մեր ժողովուրդը վերջնականապէս ընտրեց իր պետականութեան ձեւը եւ դարերի ընթացքին ոչինչ չը խնայեց պաշտպանելու համար իր բնական ռեժիմը։ Հետեւաբար բնական է որ Իրանում ապրող ամեն ոք, ինչ խմբակի կամ դասակարգի պատկանելիս լինի նա, մասնակից լինի Իրանի Կայսրութեան 2500-ամեակի ազգային Մեծ Տօնակատարութեան։

Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայի մամուլի ասուլիսից.

1959 Նոյեմբեր 27

Իրանի Կայսրութիւնը ժառանգորդն է թագաւորական մէկ ռեժիմի որ 25 դար է ինչ գոյութիւն ունի այս երկրում եւ համարւում է աշխարհի հնագոյն թագաւորական ռեժիմը։ Այս համեմատաբար երկար ժամանակաշրջանում Իրանի թագաւորական ռեժիմը եղել է այս երկրի ազգային կեանքի հիմնաքարը։

Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայի ասուլիսը

Ա. Մ. Ն.-ի ռադիօ-թելեվիզիոնի ներկայացուցչի հետ։

1959 Նոյեմբեր 29

ՀՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Ա. ՏԱՐԻ 1971 ՍԵՊՏ. ԵՒ ՀՈԿՏ. ԹԻՒ 3–4

Ն. Կ. Մ. ՇԱՀՆՇԱՀ ԱՐԻԱՄԵՀՐ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Տարիներ շարունակ իրագործման անհրաժեշտութիւնը զգացուող մի նպատակի համար է գրել այս գիրքը։ Որքան տեղեակ եմ, Իրանի կայսրութեան հիմնադրման քսանհինգ դարի պատմութեան մէջ ես առաջին Շահնշահն եմ, որ կանո-

նաւորդաշէն ու պատմական հետաքրքրականութեամբ գրի եմ առել իմ կեանքի պատմութիւնը։

Ինչպէս ԺԶ. դարում, այսինքն Իրանի կայսրութեան հիմնադրումից երկու հազար տարի յետոյ, Շահ Թահմազ Ա. արքան իր կեանքի մասին գրել է մի համառօտ կենսագրական և երկու հարիւր տարի յետոյ Շահ Թահմազ Բ.-ի թագաւորութեան օրոք մի ֆրանսիացի քահանայ հրատարակեց յիշեալ արքայի կենսագրութիւնը, նպատակ ունենալով ապացուցել, որ նա ֆրանսիացու զաւակ է եղել։

ԺԹ. դարում եւ Նասրէդդին շահը, Եւրոպա կատարած ուղեւորութեանց, ինչպէս նաեւ արեւմտեան երկրների՝ իր տեսանկիւնից ու մտահորիզոնից ունեցած յառաջադիմութեանց շարժառիթների մասին գրեց ճանապարհորդական ուշագրաւ նոթեր. այնուամենայնիւ իմ երկրի թագակիր պարագլուխներից եւ ոչ մէկը չի տուել կանոնաւոր ու հետաքրքրական ինքնակենսագրութիւն։ Դա էր, որ մօտ տասնեչորս տարուայ թագաւորութիւնից յետոյ որոշեցի, որ այս անհրաժեշտ առաջին անգամ արքի իմ ձեռքով։ Նպատակը սոսկ այն չէր, որ այս երկրի Շահնշահների մէջ առաջատարը լինեմ ինքնակենսագրութիւն հրատարակելու գործում, այլ զգալի էր, որ մի այսպիսի գրքի հրատարակումը մեծապէս անհրաժեշտ է ճանաչելու համար Իրանի անցեալը և ցոյց տալու ապագայի ուղղութիւնները։

Անցնող դարում, մենք՝ Միջին Արեւելքում ապրողներս, զլացել ենք ճանաչելու և զգալու մեր իրական արժանիքները և մեծ մասամբ կապացել ենք մեր երկրների ապագայ վերելքին նպաստող նոր ծրագիրների մշակման խնդրում։ Երբեմն ունեցել ենք անորոշ տեղեկութիւններ երկրի անց ու դարձի մասին, բայց թերացել ենք խորանալու յառաջադիմութիւնը կասեցնող կազմակերպչական և այլ ազդեցքների մէջ։ Ինչպէս նաև թուլութեամբ ենք վերաբերուել մեր ապագայի համար այնքան կարևոր՝ նոր նպատակների և ուղղութիւնների հետաբռշմանը։ Չեւալ պատճառներից ելնելով, պահն էր, որ Իրանի ամ… շահը ձեռնարկէր լրացնելու այս էական բացը։

Այս գիրքը սկսեցի գրել 1337 թվին և 1339 թվի 1) վերջերին ավարտեցի։

Այս ընթացքում, թեև այլևայլ դժվարին պարտականությունները զբաղեցնում էին իմ ժամերը, բայց չէր լինում մեկ շաբաթ, որ ի բաց առնել համբերության օրերից մի քանի ժամ չզբաղվեի գրելով։ Նույնիսկ ուղևորություններիս ընթացքում չէի մոռանում գրելիք նյութերի դասավորելու միտքը։

Այսու՝ հրատարակվող գիրքը շատ բաներով է տարբերվում ինքնակենսագրական թեմայով գրված գրքերից կամ օրագրություններից։ Որովհետև դա չի սահմանափակվում լոկ իմ կյանքի պատմությամբ, այլ ինքնըստինքյան մի երկրի պատմություն է։

Գրքի առաջին գլուխը հատկացվել է Իրանի պատմական փառավոր անցյալի և դարմանահրաշ ժառանգությանց համառոտ նկարագրությանը։ Հաջորդ գլխում անդրադարձել եմ Միջին Արևելքի վերջին իրադարձությունների ամենակարևորուն գծերից, հորս՝ իմ տեսանկյունից ու ըմբռնումից ունեցած բնութագրին և նրա կատարած հոյակապ գործերին։ Այս նկարագրել եմ մանկությանս և Եվրոպայում անցկացրած ուսանողության տարիները և հորս ցուցաբերած հոգատար խնամքն ու ուշադրությունը իմ դաստիարակության խնդրում, որ պետք նպաստեր ներկայի ծանր պարտականությունների ստանձնման գործին։ Նկարագրել եմ Բ. Համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած տագնապալի դրությունը, Իրանի բռնագրավումը և այն՝ թե ինչպես քսանմեկ տարեկան հասակում հորս փոխարեն ստանձնեցի արքայական պարտականությունները։

Գրքում արտացոլված են այն տարիների դեպքերը։ Թե ինչպես Մոսադեղ անունով մեկը իր ուրույն ձևով պտտեցնում էր երկրի ղեկը, նավթի արդյունաբերության անորոշ կացությունը, տնտեսության քայքայումը և այն՝ որ մարելու վրա էր Իրանի անկախության ջահը։ Պատմում է այն մասին, թե

1) 1959–1961 (Ծ. Թ.)

ինչպէս վերականգնեցինք ազատութիւնը եւ դրանից յետոյ մեր երկիրը դարձաւ սառը պատերազմի օջախ։ Այն երեւոյթն է յու- զարմանում, թէ ինչպէս այս պաշար փորձութիւններից յետոյ իմ մէջ ծնուեց գրական նախաձեռնութիւնը։

Գրքում խօսւում է արեւմտեան մշակոյթի (կուլտուրա) հետ ունեցած շփումների եւ այն յոյսի ու հաւատքի մասին, թէ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ կարելի է հնարել յարաբերութեանց նոր եղանակներ։ Երկրի տնտեսական աճի ու զարգացման չափանիշների, դեմոկրատիայի եռակի փուլերի մասին իմ մտածումների եւ իրական դեմոկրատիա ստեղծելու գծով տարբեր միջոցառումների մասին ես նշել եմ բաւ կարեւորներ։ Հպանցիկ կերպով խօսւում է նաեւ կալուածային բարենորոգչական աշխատանքների, Իրանի յիսուն հազար գիւղերում բնակւող երկրագործներին օժանդակելու նպատակով կիրառւող քայլերի. կանանց՝ նոր Իրանի նկատմամբ ստանձնելիք պարտականութիւնների մասին։ Զարգարանւում են իմ տեսակէտները Իրանի կրթադաստիարակչութեան մասին։ Քննարկւում է նաւթի խնդիրը քաղաքական, տնտեսական եւ տեխնիկական առումներով։ Միջին Արեւելքում գրաւող Իրանի դիրքի ինչպէս նաեւ աշխարհի այս եւ բոլոր կէտերում խաղաղութեան ամրապնդման անհրաժեշտութեան մասին, որ իմ սրտագին ցանկութիւնն է, արւում է լուսաբանութիւն։ Եւ վերջապէս գրքում արտացոլւած է իմ կենցաղը, քսանչորսամեայ գործունէութիւնը եւ մեր պատմական երկրի հանդէպ արքայական կոչմանը սերտօրէն առնչւող պարտականութիւնների ինչպիսին լինելը։

Գրքի համարեա բոլոր գլուխների մէջ, ջանք եմ թափել առանց ակնարկներով կամ յապաւումներով չանդրադառնալ որոշ դժուարութիւնների ու արգելքների վրայ։ Օրինակ, թէ պետական կազմակերպութիւններից ներս, թէ անձնական կամ աշխատանքային բջիջներում եւ թէ հասարակական կեանքում անհամապատասխանութեան բարեփոխումը, այնպէս էլ ծնում է մեր դժուարութիւններից մէկը։ Թէեւ վերջին տարիներին կառավարչական կազմակերպութիւնները բարելաւել են անցեալի համեմատութեամբ, այնուամենայնիւ նորից շատ վարչականներում

հին են ու յետադիմական։ Դեռևս մեր երկրում արմատախիլ չի եղել աղքատութիւնը, ագիտութիւնը, հիւանդութիւնները։ Սակայն չպիտի մոռանալ, որ մեր նպատակն է կարճ ժամանակամիջոցում հասնել զարգացման մի այնպիսի մակարդակի, որը յառաջադէմ երկրներում ձեռք է բերել մի քանի սերունդների, նոյնիսկ մի քանի դարերի երկարատև ու յամառ ջանքերից յետոյ։

Այսօր, իր հակասական դերով, Միջին Արևելքը աշխարհի բոլոր ժողովուրդների ուշադրութեան առարկան է, որովհետև եթէ հնագոյն ժամանակներում հսկայ ազդեցութիւն է ունեցել մարդկային քաղաքակրթութեան վրայ, ներկայումս համարւում է իրադարձութիւնների և քաղաքական վայրիվերումների օրրան։

Կարծում եմ, որ Միջին Արևելքի վերակենդանացման համար դրութիւնը նպաստաւոր է և պատճառ չկայ, որ Իրանը, ինչպէս եղել է վաղագոյն ժամանակներից, այնպէս էլ հիմա՝ անզօր լինի առաջ բերելու նոր յեղաշրջումներ։

ԻՐԱՆԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ

Իմ թաղամասանց եղած ժամանակ ուսանողութեան օրերից, որ անց էի կացնում Շւեյցարիայում, մտքիս մէջ դրոշմւել է մի յուշ։ Մի օր մեր դպրոցը ասյլակով կաթ բերող կաթնավաճառը հետաքրքրւեց, թէ ո՞ր երկրից եմ եկել Շւեյցարիա։ Պատասխանեցի՝ Փըրշիայից (Իրան)։

«Այո,— ասաց նա,— լաւ եմ ճանաչում Փըրշիան, դա Ամերիկայի քաղաքներից մէկն է»…

Տարիներ անցան այս դէպքից։ Վերջերս պալատի երիտասարդ ծառայողներից մէկը ճամբորդեց Ամերիկա և վերադարձին պատմեց իր հետ պատահած մի զարմանալի դիպւածի մասին։

«Նախ քան Ամերիկա ճամբորդելս, ասում էր նա —

ցանկութիւն. ունէի մօտիկից տեսնելու ամերիկեան մի կար-մրամորթի: Տեղ հասնելուն պէս՝ այդ մասին ասացի հիւրըն-կալիս: Նա հաւաստիացրեց, որ դա շատ դիւրին է, քանի որ իմ ծրագրի մէջ է մտնում կարմրամորթների բնակավայրերից մէկի այցելութիւնը: Բայց երբ հասանք ուեսալ կէմը, ես թե-ւաթափ եղայ, — այնտեղ ապրող կարմրամորթները չէին կրում Հոլիվուդեան ֆիլմերում ցուցադրուող փետուրաւոր գլխարկնե-րից: Ինչևիցէ, հիւրընկալողս յաջողեց ինձ ներկայացնել նախ-շած երեսով, փետրաւոր գլխարկով և տեղական տարազով հագ-նուած մի կարմրամորթի: Վերջինս կոտրուած անգլերէնով անմիջապէս հարցրեց որտեղացի լինելս: Ասացի գալիս եմ մի հեռաւոր երկրից, որ կոչւում է Փըրժիա կամ Իրան:

Իրանի անունը լսելուն պէս ուրախութեան երանգներ յայտնուեցին կարմրամորթի դէմքին և նոյնիսկ կոտրուած պարսկերէնով ասաց.

«—Սալամ ալէյքում, ի՞նչպէս է ձեր առողջութիւնը»:

Այս հանդիպումը ինձ շշմեցրեց: Յետոյ պարզուեց, որ նա համաշխարհային երկրորդ պատերազմին ամերիկեան զոր-քերի հետ հասել է Պարսից ծոց և Իրանի վրայով աւելի քան եօթ միլիոն տոն պարէն ու ռազմամթերք է տեղափոխել Ռու-սիա, որով նպաստել է Հիտլերեան զորքերի ջախջախմանը, դիւրացնելով դաշնակիցների գործը: Այս ժամանակամիջոցում նա ոչ միայն սովորել է պարսից լեզուն, այլև դա սովորեց-րել է իր համերկրացիներին: Նաև շօշափելի տեղեկութիւններ է ձեռք բերել պատմական Իրանի քաղաքակրթութեան ու մշա-կոյթի մասին:

Իրանի արևմտեան ժողովուրդները այս կարմրամորթի չափ ճանաչէին իմ երկիրը: Տեղեակ չինէին, որ Իրանը ինչ ծառայութիւններ է մատուցել մարդկային քաղաքակրթութեա-նը և ապագայում ևս, — որի նկատմամբ լցուած եմ մեծ հա-ւատքով, դեռ պիտի ծառայի համամարդկային կուլտուրային ու զարգացմանը: Երբեմն այն մտքից թէ ինչու Իրանը Միջին Արևելքի երկրների մէջ ճանաչուած չէ, որանից աւելի՝ զարմանում եմ, որովհետև Միջին Արևելքի քաղաքակրթութեան ամենա-մեծ բաժինը ընկնում է Իրանին: Անհերքելի է նաև փիլիսո-

փայլութեան, արուեստի ու գիտութեան բնագաւառներում Իրանի ունեցած հսկայ ազդեցութիւնը Արեւմուտքի վրայ։ Այնպէս ինչպէս ներկայումս Ամերիկեան կառավարութիւնը Չորրորդ Կէտի գծով տեխնիկական օգնութիւններ է ցուցաբերում աշխարհի շատ երկրներին, մենք եւ ամենավաղագոյն ժամանակներից ի վեր արուեստ ու մշակոյթ ենք մատակարարել մարդկութեանը։

Այսուհանդերձ պիտի նշել, որ վերջին տարիներին, երբ Միջին Արեւելքի երկրները կարեւոր տեղ են գրաւել համաշխարհային քաղաքականութեան բեմի վրայ, աշխարհի տարբեր ծայրերում ապրող ժողովուրդների մօտ առաջացել է Իրանի եւ իրանական պատմութեան հանդէպ օր աւուր աճող հետաքրքրութիւնը։

Աշխարհի կամ Միջին Արեւելքի աշխարհագրական քարտէզների վրայ ցայտուն կերպով նշմարւում է Իրանը կամ Փերսիան։ Իրանը մեծ է Ալասկայից, ունի Թեքզաս նահանգի երկու տարածութիւնը եւ աւելին է քան Ֆրանսիայի, Շուեյցարիայի, Իտալիայի, Սպանիայի, Փորթուգալիայի, Բելգիայի եւ Լիւքսեմբուրգի տերիտորիաները միասին վերցրած։ Աշխարհագրական դիրքի շնորհիւ՝ հնագոյն դարերից եղել ենք աշխարհի կարեւոր ճամբաների հատման կէտը կամ քառուղին։ Եւ դա որքան էական էր այն ժամանակներում, երբ մարդիկ ճանապարհորդում էին կարաւաններով, այսօր՝ ջեթ օդանաւերի ու հերմետիկ հրթիռների դարում եւ համընկնում է ճըշմարտութեանը։

Քիչ է Իրանի ազգաբնակութիւնը իւրաքանչիւր քառակուսի կմ. տարածութեան համեմատ Այսուամենայնիւ իր քսան միլիոն բնակչութեամբ հաւասար է մայր ցամաք յիշեցնող Աւստրալիայի բնակչութեան հետ։

Իմ աթոռանիստ Թեհրանը մէկն է աշխարհի այն քաղաքներից, որ աճել ու զարգացել է արագօրէն, այնպէս որ Համաշխարհային Բ. պատերազմի օրերից (հաշւում էր հինգ հարիւր հազար), մինչեւ այսօր աճել է երեք անգամով հասնելով մէկ ու կէս միլիոնի1)։

1) Ծ. Խ. Այժմ մայրաքաղաք Թեհրանն ունի 3.300.000 բնակիչ։

Ճիշտ է, Թեհրանի բնակչութեան արագ աճի գլխաւոր շարժառիթը կայանում է նրանում, որ շրջանների բնակչութիւնը թողնելով իր ծննդավայրը՝ հաստատւել է այստեղ։ մի երեւոյթ, որ բացառութիւն չի կազմում նաև այլ երկրներում, բայց առհասարակ աճել է բնակչութեան թիւը։

Երկրի տարածութեան մեծ մասը չորային է և զուրկ բուսականութիւնից։ Դրա փոխարէն ուրիշ վայրերում տարեկան անձրևը հասնում է այնպիսի չափերի, որ աճում են խիտ անտառներ, կամ նպաստաւոր պայմաններ ստեղծւում բրինձի տնկարանների (պլանտացիա) համար։

Համեմատաբար չորային տարածութիւնների ջուրը մատակարարւում է լեռնային շրջաններից, որոնք օղակաձև շրջապատել են Իրանի բարձրաւանդակը, յաճախ խաչաձևելով իրար հետ։ Զհաշւած անապատային տարածութիւնները, լեռներից մեծ հեռաւորութեան վրայ գտնւող կէտեր համարեա չկան։ Դրանով իսկ, լեռներից հոսող վտակները փորած ջրանցքներով առաջնորդւում են գիւղ-քաղաքներն ու աւանները։ Վերջերս ձեռնարկել ենք նաև խոր հորերի կառուցման աշխատանքներ։ Համաձայն մասնագէտների ասութեան, Իրանում եղած ջուրը կը բաւականացնի ներկայ ազգաբնակչութիւնից երեք անգամ աւելի մի ժողովրդի պահանջներին։

Իրանի կլիման փոփոխական է տարբեր կէտերում և տարբեր եղանակներին։ Իմ կարծիքով դա ինքնըստինքեան մի ազդեցիկ ուժ է, իմ ժողովուրդը օժտւած է մարմնական մեծ ուժով և զուր չէ, որ ծանր սպորտի զանազան ճիւղերում՝ ինչպիսիք են ըմբշամարտ կամ ծանր ատլետ, մեր մարզիկները միշտ էլ փայլել են միջազգային չափանիշով։

Մտքի և արագ կողմնորոշման ատուժով, որի մասին կ՛անդրադառնանք հետագային։ Իրանի ժողովուրդը հաջակւած է ըստ կարելւոյն։ Ուստի պիտի յուսալ, որ ստիպողական կրթութեան ընդլայնումը կը նպաստի երկրի գիտութեան, արւեստի, գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան և առեւտրի էլ աւելի զարգացման։

Իրանի ընդերքը հարուստ է հանքերով։ Առհասարակ մենք համարւում ենք աշխարհի նաւթի ամենամեծ արդիւնաբերող-

ներից մէկը։ Նաւթի արդիւնաբերութիւնը Միջին Արեւելքում սկսել է Իրանից։ Գիտական նորագոյն տեսութիւնների համաձայն՝ Իրանը մի մեծ նաւի պէս լողում է նաւթի ծովի վրայ։ Ուրիշների համար անյայտ մնացած իրողութիւններից մէկն է եւ այն, որ երկրի ընդերքը հարուստ է նաեւ քարածուխով, երկաթով, պղնձով, մանգանեզով, քրոմով եւ այլ քիմիական տարրով՝ օրինակ՝ բորատ, սուլֆատ եւ այլն։ Դրանց շահագործմանը առընչւող աշխատանքները դեռ գտնւում են նախնական փուլերում։

Բացառեալ Քաւիր նամաք անապատից, որ Աւստրալիայի պէս զբաղեցնում է երկրի կենտրոնական մասը, Իրանի հողը ամենուրեք արգաւանդ է։ Ուր հասնում է ջուրը, մշակւում է ցորեն, գարի, եգիպտացորեն, բամբակ, գետնախնձոր, մաշ, կորնգան, հակնդեղ, շաքարեղէգ, ծխախոտ (թութուն), թէյ եւ զանազան տեսակի բանջարեղէններից օրինակ՝ կաղամբ, սոխ, լոբիկ, վարունգ եւ այլն։

Ովքեր այցելել են Իրան, հաճոյքով են վայելել մեր երկրի հիւթեղ ու ընտիր պտուղները՝ գեղձաշլորն ու խաղողը, թուզն ու ծիրանը, տանձն ու նուռը, լիմոնը եւ նարինջը, ձիթապտուղն ու արմաւը։ Նշանաւոր է Իրանի սեխն ու պիստակը (ֆստա), նուշն ու պնդուկը (ֆնդղը)։ Անասնաբուծութիւնը զարգացել է մեծ չափերով։ Մեր երկրի գիւղացիութիւնը եւ լեռնաբնակները տեղական տարազներով լեռներում ու դաշտավայրերում զբաղւած են խաշնարածութեամբ ու անասնաբուծական այլ ճիւղերով։ Վերջին տարիներում մեքենայացել է գիւղատնտեսութիւնը։ Յաջորդ գլուխներում կանդրադառնամ երկրի կալւածները գիւղացիութեան ու երկրագործութեան մէջ բաժանելու ծրագրին, որ արդէն իսկ սկսել է գործադրւել։

Համեմատաբար քիչ է սննդամթերքի ներմուծումը մեզ մօտ, իսկ արտածումը հասնում է բաւարար չափերի։
Շատ է մրգի, նուշի եւ պիստակի արտահանումը երկրից։ Աշխարհի շուկաներում ռուսական ձկնկիթ անւան տակ վաճառւող ձկնկիթի (խաւիար) մեծ մասը իրանական է, որ արտահանւում է Ռուսիա եւ Ամերիկա։ (Ոմն ասել է, որ խաւիար ձուկը

փոխելով կարծիքը՝ Կասպից ծովի հիւսիսային մասերից գաղթել է հարաւ։ Բայց իրականութիւնը այն է, որ դեռ Ռուսաստանի յեղափոխութիւնից շատ առաջ, այս ձուկը նախընտրել է Կասպից ծովի հարաւային տաք ջրերը աճի ու բազմացման համար)։ Մեր ձկնարդիւնաբերութիւնը օժտւած է հարուստ աւանդոյթներով, որոնք ցայժմ մնացել են անձեռնմխելի։

Վերը նշածներից գալիս ենք այն եզրակացութեան, որ թէև մեր ներկայ արտադրողականութիւնը համեստ չափերով օգտակար ու արժէքաւոր է ոչ միայն մեր երկրի՝ այլև ուրիշ երկրների ժողովուրդների համար, այսուամենայնիւ դեռ նոր ենք սկսել մեր բնական ու մարդկային հարստութիւնների շահագործումը։ Անգլիայում հրատարակւած մի պաշտօնական զեկուցման մէջ ասւում է.— «Իրանը թերևս Միջին Արևելքի միակ պետութիւնն է, որ օժտւած է զարգացման ու յառաջդիմութեան ամենամեծ ունակներով»։

Վաղագոյն ժամանակներից Իրանը եղել է Եւրոպայի և Միջին Արևելքի հատման կէտը։ (Շատերը մինչև անգամ մոռանում են, որ Իրանը պատկանում է ասիական ցամաքամասին)։ Հետևաբար հռչակւած Մետաքսի ճանապարհով Չինաստանի ու Եւրոպայի միջև երթևեկող կարաւանները հասնելով Իրան, հիմնում էին կենտրոններ։ Հեռաւոր Արևելքից գնւած մետաքսը, թանկագին քարերն ու այլ ապրանքներ լաւ գներով վաճառւում էին հարուստ Իրանում և այստեղից առաքւում էին այլ երկրներ, մասնաւորապէս Եւրոպա։

Նոր ցամաքամասի յայտնաբերումից առաջ, երբ եւրոպական ժողովուրդները կերակուրը լցնում էին գետնի վրայ և ուտում էին ձեռներով, իրանցիները օգտագործում էին կաւի յղկւած զարդարւած ամաններ, գդալ ու դանակ։

Չնայած չինականը՝ աշխարհի ամենահին շարունակական ու անընդմէջ քաղաքակրթութիւնը պատկանում է մեր ժողովրդին։ Եթէ նոյնիսկ ասել, որ մեր մշակոյթն ու զարգացումը շատ բնագաւառներում գերազանցել է չինականին, չպիտի համարել չափազանցութիւն։

Անհերքելի է այն փաստը, որ Իրանի քաղաքակրթութիւնը աւելի մօտիկ ու հարազատ է արևմտեանին, քան՝ չի-

նախանը կամ մեր հարեւան արաբներինը։ Իրանը Արիա ցեղի հին հայրենիքներից մեկն է։ Ամերիկեան ու եւրոպական շատ ժողովուրդներ են սերում են այս ցեղից։ Ցեղային առումով մենք միանգամայն տարբերւում ենք Սամի ցեղից սերող արաբներից։ Նոյնն է նաև պարսկերէնի խնդրում, որովհետև մեր լեզուն պատկանում է Հնդեւրոպական լեզուների ընտանիքին։ Դրա մէջ են մտնում նաև անգլերէնը, ֆրանսերէնը, գերմաներէնը և արեւմտեան շատ ուրիշ լեզուներ։

Անշուշտ, դարերի ընթացքում մեր ժողովուրդը որոշ չափով մերւել է այլ ցեղերի հետ։ Արաբների գերիշխանութեան օրոք մեծ թւով արաբական բառեր են թափանցել մեր լեզւի մէջ, բայց այնուամենայնիւ պահպանել ենք մեր ցեղական ազնուութիւնն ու լեզուական յատկանիշները։

Յիշում եմ, երբ լսեցի, թէ կակաչն ու հողմաղացը Հոլանդիա են տարել Իրանից։ Կարի զարմացայ։ Այդ մասին ինձ ասաց Հոլանդիայի մշակութային կապի կցորդը՝ մի գիտնական անձնաւորութիւն։ Կարծում եմ եթէ որեւէ հոլանդացի երբեւիցէ բացայայտի այս խնդիրը, դրա մէջ ամենափոքրիկ կասկածն անգամ չպիտի ունենայ։ Յիշեալ գիտնականը մի շարք ուսումնասիրութիւններից յետոյ յանգել էր այն եզրակացութեան, որ հոլանդական կակաչը պատկանում է Իրանում աճող մի տեսակ վայրի կակաչի ցեղին։ Հողմաղացները ևս Հոլանդիայում պատրաստել են Իրանի հարաւային շրջաններում շատ վաղուց օգտագործւող հողմաղացների ձեւի ու արտաքին տեսքի վրայից։

Նարդի խաղը հնարել են իրանցիները։ Առաջին անգամ Իրանումն է խաղացել մականախաղը և մեր արքաները յատուկ սէր են ցուցաբերել դրա նկատմամբ։ Յասան (պիստակ) իրանական է, նոյնն է և կորնգանը, որ առաջին անգամ մշակել է Իրանում, որպէս ձիերի կեր։ Դեղձը դարեր առաջ բերել է Չինաստանի վայրի անտառներից ու ընտելացրել և յետոյ դեղձենու տունկը տարել է Միջերկրականի ափերն ու Եւրոպա։ Կարմիր վարդը, որ դարեր շարունակ զարդարել է Իրանի այգիները, առաջին անգամ տնկւել է Իրանում։ Իրանից են տարւել նարգիզը, շուշանը և կապոյտ յասմիկը՝ պահպանելով ի-

բենց իրանական անունները զանազան երկրներում։ Օշարակը որ Իրանում գործածւում է հեղուկ վիճակում, իսկ Ամերիկայում կամ այլուր սառցել է պաղպաղակի ձև՝ վայելել են մեր նախապապերը։ Շերբ հանրածանոթ օշարակի անունը գալիս է Շերբաց բառից։ Դա նոյն ըմպելին է, որ միջին դարերին արաբները տարածեցին Սպանիայում և սովորեցրին պատրաստելու եղանակը։

Արուեստի ու գիտութեան բնագաւառներում իրանցիները փայլել են ստեղծագործական ասպարեզում։ Արևի ժամացոյցի գիւտը պատկանում է իրանցիներին։ Առաջին աստղադիտարանը ևս շահագործել է Իրանում։ Թէև առաջին հայեացքից անհաւանական է թւում, որ Իրանի հռչակաւոր գիտնական և բժիշկ Իբն Սինան ծանօթ է եղել պենիսիլինի յատկութիւններին և դա օգտագործել է հիւանդների ապաքինման համար։ Այսուամենայնիւ կան ապացոյցներ, որոնք վկայում են այս իրողութեան մասին։ Իբն Սինայի համաշխարհային հռչակ վայելող, միջին դարերում Եւրոպայում բժշկական լաւագոյնը համարւող գրքի մէջ նշւած է այն մասին, որ հացի բորբոսը կարելի է օգտագործել վէրքերի բուժման համար։ Նա խորհուրդ է տալիս բժիշկներին՝ թաց հացի վրայ պատրաստել բորբոս և այդ գոյացութեամբ հաւաքել ու դնել վէրքի վրայ։ Մի քանի դար նրանից յետոյ անգլիացի գիտնական Սըր Ալեքսանդր Ֆլեմինգը յիշեալ բորբոսը անւանելով Պենիսիլիում, ուսումնասիրեց ու փորձարկեց դրա բնական յատկութիւնները և ապա պատրաստեց պենիսիլինը, որ այսօր հսկայ քանակութեամբ մատակարարւում է աշխարհի շուկաներում, [illegible] մահից փրկելով հազարաւորների կեանքը։

Արեւմտեան ժողովուրդների մեծ մասը չգիտէ, որ Իրանը հռչակաւոր է որպէս կառավարչական սխեմաների գործադրման ու տարածման՝ առաջատար։ Երկրի բաժանումը նահանգների և դրանց կառավարումը նահանգապետների (քաղաքապրյուխ) միջոցով վաղագոյն ժամանակներից կիրառել է Իրանում, քանի որ առանց դրա՝ հնարաւոր չէր մի լայնածաւալ երկրի կառավարումը։

Ճանապարհային ցանցերի կառուցման խնդրում ևս Ի-

բանը առաջնային է։ Հռոմէական կայսրութեան հիմնադրումից դեռ շատ առաջ երկրի տարբեր կէտերի միջև գոյութիւն ունեցող կապը կատարւում էր սուրհանդակների միջոցով (չափար)։ Որոշ տարածութիւնների վրայ հիմնւած էին կայաններ (չափարխանաներ), ուր հանգստանում էին արքայական սուրհանդակները փոխելու յոգնած ձիերը՝ նորերով։ Այսպիսով հնարաւոր էր դառնում տասնհինգ օրւայ ընթացքում յաղթահարած Իրանի մէկ ծայրից միւսը տանել նամակները։

Թարգմ. պարսկերէնից՝
ԳԱԼԻԱ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Շարունակելի 1)

۱۲۳۷۵۹

۱۳۵۰/۲/۲۶

دفتر مخصوص شاهنشاهی

آقای دکتر گاگیک هواگمیان نماینده مجلس شورایملی و صاحب امتیاز
مجله هــــور

عریضه ای که به پیشگاه مبارک اعلیحضرت همایـــون
شاهنشاه آریامهر تقدیم داشته و برای ترجمه و چاپ کتاب ((ماموریت
برای وطنم)) بزبان ارمنی استدعای کسب اجازه نموده بـــد
از شرف عرض گذشت و مورد تصویب ذات مبارک ملوکانه قرار گرفت. ۰ک

رئیس دفتر مخصوص شاهنشاهی

(ԱՐՔԱՅԱԿԱՆ ԹԱԳ)

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՅԱՏՈՒԿ
ԳՐԱՍԵՆԵԱԿ

123759
26/2·/1350

Պրն. Դոկտ. ԳԱԳԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ,
Խորհրդարանի պատգամաւոր եւ
Արտօնատէր «ՀՈՒՅՍ» ամսագրի.

Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայից-Արքային ներկայացրած Ձեր խնդրագիրը որով խնդրամատոյց էիք եղել արտօնութիւն ստանալու հայերէնի թարգմանելու եւ տպագրելու «Առաքելութիւն հայրենիքիս համար» գիրքը, արժանացաւ Ն. Կ. Մ. Արքայի ուշադրութեան եւ վաւերացումին։

Արքայական Յատուկ
գրասենեակի պետ
(ստորագրութիւն)

«ՀՈՒՅՍ» ամսագրի ներկայ համարի առաջին բաժնից սկսում է լոյս տեսնել Իրանի լուսաւոր արքայի Ն. Կ. Մ. Արիամեհր Շահնշահ Մոհամմադ Ռեզա-Շահ Փահլաւու գրչին պատկանող «Առաքելութիւն հայրենիքիս համար» գիրքը։

Թարգմանութիւնը կատարել է ամսագրիս երիտասարդ եւ շնորհալի աշխատակիցներից պրն. Կոլիա Տէր Յովհաննիսեանը։

ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ Հայոց Թեհրանի Թեմին

ՓԱՌԱՀԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 2500 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Իրանի Կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի առիթով, բացառիկ շքեղութեամբ տօնախմբութիւններ եւ արարողութիւններ կատարուեցին Իրանում եւ այս բարեբաստիկ տօնակատարութիւնների ընթացքում, գեղեցկօրէն զարդարուեց Իրանի մայրաքաղաք Թեհրանը, զարդարանքի եւ լոյսերի մէջ ողողուեցին նաեւ Իրանի բոլոր քաղաքները ու գիւղերը: Ցնծութեան եւ ուրախութեան մէջ էր Իրանի ողջ ժողովուրդը, որովհետեւ այս տօնակատարութեան մէջ տեսնում էր Իրանի փառաւոր անցեալը եւ Իրանի Կայսրութեան 2500 ամեայ փառքը:

Իրանի կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի տօնակատարութիւնը սքանչելի եւ աննախընթաց ոգեւորում հանդիպեցաւ եւ ստացաւ համաշխարհային նշանակութիւն:

Ն. Կ. Մեծութիւն Արիամեհր Մոհամմէդ Ռզա Շահ Փեհլեվիի հրաւէրով տօնախմբութեան մասնակցեցին բազմաթիւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, թագաւորներ նախագահներ եւ պետական պատասխանատու անձնաւորութիւններ:

Նոյն բարեբաստիկ առիթով Իրան ժամանեցին նաեւ բազմաթիւ երկրներից Իրանագէտներ, արուեստագէտներ, թղթակիցներ, եւ այսպէս Իրանի Կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի տօնակատարութիւնների ընթացքում, Իրանի պատմական անցեալը, մշակութային նուաճումները, եւ մանաւանդ ներկայի վերածաղկող Իրանը, տիեզերքի ողջ մարդկութեան հետաքրքրութիւնն ու ուշադրութիւնը հրաւիրեց իր վրայ:

Փառահեղ տօնակատարութիւնը սկսեց Պասարգադում՝ ուր Իրանի յուսամիտ և արդարադատ Արքան, Կիւրոս Մեծի դամբարանի դիմաց, պետական և հիւր բարձրաստիճան անձնաւորութիւնների ներկայութեան ոգեկոչեց յիշատակը Մեծն Կիւրոսի, յոյս և վստահութիւն ներշնչեց բոլորին, թէ վերածաղկող Իրանում շարունակւում է վառել Մեծն Կիւրոսի վառած կերոնը: Պասարգադի հսկայական տարածութիւնը լեցուեց Ն. Կ. Մեծութեան յուզիչ և տպաւորիչ խօսքերով ու մարդկանց մտքերում վերակենդանացաւ Իրանի 25 դարերի փառահեղ անցեալը: Ինչքա՛ն առինքնող և ազդեցիկ էին Ն. Կ. Մեծութեան խօսքերը երբ յայտարարում էր. «Այս խաղաղ աշխարհում, Իրանի պատգամաբերն և ազատականութեան, մարդասիրութեան եւ պաշտպանն է մարդկային վեհագոյն ձգտումների: Այն կերոնը, որ դու վառեցիր, երբէք չմարեց ամենից փոթորիկների ժամանակ եւ այսօր եւս աւելի պայծառ է քան երբեւիցէ: միշտ լոյս է սփռում այս երկրի վրայ եւ տարածւել է Իրանի սահմաններից շատ հեռու:

Կիւրոս՝ Մեծ Արքայ, Արքայից Արքա՛յ, ազատականներից ազատականը, հերոսը Իրանի եւ աշխարհի պատմութեան, ննջի՛ր հանգիստ, որովհետեւ մենք արթուն ենք եւ միշտ արթուն կը մնանք»:

Այնուհետեւ, Պերսեպոլսում, Ն. Կ. Մեծութեան, Կայսրուհու, թագաժառանգի և հրաւիրուած թագաւորների, նախագահների, պետական բարձրաստիճան անձնաւորութիւնների և բազմաթիւ այլ հրաւիրեալների ներկայութեան տեղի ունեցաւ փառաւոր շքերթ, որի ընթացքում 25 դարերում Իրանում իշխող արքայական դերդաստանների ժամանակաշրջանը խորհրդանշող մարտիկները տողանցեցին այդ շրջանի տարազներով: Շքեղ ու տպաւորիչ շքերթի ընթացքում կարծէք ողջ Իրանի պատմութիւնն էր անցնում մարդկանց աչքերի դիմաց:

2500-ամեակի տօնախմբութիւնները նոյն խանդավառութեամբ շարունակւեցին նաև Թեհրանում. Ն. Կ. Մեծութեան Կայսրուհու, յարգարժան հիւրերի և հրաւիրեալ անձերի ներկայութեան, տեղի ունեցաւ բացումը Թեհրանի «Շահեադ» կոթողի: Իսկ յաջորդ օրը՝ փառաշուք տօնակատարութեամբ կա-

տարուեց բացումը հարիւր հազար մարդու տարողութիւն ունեցող «Արիամեհր Ստադիոմի»։

Վերոյիշեալ պերճաշուք տօնակատարութիւնների վրայ երբ աւելացնենք նաև 2500 ամեակի առիթով կառուցուած այլ հաստատութիւնները, 2500 դպրոցը, ինչպէս նաև հիւանդանոցներ, բարեսիրական, մարզական հաստատութիւններ, ժողովրդային հանդէսներ, խրախճանքներ, այն ժամանակ՝ 2500 ամեակի տօնակատարութիւնների պատկերը աւելի ամբողջական կը դառնայ, ու այս բոլորը՝ ըստ ինքեան պերճախօս վկայութիւնը կարող են կազմել աննախընթաց ու փառաշուք տօնակատարութիւնների։

* * *

Իրանի Կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի այս տօնական և շքեղ օրերին, քաղցր պարտականութիւն է մեզ համար մեր սրտագին շնորհաւորութիւնները ներկայացնել՝ Իրանի արդարադատ և լուսամիտ Արքային՝ Ն. Վ. Մեծութիւն Արիամեհր Մոհամմադ Ռեզա Շահ Փահլաւիին, աղօթելով մաղթելով որ՝ օր աւուր յառաջդիմող, վերածաղկող Իրանը, ու մանաւանդ Սպիտակ Յեղափոխութեան շնորհիւ ամէն ասպարէզներում ծաղկող Իրանը, էլ աւելի բարգաւաճ վիճակ ունենայ ու բարձրանայ ժողովրդի կեանքի մակարդակը, տնտեսական, կրթական, մշակութային և այլ կալուածներում։

Մեր շնորհաւորութիւններն ու բարի մաղթանքներն ենք ներկայացնում նաև՝ Կայսրուհի Ֆարահին, որի ցուցաբերած եռանդը և գործօն մասնակցութիւնը յառաջադիմող Իրանում կատարուող բարենորոգումների ու կրթական հաստատութիւնների հանդէպ, ու նրա հովանաւորութիւնն ու բարեսիրական խօսքերը մեծ ոգևորութիւն են յառաջացնում և Իրանի ժողովրդին անմոռնօրէն երախտապարտ են թողնում Իր նկատմամբ։

Մեր շնորհաւորութիւնները ներկայացնում ենք նաև՝ Թագաժառանգ Ռզային, աղօթելով ու մաղթելով որ Աստուած հովանի ու պահապան լինի իրեն և երկնային օրհնութեամբ լեցուի նրա կեանքը։

Մեր շնորհաւորութիւնները ներկայացնում ենք նաև՝ Իրանի կառավարութեան և Իրանի համայն ժողովրդին, մաղթելով որ այսպէս խաղաղ ու անդորր վիճակում միշտ վերելք ու բարգաւաճում ունենայ Իրանը և Աստծու օրհնութեամբ արգիւնաւորուեն Ն. Վ. Մեծութեան բարենորոգչական ծրագիրները։ Իրանի մեծազօր Արքան միշտ մղիչ ուժն է հանդիսացել Իրանում կատարուող իրագործումների և նուաճումների։

Սրտագին ողջունում ենք՝ Մեծն Կիւրոսից մինչև մեր օրերը անխափան շարունակուող Իրանի կայսրութիւնը և մաղթում որ Աստուած անսասան պահէ Իրանի Կայսրութիւնը։

* * *

Իրանի Կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի տօնակատարութիւնների առիթով, այս տարին կոչւեց՝ Մեծն Կիւրոսի տարի։ Կիւրոս Մեծը (Ն. Ք. 558-530) ստեղծեց Իրանեան հսկայական Կայսրութիւնը, իր հանճարով փայլեց Իրանի քաղաքական հորիզոնի վրայ և հանդիսացաւ լուսամիտ ու արդարադատ քաղաքական ղեկավար։ Նա՛ նուաճեց Մեդիան և իրեն յայտարարեց Պարսից թագաւոր։ Յաղթեց Լիդիայի թագաւոր Կրեսոսին և գրաւեց փոքր Ասիան։ 538 Թ. Ն. Ք. նուաճեց նաև Բաբելոնը։

Քսան տարուայ ընթացքում Կիւրոս Մեծը հիմնեց ուժեղ և հսկայական պետութիւն, որի սահմանները երկարում էին, Հնդկաստանից մինչև Միջերկրական ծովը։ Նա այդ ժամանակաշրջանի աշխարհակալներից անջատւում էր շնորհիւ իր հաստատած վարչակարգի։ Ինքնուրոյն և իւրայատուկ իրաւակարգ ստեղծեց իր հսկայական կայսրութեան մէջ։ Նա՝ բոլորովին տարբեր ու նոր մօտեցում ու քաղաքականութիւն ունեցաւ նուաճւած երկրների նկատմամբ։ Նա՝ չէր կոտորում նուաճւած ժողովրդին, չէր աւերում նրանց քաղաքները, իր զինուորներին թոյլ չէր տալիս կողոպտել ու կամայականութիւններ կատարել։ Նուաճւած երկրի կեանքը ընթանում էր բնական ձևով, առևտրականներ ու արհեստաւորներ շարունակում էին հանգիստ զբաղւել իրենց գործով։ Նուաճւած երկրներին պարգևում

էր ներքին ինքնավարութիւն, վերադարձնում էր Բաբելոնի կողմից գրաւուած ու այնտեղ փոխադրուած աստուածների արձանները: Նրա կրօնական ու քաղաքական հանդուրժողութիւնը արտայայտուեց նաև երբ թոյլ տուեց որ արտաքսուած ցեղերը վերադառնան հայրենիք: Յարգալից վերաբերմունք ունեցաւ նաև նուաճուած Բաբելոնի «Մարդուկ» աստծու նկատմամբ և Եսայի Մարգարէի կողմից կոչուեց «Աստծու Օծեալը»:

Մեծն Կիւրոսը ունեցաւ երեք մայրաքաղաքներ՝ Շոշ, Եկբատան և Բաբելոն — Պասարգադը ուր այժմ գտնւում է նաև իր դամբարանը, հանդիսացաւ իր արքայական պալատը:

Քսենոֆոնը իր «Կիւրոպեդիա» վիպերգում ընդարձակօրէն անդրադառնում է Կիւրոս Մեծի գործերի մասին. իսկ պեղումներից յայտնաբերուած արձանագրութիւնները մեծ լոյս են սփռում Կիւրոս Մեծի արդարադատ ղեկավարութեան մասին:

«Կիւրոպեդիայում» Քսենոֆոնը ընդարձակ տեղեկութիւններ է տալիս նաև Արմէնիայի մասին: Կիւրոս Մեծի և Արմէնիայի յարաբերութեան մասին: Նա նկարագրում է թէ՝ երբ եկաւ Արմէնների դէմ, Խալդերը՝ երկրի բնիկները՝ դիմադրութեան են դուրս գալիս, ներքին կռիւներին վերջ տալու համար Հայաստան է գալիս Կիւրոսը, (այդ ժամանակ՝ որպէս Մարերի զօրապետ): Կիւրոսը՝ Արմէնիայի թագաւորի Տիգրան անունով որդու բարեկամն էր ու ընկերը: Յետագային Տիգրանը աջակցում է նաև Կիւրոսին, նրա կատարած նուաճումների ժամանակ: Երբ Մեծն Կիւրոսը արշաւում է Բաբելոնի վրայ, Աժդահակի դէմ պատերազմում է նաև Երուանդի որդի՝ Տիգրանը հայկական բանակի գլուխն անցած և այս կերպով մասնակից է լինում Բաբելոնի գրաւումին:

Շուտով Արմէնիան էլ անցնում է պարսկական տիրապետութեան տակ ու վերածւում սատրապութեան:

Այս ժամանակաշրջանում հայերը զբաղւում էին առեւտրով և Եփրատ գետի վրայով նաւարկելով մինչև հեռաւոր երկրներ ապրանք էին փոխադրում: Հերոդոտը մանրամասնօրէն նկարագրում է հայերի կատարած առեւտուրը և նրանց չի-

նած նաւերը։ Քսենոփոնը իր «Կիւրոպեդիայում» գրում է թէ՝ Կիւրոսը կամենալով դեսպանութիւն ուղարկել Հնդկաստանի թագաւորի մօտ, դիմում է Արմէններին և Խալդերին որպէսզի նրանք մարդ տրամադրեն՝ իր դեսպանութիւնը մինչև Հնդկաստան առաջնորդելու համար։ Սա նշանակում է թէ՝ Արմէններն ու Խալդերը առևտրական գործերով մինչև Հնդկաստան ճամբորդում էին։

* * *

Կիւրոս Մեծի օրերից մինչև մեր օրերը, այլ խօսքով՝ անցնող 2500 տարիների ընթացքում, Իրանի և հայ ժողովրդի միջև պատմական, մշակութային, կրօնական և տակաւին այլ ասպարէզներում սերտ կապ ու յարաբերութիւն է եղել։ Անցնող 2500 տարիների պատմութիւնը պերճախօս վկան է թէ՝ ինչպիսի գործունէութիւն և յարաբերութիւն է գոյութիւն ունեցել այս երկու հարևան ժողովուրդների միջև։

Պատմականօրէն այսպիսի անցեալ և մշակութային ու հասարակական սերտ յարաբերութիւն ունեցող հայերի մէկ մասը՝ հնագոյն շրջաններից սկսեալ, ապրում է Ատրպատականի մաս կազմող շրջաններում, իսկ Շահ-Աբբասի կարգադրութեամբ Նոր Ջուղայում և այլ շրջաններում հաստատուած հայերը, իրենց թողած պատմական, մշակութային և այլ ժառանգութիւններով յայտնի են արդէն բոլորին։ Ներկայումս Թեհրան հաստատուած հայերը, որոնց թիւը հարիւր հազարի է հասնում, ինչպէս նաև Իրանի բազմաթիւ քաղաքներում ապրող հայերը մեծագոյն ուրախութեամբ մասնակցեցին Իրանի Կայսրութեան 2500ամեակի տօնակատարութիւններին և իրենց երախտագիտութիւնը յայտնեցին Իրանի մեծազօր Արքային՝ Ն. Կ. Մ. Արիամեհր Մոհամմէդ Ռզա Շահ Փեհլեվիին։

Իրանում գտնուող պատմական ու հնադարեան վանքերն ու եկեղեցիները, ինչպէս նաև՝ եկեղեցական, կրթական, մշակութային, մարզական և այլ հաստատութիւնները վկայում են թէ՝ ինչպիսի լայնախոհութիւն և կրօնական ազատութիւն է տիրում ներկայումս բովանդակ Իրանում։

Իրանի Կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի տօնակատարութեան առաջին օրն իսկ, երբ Իրանի Արքան Պասարգադում վերջացրեց իր խօսքը, համայն աշխարհին ծանուցելով թէ՝ «Կիւրոս, ննջիր դու, վասնզի մենք արթուն ենք,» *այդ րոպէին հնչեցին Իրանում գտնուող հայ եկեղեցիների զանգերը և զանգերի ձայնին միացան Իրանահայերի սրտից բխած մաղթանքն ու աղօթքը ու միախառնեցին Իրանի ժողովրդի ուրախութեան մաղթանքներին։ Վստահ ենք թէ՝ այս միաձուլւած աղօթքը, ուրախութեան ու մաղթանքի այս ձայները, իրար հետ ներդաշնակւեցին՝ խնդրելու համար Աստծուն՝ որ անսասան պահէ Իրանի 2500 տարիների անցեալ ունեցող Կայսրութիւնը։ Աստուած հովանի ու պահապան լինի Ն. Կ. Մեծութեան և Կայսերական ընտանիքին և Աստուած օրհնէ Իրանի համայն ժողովրդին։*

Հիմա, երբ Իրանի Կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի շքեղ տօնակատարութիւնը պատմական անջնջելի յիշատակ է դարձել ու դարուս մեծագոյն ոգեկոչումն է հանդիսացել, սրտագին մաղթում և աղօթում ենք որ աշխարհում խաղաղութիւն լինի և Իրանը միշտ ծաղկեալ վիճակ ունենայ։

Աստուած օրհնէ Իրանը, անսասան պահէ Իրանի Կայսրութիւնը և արևշատութիւն պարգևէ Արիամեհր Շահնշահին։

Թարգմ․ Յունարէնից
Ա․ ԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

ԿԻՒՐՈՍ Բ․ ՄԵԾ

Պարսիկները, ինչպէս և Մեդացիք, բաժանուած էին տոհմերի՝ Պասարգադներ, Մարաֆիէններ, Մասպիէններ, Պանթալիններ, Դերուսիներ, Գերմանիէններ, որոնք բոլորը երկրագործներ էին։ Չորս տոհմեր էլ որ վաչկատուն էին, մտնում էին Վերիններին․ Դաէններ, Մարդեր, Դրոպիկներ և Սագարտներ։ Առաջիններն ամենէն կարևորներն էին, և Աքեմենեանները (Հախամանիշ) մի տոհմ էին որ կախում ունէին նրանցից։

Այն ժամանակից ի վեր, երբ պարսիկները անցել էին Պարսուայից Պարսումաշ, երեք Աքեմենեան թագաւորներ՝ Տիշպիշ (Տէիսպէս), Կուրաշ Ա․ (Կիւրոս) և Կամբուջայա Ա․ (Կամբիզ) յաջորդել էին Անզանի գահին․ Արիարամնէն, Կիւրոսի եղբայրը, իշխել էր Պարսայում՝ մինչև իր տապալումը Կիաքսարի կողմից։

Կիւրոս Բ․ Մեծը յաջորդեց այդ գահին 558 թւին (Քր․ ա․) և անակնկալ ու շշմեցուցիչ նուաճումներով ստեղծեց մի վիթխարի Կայսրութիւն, որ դեռ տեսնուած չէր, տարածուելով Հելլեսպոնտոսից մինչև Հնդկաստանի սահմանները։ Պէտք է հաւատալ որ Կիւրոսը, որի մասին քիչ տեղեկութիւններ ունենք և երբեմն՝ հակասական, եղել է զինուորական մեծ հանճար և կազմակերպիչ, ենթարկելով այնքան ժողովուրդներ և աւանդ ձգելով իր յաջորդներին մի այնպիսի Պետութիւն, որ երկու դար ու կէս յետոյ պէտք կը լինէր որ մի Աղեքսանդր նրան տապալէր։

Մեր միակ հեղինակութիւնը այդ ժամանակաշրջանի մասին Հերոդոտն է, չնայած որ նա մեզ հաղորդում է աւանդավէպեր, բայց դրանք թւում են պատմական ճշմարտութեան աւելի մօտ

քան՝ Կտեսիասի հեքիաթները։

Աժդահակը երազում տեսաւ որ իր Մանդան աղջկանից դուրս եկաւ մի հեղեղ որ ո՛չ միայն հեղեղեց իր մայրաքաղաքը, այլև ամբողջ Ասիան։ Վախենալով նրան ամուսին տալ մի ազնուական Մեդիացու, որ առաւել կը լինէր իրականացնելու այդ երազը, նա իր աղջկայ համար ընտրեց մի պարսիկ՝ յաւ ընտանիքից, սակայն հանդարտ նկարագրով, որին նա նկատում էր որպէս աւելի ցած քան համեստ պայմաններ ունեցող մի մեդիացու։ Դա՝ Կամբիզն էր, պատմական անուն, որովհետև մենք պիտի տեսնենք որ իր անունը, Կամբուջիա նախնական անւան ձևի տակ, երևում է Սուզայի թագաւորների սերունդների մէջ, աղքատ արքայիկներ, որովհետև Աժդահակը նրանց աւելի ցածր էր համարում քան իր կայսրութեան քաղաքացիներին։

Աժդահակը երկրորդ անգամ երազում տեսաւ որ իր դստեր մարմնից խաղողի մի որթ դուրս եկաւ և ծածկեց ամբողջ Ասիան։ Սարսափած՝ նա իր մօտ կանչեց Մանդանին, և երբ մանուկը ծնւեց, նա նրան յանձնեց Հարփագին, որ իր ընտանիքից էր և շատ վստահելի, հրամայելով որ սպանի մանկանը։ Հարփագը, չցանկանալով իր սեփական ձեռներով սպանութիւն կատարել, այլև նախընտրելով պահպանելու իր ապագան և իրեն պաշտպանել Մանդանի վրէժխնդրութիւնից, որ պիտի յաջորդէր իր հօրը և պիտի պատժէր իր որդու սպանիչին, Հարփագը երեխային ծածուկ յանձնեց թագաւորի մի հովւին՝ Միհրդատ անունով, նրան հրամայելով մանկանը տանել դնել ամենավայրի լեռներից մէկի վրայ, ուր նա շուտով կը մեռնէր։ Այս հովւի կինը որ կոչւում էր Սպակօ[1], «շուն» (սա միակ մեդերէն բառն է, որ մեզ փոխանցել են Յոյները), նոյն օրը ծնել էր մի մեռած մանուկ. հովւի կինը համոզեց իր ամուսնուն այդ մեռած մանկանը փոխարինել Մանդանի երեխայով և ցոյց տալ Հարփագին իբրև Մանդանի երեխայի դիակ։ Յետագայում, սակայն, երեխային ճանաչեց իր մեծ հայր Աժդահակը, որպա

1) Սպակօ—սագ պարսկերէն՝ շուն։ Ռուսերէն՝ սոբակա (շուն) բառը նոյն ծագման է։ Ա. ԱՍԱՏՐԵԱՆ

զգալով որ կենդանի գտաւ։

Պատմում են որ Հարփագը դաժանօրէն պատժւեց։ Աժդահակը սպանել տւեց նրա տղային և արքայական խնջոյքի սեղանին, մատուցել տւեց նրա տղայի միսը իր հօրը՝ Հարփագին, մինչդեռ երեխայի գլուխը, ձեռներն ու ոտները մի զամբիւղի մէջ մատուցւեց իր հօրը, խնջոյքից յետոյ... Հարփագը ոչինչ չասաց, բայց մի քանի տարի յետոյ նա համագործակցութիւն սկսեց Կիւրոսի հետ, որին վերադարձրել էին իր ծնողների մօտ. նա Կիւրոսին համոզեց ապստամբել (553 Թ.), նրա համար կողմնակիցներ շահեց մինչև իսկ Մեդիացիների մէջ, այդպիսով գլխաւոր գործիչը դառնալով Աժդահակի կայսրութեան խորտակման, որովհետև Աժդահակը չտեսնւած անզգուշութիւն ունեցաւ նրան վստահելու այն բանակը, որ պիտի ճնշէր ապստամբներին։

Հարփագը, Կիւրոսի հետ համաձայնելով, նրան բնաւ չը ճնշեց և այդպիսով յագուրդ տւեց իր արդար ատելութեանը։

Կիւրոսը, սկզբում ձախողելով, շահեց Պասարգադի ճակատամարտը. Աժդահակի զօրքերն ապստամբեցին, իրենց թագաւորին կալանքի տակ առին և նրան յանձնեցին յաղթականին (550 Թ.)1)։ Աժդահակը, բանտարկեալ, մնաց շղթաների մէջ, սակայն իրեն այլ պատիժ չաւին։

Ահա թէ ինչպէս է պատմում Նաբոնիդ Տարեգրութիւնը Մեդիայի անկման մասին. «Գալով Աժդահակին, իր զօրքերն ապստամբեցին իր դէմ. նա բռնւեց և յանձնւեց Կիւրոսին։ Սա արշաւեց Եկբատանի վրայ, որ արքայանիստ քաղաքն էր, ոսկին, արծաթը և կահկարասիները կողոպտւեցին. կահկարասիները և հարստութիւնները տարւեցին Անզանի հողերը»։ Բնաւ ոչ մի մանրամասնութիւններ. բայց մենք գիտենք, շնորհիւ այդ աղբիւրների, Եկբատանի գրաւման թւականը (550 Թ.

---

1) Ըստ Նիկոլաոս Դամասկոսցու՝ այս կռւի մէջ մեռաւ Կիւրոսի հայր Կամբոյիսան, իր ծանր վէրերի հետեւանքով։

Քր. ա.)[1]: 549 թւին Կիւրոսը երեւում է պնակիտների վրայ Անզանի թագաւոր տիտղոսով. 546-ին նա կրում է Պարսկաստանի թագաւոր տիտղոսը: Տեղական աւանդութիւնները, պահւած դասական հեղինակների կողմից, մեզ ասում են որ պէտք եղաւ երեք ճակատամարտ Մեդիան ընկճելու համար, սակայն նրանք լռում են Ծագածի մասին, նոյնպէս և այն ձևի, որ ձևափոխեց նուաճողի տիտղոսները:

Կարող է, որ Եկբատանի գրաւումից յետոյ, Մեդացիները նրան խնդրեցին դառնալ իրենց թագաւորը և այնուհետև նա փոխեց իր համեստ տիտղոսը՝ Անզայի թագաւոր, կոչւելով Պարսկաստանի թագաւոր, Մեդիան միացրած լինելով իր ժառանգական պետութիւններին:

Նաբոնիդը իշխելով Բաբելոնին, Կիւրոսը հանգիստ էր այդ կողմից. բայց նա միևնոյնը չէր զգում Լիդիայի հանդէպ, ուր Կրեսոսը (Կրուասոս) յաջորդել էր Ալիատտին: Սա տարածեց նորէն նուաճումները իր նախորդի և Միլէտը և յունական այլ գաղութներ Իոնիայի (Յոնիա), դէպի արևելք, տասը տարուց պակաս, նա տարածեց իր տիրոյթները մինչև Ալիս գետի ձախ ափը: Թւում էր, ուրեմն, որ դաշինքներով որոշւած սահմանները խախտւել էին նրա կամ Ալիատի կողմից: Մեդիայի անկումը և Պարսկաստանի կարևոր աճումը, որ առաջին անգամն էր մտնում պատմութեան մէջ, նրան մտահոգելու բնոյթն ունէր: Մի դաշնակից էր անյայտանում. սակայն նա ունէր մի կայուն բանակ և գերազանց հեծելազօր: Նա կարող էր հաշւի առնել յոյն վարձկաններին, Բաբելոնի և Եգիպտոսի աջակցութիւնը: Եթէ, ուրեմն նա վճռեց առաջ ինքը յարձակւել և գրաւել Կապադովկիան, դրա պատճառն այն էր որ նոր պետութիւնը նրան լուրջ անհանգստութիւն էր պատճառում, և որ ինքը կամենում էր նրան յաղթահարել՝ նախքան որ նա զօրանար աւելի ուժեղ: Թւում էր, ըստ Դիոդոր Սիցիլիացու, մի

1) Քսենոփոն պատմում է, որ Կիւրոսը, Աժդահակին գահազուրկ անելուց յետոյ, ամուսնացաւ նրա աղջկայ՝ Ամիտիսի հետ: Եթէ այս ճիշտ է, ինչպէս որ կարծում է Եդուարդ Մէյէր, պէտք է ընդունել որ Կիւրոսը, եթէ չէ Մանդանի որդին, ամուսնացել է իր հօրաքոյր մօրաքրոջ հետ, ինչ որ բնաւ անհնարաւոր չէ:

գործակալ որ մեծ գումարներ էր ստացել նրանից յոյն զին-ուորներ վարձելու (նա Սպարտայի հետ դաշինք էր կնքել), փա-խաւ Պարսկաստան և Կիւրոսին տեղեկացրեց այն դաշինքի մա-սին որ նրան սպառնում էր։

Նոր արքան վճռեց կանխել Կրեսոսին և յարձակուել նրա վրայ՝ դաշնակիցները գալուց առաջ (546 Թ.)։ Իր արշաւը լեռնե-րի վրայով փոքր Ասիա հասնելու համար՝ զարմանալի է, Տիգ-րիսն անցնելուց յետոյ Նինուէից ոչ հեռու։ Նա կտրեց անցաւ Միջագետքը, թերևս կողանցելով լեռների փէշերը որ վերջա-նում են Միջագետքի հիւսիսում։

Մտնելով Կապադովկիա, նա առաջարկեց Կրեսոսին իր կեանքը և թագաւորութիւնը խնայել, եթէ նա երդուէր օրի-նաւոր վասալ դառնալ։ Լիդիայի թագաւորը մերժեց և առաջին բաղխումը մի յաղթանակ եղաւ իր համար։ Դրան հետևեց եռամսեայ մի զինադուլ, ապա, թշնամութիւնը վերսկսելով, մի կռիւ ծայր առաւ Պտերիումում և մնաց անորոշ արդիւն-քով, սակայն Կիւրոսը իրեն չհամարեց կռիւը վերսկսել յաջորդ օրը, մինչդեռ գիշերի պատեհութիւնից օգտուելով, Կրեսոսը յետ քաշուեց Սարդիս, ամայացնելով երկիրը, խանգարելու համար պարսիկներին որ առաջ շարժուեն, և հաշուելով թէ Բաբելացի-ների միջամտութեամբ, որ պիտի վտանգէր թշնամու թիկուն-քը, կ՚արգիլէր Կիւրոսին հետապնդելու իր ձեռնարկը. բայց Նաբոնիդն ընդունեց խաղաղութեան առաջարկը որ արել էր Կիւրոսը, և նուաճողը արագօրէն քալեց Սարդիսի վրայ։

Կրեսոսը, կարծելով թէ ձմեռը կ՚արգիլէր պարսիկների առաջխաղացքը ձիւնապատ լեռների վրայով, արձակել էր իր ոյժերի մի մասին և մինչև գարուն յետաձգել էր իր դաշնա-կիցների օգնութեան գալը։ Անակնկալի գալով իր թշնամու յառաջխաղացքով, նա պատրաստուեց դէմ դնելու նուաճողին և իր հեծելազօրը արձակեց Հերմուս դաշտի վրայ։ Կիւրոսը իր զօրքերի առջևից ուղտեր էր շարել և այդ կենդանիների հոտը ծառս արաւ Լիդիայի ձիերին և դարձրեց անսանձելի։ Լիդիա-յի ձիերը առաջին անգամն էին տեսնում և հոտ առնում ուղ-տերի։ Ուստի և անյաղթահարելի վախ համակեց նրանց։ Կիւ-րոսի բանակում ուղտերի ներկայութիւնը ցոյց է տալիս, որ

այդ գործի մի մեծ մասը բաղկացած էր վաչկատուն Սուգացիներից, նման Բեդուիններին, որ բնակւում են Շատ էլ Արաբի անջրդի հովիտներում։

Փակւած իր մայրաքաղաքում, որ շատ ամուր դիրք ունէր, Կրեսոսը սպասեց գարնան և իր դաշնակիցներ՝ Յունաստանի և Եգիպտոսի օգնութեան։ Սպարտացիք պիտի բանէին ծովը. բայց, 14-րդ օրը, Մարդ ցեղից մի զինւոր՝ Հերիադէս անունով, գայթակղւած թագաւորի խոստումով՝ վարձատրել նրան որ առաջինը կը մանի քաղաք Սարդան, նկատեց մի լիդիացի զինւորի, որ իր սաղաւարտը թողած լինելով փոսի մէջ, իջաւ մի կողմից որ հաւրից անմերձենալի էր թւում և նոյն ուղղութեամբ յետ դարձաւ, Իրեն հետ մի քանի ընկերներ վերցնելով, այս Մարդ ցեղի զինւորը բռնեց այն ճամբան որ լիդիացի զինւորն անզգուշութեամբ յայտնաբերել էր, անակընկալի բերեց Լիդիայի կայազօրին որ վստահ էր դիրքի ամրութեան, և բացեց քաղաքի դռները պաշարողների առաջ։ Ահա՛ այսպէս ընկաւ Սարդան 546 թւին, միևնոյն այն տարին երբ Կիւրոսն ընդունել էր Պարսկաստանի թագաւոր տիտղոսը։

Կրեսոսը ելաւ մի փայտակոյտի վրայ, որ պատրաստել էր ուել, և ուզեց այրւել իր ընտանիքի հետ, բայց թւում է թէ պարսիկները հասան ժամանակին՝ հանգցրին խարոյկը և մահից ազատեցին Լիդիայի թագաւորին։1)

1/ Հերոդոտը այս մասին պատմում է հետեւեալը.— Յունաստանի օրէնսդէտ Սոլոնը Յունաստանի համար օրէնքներ մշակելուց յետոյ, որոշեց տասը տարի բացակայել իր հայրենիքից։ Այցելեց Լիդիայի թագաւոր Կրեսոսին Սարդայում։ Կրեսոսը աշխարհի ամենահարուստ թագաւորի հպարտ ոգով, ցոյց տալով իր անհուն գանձերը՝ ասաց. «Տեսնում ես, որ ես աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ»։
Սոլոնը պատասխանեց. «Մարդկանց երջանկութիւնը իրենց վախճանով պիտի չափել»... Կրեսոսը վիրաւորւեց, բայց երբ Կիւրոսից պարտւեց եւ խարոյկի վրայ բարձրացաւ, բացագանչեց՝ «Սոլո՜ն, Սոլո՜ն, դու արդարացի էիր»... Կիւրոսը լսեց այս խօսքերը եւ հրամայեց իր մօտ բերել Կրեսոսին եւ հարցեց բացագանչութեան իմաստը։ Երբ Կրեսոսը պատմեց Սոլոնի խօսքը, Կիւրոսը թոյլ չտւեց որ Կրեսոսը մեռնի, այլ նրան [illegible] արքունիքի մէջ իր մօտ պահեց, իբրեւ խորհրդատու։ Կրեսոսի առաջին խորհուրդը եղաւ՝ «Դադրեց-

Լիդիայի նուաճումից յետոյ Կիւրոսը գրաւեց նաեւ յունական գաղութները, բայց թողեց իր տեղապահներին լրացնելու իր ձեռնարկը. իր բացակայութիւնը յարուցեց լիդիացիների ապստամբութիւնը. նրանք ամրացան Սարդայի միջնաբերդում, որ զօրավար Տաբալոսն էր ղեկավարում. գրգռիչը Պակտիասն էր, որին Կիւրոսը վստահել էր գրաւած գանձերը։ Մեդացի Մազարէսի առաքած օգնական ուժերը զսպեցին ապստամբութիւնը։ Պակտիասը փախաւ Յոյների մօտ։

Փոքր Ասիայի քաղաքները պաշարեցին եւ գրաւեցին, շնորհիւ Մեդա-Պարսիկների՝ Ասորեստանցիներից ձեռք բերած ճարպիկութեան։

Յոնիացիները աւելի թեթեւ շարժեցին. Կիւրոսին միանալը մերժելով, նրանք չշարժեցին օգնելու Կրեսոսին, նրանք ապաւինել էին Սպարտայի աջակցութեան, սակայն Սպարտան թերացաւ։

Լակեդեմոնիան բաւականացաւ մի դեսպան ուղարկելով Կիւրոսի մօտ՝ սպառնալով թշնամական միջոցների դիմել, եթէ Կիւրոսը շարունակէր իր ձգտումները յունական գաղութների նկատմամբ։ Կիւրոսը դեսպանին շնորհակալութիւն յայտնեց իր կարծիքի համար, բայց աւելացրեց.

«Զգոյշ եղէք, որ ես ձեզ առիթ չտամ տաղտկանալու, ո՛չ թէ Յոնիայի դժբախտութիւնների մասին, այլ՝ ձեր»։

Սկսուեց մի տարագրութիւն. ծովը ազատ էր, և պարսիկները նաւատորմ չունէին։

Մենք գրեթէ ոչի՛նչ գիտենք այն արշաւի մասին, որ Կիւրոսը յետոյ ձեռնարկեց Արեւելքի շրջաններում։ Հինգ կամ վեց տարիների ընթացքում, 545-ից մինչեւ 539, նա պատերազմեց անծանօթ ժողովուրդների դէմ, որոնք ապրում էին Կասպից երկրի և Հնդկաստանի միջեւ։

Նա գրաւեց Բալխը, որով Մարգիանները (Մերվ) և Սող-

ռու Սարդայի կողոպուտը, որովհետեւ դա այլեւս ոչ իմ քաղաքն է ոչ իմ ունեցուածքը. կողոպտել մի՛ տուր»։ Կիւրոսը այդպես էլ վարուեց։

Կիւրոսի յաջորդ Կամբիզը եւս Կրեսոսին, ոսկէ շղթաների մէջ, իր մօտ պահեց իբրեւ խորհրդատու։

Ա. ԱՄԻՐԵԱՆ

գիմնները (Սամարկանդ) ենթարկեցին։ Նա յառաջացաւ մինչեւ Իաքսարտէս (Սիր Դարիա) եւ այնտեղ ամրոցներ կառուցեց, որոնք դեռեւս գոյութիւն ունէին Աղեքսանդրի ժամանակները, ինչպիսին էին՝ Կիւրոպոլիս (Ուրա Թափէ) որ իշխում էր գետի գլխաւոր ծանծաղուտի վրայ։ Նա հպատակեցրեց Սակերին, որ արդէն հաստատուած էին Սակաստանում1), ներկայիս Սէյիստանը։

Թւում է թէ Կիւրոսը մի բանակ կորցրեց Գեդրոզիի (Մեքրան) անապատներում, այլ սակայն այդ նահանգը այնուհետեւ դարձաւ մի մասը իր կայսրութեան։

Մնում էր Բաբելոնը, այն հին փառքը, որ նորոգուած էր այն օգնութեամբ որ տուեց Մեդիային՝ Նինուէի գրաւումից յետոյ։ Թւում էր սխալ պաշտպանէր այդ փառքը՝ որեւէ յանդուգն ձեռնարկի դիմաց։

Նաբոնիդը, զաւակը Սին-ա-Հալբան կոչւող քրմուհու, խաղալիք էր դարձել քուրմերի ձեռքին եւ իր ժամանակը անց էր կացնում հին սրբավայրեր յայտնաբերելով եւ նրանց վերականգնումով, ծանր հարկեր գանձելով՝ ծախսելու համար ծախքերը։ Քրմերը մասամբ ատեցին նրանից, երբ նա Բաբելոն մտցրեց Ուր, Ուրուկ եւ Էրիդու աստուածներին։ Նա նոյնիսկ չէր գալիս իր մայրաքաղաքը, ուր իր ներկայութիւնը, սակայն, անհրաժեշտ էր. նա իր փոխարէն դրել էր իր որդի Բալթազարին (Բաղդասար)։ Կիւրոսը, այսպիսով, դարձաւ հովանաւորը Մարդուկի, ինչպէս որ ասուած է «Յայտագրի» մէջ, որի սեպաձեւ արձանագրութիւնը պահուած է։

Հին քաղաք Բաբելոնի նուաճումը, որ եղաւ աջակցութեամբը քաղաքի ներսում գտնւող պարսիկների համակիրների, աւելի դիւրին եղաւ քան կարծւում էր, նախատ երեք շարք գոտիների, որոնք պարփակում էին քաղաքը իրենց վիթխարի միջոցներով։ Նուաճողի արշաւը դիւրացրեց բաբելոնա-

1) Այս միեւնոյն Սակաստանից էր պարսիկ նշանաւոր ազգային դիւցազն Ռոստամը, որին մեր պատմահայր Մովսէս Խորենացին կոչում է՝ Ռոստամ Սագճիկ, այսինքն՝ սակաստանցի։

Ա. ԱՄԻՐԽԵԱՆ

ցի Գուբարուն (Գոբրիաս), որ նահանգապետն էր Զաբ և Դիյալա նահանգի. նա մասնակցեց և գործ հայթայթեց։

Կիւրոսը, 539 թուին1) սկսեց յարձակումը Եփրատի հոսանքը փոխելով, երբ գետի ջուրը աւելի սակաւ էր, ապա յարձակեց Բալթազարի բանակի վրայ, որ մնացել էր Օպիսում և այդպիսով կտրել էր մայրաքաղաքից։

Բալթազարին պարտութեան մատնեց առանց դժուարութեան։ Նաբոնիդը, վտարուած Սիփփարից, փախաւ. Գոբրիասը մտաւ Բաբելոն առանց կռուի2)։ Տաճարները հովանաւորեցին և կողոպուտն արգիլեց։ Երբ նուաճողը անձամբ ներկայացաւ, ընդունեց որպէս ազատարար (Նոյեմբեր 27)։ Նաբոնիդը կամաւ յանձնեց և բանտարկեց Կարամանիում (Քերման), ուր ապրեց մինչև իր մահը։ Կիւրոսը «բռնեց Բէլ-Մարդուկ Աստծոյ ձեռները» (Մարտ 20, 538 թ.) և սա եղաւ իբրև Բաբելոնի թագաւոր օծումը. նա այս ձեւով նշում էր, որ չէր պարտադրում ոչ ազգի ո՛չ իր ընտանիքի, ո՛չ իր ժողովրդի, աւելի եւ՝ ոչ էլ Մեդական Մոգերի կրօնը։

Նա աստուածների պատկերը յետ ուղարկեց այն բոլոր քաղաքները, որտեղից Բաբելոն էր բերել Նաբոնիդը, եւ միենոյն սկզբունքը կիրառելով, նա հրեաներին վերադարձրեց ոսկէ և արծաթէ այն սափորները, որ բերել էին Երուսաղէմի տաճարից և գտնւում էին արքայական գանձարանում. նա աւելին արեց հրեաների համար, նա հրեաներին թոյլատրեց վերադառնալ Պաղեստին և այնտեղ վերակառուցել աւերուած Տաճարը։

Հռովարտակը *որ յետոյ տուեց, Բաբելոնի թագաւոր օծելու իր տարեդարձին, մի հռչակաւոր թուական է մարդկային պատմութեան մէջ։*

Տարբեր բացատրութիւններ են տրուել մեծ արքայի

1) Հայոց Տիգրան Ա.-ն (Երվանդյան), իբրև մտերիմ ու դաշնակից Կյուրոսի, մասնակցում էր Բաբելոնի գրավմանը հայկական այրուձիով և հետևակազորով.

2) «Առանց կռվի և ճակատամարտի», ասում է Կյուրոսի արձանագրությունը.

Ա. ԱՄՈՐԵԱՆ

վերաբերմունքի մասին՝ Պաղեստինցի աքսորականների նկատմամբ. նա այդպիսով վարձահատույց էր լինում այն ծառայութիւնների համար, որ մատուցել էին նուաճման ժամանակ թէ՝ ուզում էր ապահովել անձնուէր կողմնակիցների մի խումբ՝ որ շատ հեռու չէր Եգիպտոսի սահմանից, որով կարելի է կարծել, որ նա ցանկանում էր աշխատանք փորձել, ինչ որ յետոյ իր յաջորդներն իրականացրին։ Այս շարժառիթները կարող է պատահել անբաւարար են, յատկապէս երկրորդը, որովհետև նույն թուով հրեաներ թողին հեռացան այն կացութիւնից, որ ձեռք էին բերել իրենց յամառ աշխատանքով այն վայրերում, ուր պատերազմի պատճառով նետուել էին, վերադառնալու համար այն քարքարոտ երկիրը, ուր ապրել էին իրենց հայրերը։ Դա մի փոքրիկ գաղութ (42. 360 հոգի) էր որ հետևեց Դաւթից սերող Յովակիմ Թագաւորի որդի Շէշբազարին, և սկսեց աշխատել, եօթը ամիս շարունակ, Տաճարի վերակառուցման վրայ, շրջապատուած թշնամի ցեղերով, ընկերներ և կամ այլ տեղերից եկած, շնորհիւ պարսիկ նահանգապետի էր որ նրանք իրենց գործը յաջող կերպով կատարեցին (536 թ.)։

Յայտնի չէ թէ ո՞րոնք էին Կիւրոսի վերջին պատերազմները և ի՞նչպիսի վախճան ունեցաւ նա։ Կարելի է ենթադրել, որ նա կանչեց իր Կայսրութեան Արևելքից, դէմ դնելու համար այն վաչկատուն ցեղերին, որոնք երկար ժամանակներ խուժում էին հարաւի աւելի քաղաքակիրթ երկրները։

Ըստ Հերոդոտի պատմութեան, Կիւրոսը կնութեան էր ուզել Յաքսարտէսից այն կողմ ապրող Մասագէտների թագուհի Թամիրիսին, սակայն իր առաջարկութիւնը արհամարհանքով մերժուել էր։ Կիւրոսը գրաւեց նրա երկիրը, ջախջախեց առաջապահներին որ յարձակուելով անակնկալի էին բերել պարսիկ պահակազունդը, սպանել էին կողոպտել՝ խմելով գինի որին սովոր չէին. Կիւրոսը գերի բռնեց թագուհու երէց որդի Սպարգապիսին, որ անձնապաստան մէկն էր և ինքնասպան եղաւ։

Այս դէպքերին յաջորդող մեծ ճակատամարտում Կիւրո-

որ պարտւեց և սպանւեց (528 Թ. Քր. ա.)։ Թագուհին վրէժխնդիր լինելու համար իր զաւակի մահւան համար, հերոսի գլուխը խրեց արեան մէջ՝ ճչալով. «Ես քեզ տալիս եմ քո ամբողջ արիւնդ»։

Սակայն թագաւորի դիակը չմնաց թշնամու ձեռքը, լինի՝ յետ գրաւելով, լինի՝ յետ տրւելով, արքունական դիակը բերւեց Պասարգադ, ուր թաղւեց այն գերեզմանի մէջ որ այսօր ծանօթ է՝ «Մաշադի Մադար-ի Սուլէյման», «Սողոմոնի մօր դամբարան» անունով։ Իր դագաղը դեռևս գոյութիւն ունէր Աղեքսանդր Մեծի ժամանակ և այն տեսել էր Արիստոբուլը։

Ըստ Բերոսի՝ («Քրոնիկոն») Պարթևաստանի Դահիների դէմ կռւի մէջ էր սպանւել Կիւրոսը։ Ըստ Կտեսիասի՝ («Պերսա-մենա») ոչ թէ Մասսագետների, այլ Դերբիկներին (Դերվիկ) նւաճելիս է սպանւել. այդ ժողովուրդն ապրում էր Կասպից ծովից արևելք, որի թագաւոր Ամորգասը հնդիկների դաշնակիցն էր և փղեր ունէր իր բանակում։

Կիւրոսը, անժխտելիօրէն պատմութեան մեծ դէմքերից մէկն է, և միմիայն փաստաթղթերի՝ որ աւանդել է մեզ հին շրջանը՝ անբաւարարութիւնն է պատճառը որ նա պատմական լրիւ լոյսի տակ չէ առնւել։ Գաղափարը, որ ձևակերպել է նա, մինչև մի որոշ դարագլուխ որ բաւական մօտենում է մեզ, ըստ դասական հեղինակների, նրան դարձրել է մի առասպելական տիպ Միջին Դարերի ռոմանների Կառլոս Մեծի նման։

Սուզայի փոքրիկ թագաւորից բարձրանալու համար մինչև Աքեմենեան Կայսրութեան հիմնադրի աստիճանին, պէտք էր որ նա լինէր միաժամանակ մի մեծ զօրավար և հրաշալի քաղաքագէտ, պէտք էր որ նա Արևելք բերէր մի քանի նոր գաղափարներ և կառավարելու սկզբունքներ որ մինչ այդ՝ իրենից առաջ՝ անծանօթ էին։ Եւ մինչև իսկ եթէ նրան օգնել էին պարագաները, նուազ ճիշդ չէ, որ այն եռանդը որ նա ունէր, ընդմիշտ խորտակեց այս երեք պետութիւնները որ ճանաչւած էին՝ Մեդիա, Լիդիա և Բաբելոն անուններով։

Արդէն զօրավար շատ բան չէր լինի՝ առանց իր արժանաւոր զինւորների. Նապոլէոնը չէր կարող ընթացք տալ իր հանճարին, եթէ ձեռքի տակ չունենար այն հրաշալի զօրքերը

որ Յեղափոխութեան բանակն էր։

Այն էր այն բանակը, որով Կիւրոսը նուաճեց առաջաւոր Ասիան։ Մենք ոչինչ գիտենք այդ մասին, սակայն թոյլատրելի է ենթադրել, բատ այնմ որ մենք գիտենք Աքեմենեաններին, որ այդ զօրքը բաղկացած էր աւատատէրերի զօրքերից որ հաւաքել էին տեղերի ղեկավարները, լինի Ասիայի հովտի բնակիչներից, լինի լեռնականներից որ մերօրեայ Բախտիարներն են։ Դա մի ազգային բանակ չէր, այլ զօրախմբեր՝ հաւաքուած և ղեկավարուած իրենց ազգային ղեկավարների կողմից։ Ասիայի յախճապակի պատկերները ներկայացնում են երկու տիպի արքայական պահակներ, մէկը՝ ներմակ, միւսը՝ խառնագէտ գոյնի և մինչև իսկ՝ սև։ Առաջինները համապատասխան են լեռնաբնակ պարսիկներին, իսկ երկրորդները՝ սուզացիների, մարդիկ՝ որ ծաւալ են արեւմտա հովտի։

Այս զինուորներն ունէին գերազանց կազմակերպութիւն, համեմատած ուրիշ պետութիւնների հետ։ Նրանց զէնքերն անկասկած լաւագոյնն էին, քան շրջակայ ժողովուրդներինը, և մինչև իսկ՝ Մեդերի և Լիդիացիների զէնքերը։

Նրանց նախընտրած զէնքն էր մեծ տեսակի մի աղեղ, որի գործածութեան մէջ վարպետ էին պարսիկ. Կրետացի աղեղնաւորները, ասում է Քսենոփոնը, չէին հասցնում իրենց նետը այնքան հեռու որքան պարսիկները, հակառակ որ նրանք սովորութիւն ունէին աղեղնաձգութեան կերպով արձակելու իրենց նետերը հեռահար նպատակի։ Բայց պարսիկները յանձնեցին Կարդուսացիների (քրդերի) դառն նահատակողներ, որոնք կարողացան պահել իրենց անկախութիւնը։ Կարդուսացիները աղեղ ունէին որ երեք արմնկաչափ էր, արձակելու համար՝ լարը ներքև էին քաշում՝ յենուելով իրենց ձախ ոտքին և նետը թափ էր անցնում զրահների ու վահանների միջով։

Գործ էին ածում նաև պարսատիկ, բայց պարսատիկաւորները, շատ մեծ քարեր նետելով, չէին կարող չափուել Հռոդոսցիների հետ, որոնք գիտէին գործածել արճիճի գնդիկներ և նետում էին երկու անգամ աւելի հեռու քան՝ պարսիկները։

Միաժամանակ արքայական բանակները զինուած էին երկար նիզակներով. երբեմն այս զէնքով կռուելու մէջ նրանք գե-

թագանց էին իրենց ժամանակակիցների՝ մէջ։ Բանակի կազմակերպումը նախապատրաստուած էր, լայն մակարդակի վրայ, Կիւրոսի նախորդների՝ Մուզայի գահակիրների կողմից։ Զինուած այդ զօրծիքով, Կիւրոսը համարձակութիւն ունեցաւ նուաճման գործ փորձելու, որ իր նախորդների մտքով չէր անցել, կամ որի առջև նրանք նահանջել էին։

Այս արքան ունէր, այլապէս, միաժամանակ քաղաքական և կրօնական գաղափար։ Բաբելոնը և Ասորեստանը, չկարողանալով ձերբազատուել ֆետիշական գաղափարից, որ կապուած էր աստուածութիւնների ձեռակերտ պատկերներին, պարտուած ժողովուրդների աստուածներին աւար էին վերցնում և նրանց դարձնում ազգային աստուծոյ չքախումբը։

Կիւրոսը ո՛չ միայն չտարաւ այդ պատկերները, այլ՝ յետ տուեց այն ժողովուրդներին, որոնց պատկանում էր, վերադարձրեց իրենց օրինական տէրերին այն աստուածների արձանները, որ գտաւ Բաբելոնում. Նա եբրայեցիներին, միևնոյն գաղափարը կիրառելով, վերադարձրեց նրանց սրբազան սափորները։ Դիւրաւ կարելի է երևակայել երախտագիտութեան այն զգացումը որ համակեց Բաբելոնից պարտուած բնակիչներին, երբ լսեցին ազգային աստուածութիւնների իրենց օջախը վերադարձնելու լուրը։ Այս հանճարեղ գաղափարը ամրապնդեց նուաճողի ուժը. պարսկական Կայսրութիւնը հիմնուած էր։

Այս բոլորը նորութիւն էին Արևելքի համար, այնքան նոր, որ շնորհիւ այն հրապարակութիւնների որ արին հրեաները, Կիւրոսի անունը դեռևս ժողովրդական է մեր մէջ։

Թարգմ՝ Ֆրանսերէնից՝ Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

Աղբիւր.—

«L'Iran Antique,
E'lam et La Perse
et
La civilisation Iranienne»
Par Clement Huart et Louis Delaport.
Paris, 1943.

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԿԻՒՐՈՍ Բ. ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

Պատմական փաստաթղթերի չգոյութեան պատճառով՝ պարսիկ ժողովրդի և Պարսկաստանի պետական կեանքի անցեալի մասին աւանդութիւններ և առասպելներ կան։ Մենք թարգմանաբար մէջ բերինք թագաւորութեան սկզբնաւորութեան մասին եղած կարծիքները։

Այժմ անցնենք Կիւրոս Մեծի վախճանի մասին եղած կարծիքներին, որոնք հակասական են, նոյն իսկ՝ հակընդդէմ։

Յոյն պատմաբան Հերոդոտը, Ժիւսթէնը, նոյնպէս և Դիոդորոս Սիկիլիացին, պնդում են, որ Կիւրոսը գերի բռնուեց Մասագետների թագուհի Թոմիրիսի կողմից և սպանուեց։ Կտեսիաս ասում է, որ նա սպանուեց մի հնդիկի նիզակից, երբ կռւում էր այդ երկրի Դերբիկների դէմ։ Իսկ Քսենոֆոնն էլ գրում է, որ նա մեռաւ իր մահճում, բնական մահով, իր երկու որդիներին կտակ յանձնելով և թաղւեց Պասարգադում 529 թ. Քր. առաջ1)

Ահա՛ այսպիսի հակընդդէմ կարծիքներին յայտնել յոյն պատմաբանները Կիւրոսի վախճանի մասին. Սակայն կայ փաստ, որ Կիւրոսի դամբարանը գտնւում է Պասարգադում (Պերսեպոլի մօտ) և մօտ երկու դար յետոյ Աղեքսանդր Մակեդոնացին այցելեց դամբարանին, իսկ Արիստոբուլը տեսաւ նաև դագաղը։

Ժիւսթէնը 2-րդ դարու (Քր. յետոյ) լատին պատմաբան է, հետևաբար կարող է օգտուած լինել Հերոդոտից Կիւրոս վախճանի մասին։

Աւելի հին են և Կիւրոսի մահից (529 թ.) հազիւ 100-80 տարի յետոյ ապրել և գրել են՝ Հերոդոտը (Ծն. 480-422 Քր.

1) Տես «An Historical and descriptive Account of Persia» By James B. Fraser. Esg. Edinburg, 1833. էջ 107.

ա.)։ Քսենոֆոնը (444—360 Քր. ա.)։ Կտեսիասն էլ ժամանակակից է եղել Քսենոֆոնին, որովհետև «Նահանջ Բիւրոց»-ի ժամանակ Կտեսիասը բժիշկն էր Արտաքսերքսես Մնեմոնի, որի դէմ կռուեց իր եղբայր փոքր Կիւրոսը և սպանուեց (401 Թ. Քր. ա.) Հետևաբար վերոյիշեալ երեքի՝ Հերոդոտ, Դիոդոր Սիցիլիացի և Կտեսիաս՝ կարծիքները զուգադիպում են, որ Կիւրոս Մեծը սպանուել է կռուի դաշտում։

Քսենոֆոնը իր «Կիւրոպեդիայում» (Կիւրոսադաստում) իդէալականացնում է Կիւրոսին, հետևաբար անպատշաճ է գտել այդպիսի մեծ և իդէալական կայսեր սպանուելը, ուստի նրան վերագրել է բնական մահով մեռած։

Այս բոլորով հանդերձ՝ Կիւրոս Բ. Մեծի մահուան պարագան մնում է իբրև առեղծուած։

ԿԻՒՐՈՍԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Կտեսիասը պատմում է, որ Կիւրոսը, գահազուրկ անելով Աժդահակին, ամուսնացաւ նրա դուստր Ամիտիսի հետ։ Եթէ այս ճիշտ է, ապա պէտք է ընդունել որ Կիւրոսը, եթէ Մանդանի որդին է, ապա ամուսնացել է իր հարազատ մօրաքրոջ հետ, ինչ որ անհաւանական չէր, հին ժամանակները նկատի առնելով։

ԿԻՒՐՈՍ ԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յոյն հռչակաւոր ողբերգակ Էսքիլէսը (525-456 Թ. Քր. առաջ)։ համարեա՝ ժամանակակից Կիւրոսին (529 Թ. Քր. ա.)։ «պարսիկները» (472 Թ.) իր երկի մէջ ասում է, որ «պարսիկներն ասում էին թէ «Կիւրոս» բառը նշանակում է՝ «արև» և այդ մօտեցնում էին զենդերէն hvare բառին»։

Զենդերէն այս «hvare» բառը նշանակում է՝ Հուր, յետագայում արտաբերուեց «Խուր» կամ «խոր», որից՝ պարսիկ-

րէն Խուրշիդ բառը որ նշանակում է արեւ։

Հայերէն «Հուր» բառը եւ նոյն զենդերէն «hvar»ն է կամ՝ հուրը։

Պարսիկները չեն ասում Կիւրոս, այլ՝ Քուրուշ, որ միեւնոյն Հուր, խոր, խուր կամ քուր բառն է՝ թեթեւ ձայնափոխութեամբ։

Յոյները գրում են՝ Cyrus, որ Կիրուս կամ Կիւրոս բառն է։ Յոյները չունենալով շ հնչիւնը, հետեւաբար չէին կարող գրել Քուրուշ։

Եւ իսկապէս, պատմութեան մէջ Կիւրոսի բուն անունը յայտնի չէ։ Նա պատմութեան ասպարէզ է մտել իր պապ Կիւրոս Ա-ի անունով, որ նշանակում է արեւ։

ԿՈՒՐ ԳԵՏԻ ԱՆՈՒՆԸ

Կուր (կամ՝ Քուռ) գետի անունը եւ Կիւրոսի անունից է ծագել։

«Ստրաբոնը յիշատակում է Արիստոբուլին, որ խօսում էր Օքսուսի նաւարկելիութեան մասին եւ հաստատում, որ Հնդկաստանից եկած ապրանքները իջնում էին մինչեւ Կասպից ծով, ապա անցնում էին Cyrus, այսօր՝ Kour Թիֆլիսի գետը, ապա տարւում էին մինչեւ Եւքսինեան Պոնտոս կամ՝ Սեւ ծով»․1)

Ուրեմն՝ Թիֆլիսի Քուռ 2) գետը եւ կոչւած է Կիւրոսի Քուռուշ անունով։

Պասարգադում գոյութիւն ունէր Քուր-աբ գետը, որ կարծեմ Կիւրոսի անունով է։ Այնտեղ կայ նաեւ Արաքս անունով գետ։ Այսպիսով, Պարսկաստանում կային երեք Արաքս գետեր, մէկը՝ Պասարգադում, միւսը՝ Ուրմիայ լճի հարաւում «Արաս» անունով, իսկ երրորդը՝ Հայաստանի Արաքս (Մայր) գետը։

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

1) Տես «L'Iran Antique», էջ 8—9։

2) Հին քարտէզների մէջ Քուռ գետի անունը գրւած է՝ Kour (Cyrus) ձեւով։

Ա. Ա.

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

ԴԱՐԵՀ Ա. ՄԵԾԸ ԵՒ ԾՈՎԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

Սուէզի ջրանցքի բացումը, առաջին անգամ, կատարել է պարսից արքայից արքայ Դարեհ Ա. Աքեմենեանը։

Այս մասին յիշատակութիւններ ենք գտնում յատկապէս եւրոպական երկու պատմաբանների գործում։

James B. Fraser. «An Hisforical and Deseriptive Account of Persia» *(1833 թ.) աշխատութեան էջ 110-ում կարդում ենք։*

«Իր զէնքերը Արեւելքում աւելի բախտաւոր եղան. և 509 թուին (Քր. ա.) խորհրդանշուեց մի արտակարգ համբաւութեան սկիզբով, իր հրամանով ձեռնարկած Կարիայի ծովագնաց Սկիլաքսի ղեկավարութեամբ։ Մի նաւատորմ սարքաւորուեց Կասպատիրայում, Ինդոսի1) մի քաղաքում, և ձեռնարկու Յոյնը իր նաւերը անցկացրեց գետի վրայ, դիմելով դէպի Արեւմուտք մինչև որ կը հասնէր Պարսկաստան։ Նա կտրեց անցաւ Ծոցը, հասաւ Արաբիայի ամայի հողերին Բաբ-էլ-Մանդէբ նեղուցը, որտեղից ներս մտաւ և երեսուն ամիս նաւարկելուց յետոյ հասաւ Եգիպտոս։ Այս տեղեկութիւնը որ նա հաղորդեց, մղեց Դարեհին ներխուժելու Հնդկաստան, մի մեծ բանակով, և Հընդկաստանի բազմաթիւ նահանգները շուտով դարձան իր կայսրութեան 20-րդ սատրապութիւնը»։

«Liran Antique»-- *էջ 262-ում կարդում ենք.*

«Դարեհը վերջացրեց կամ վերաբացեց այն ջրանցքը, որ Նեղոս գետը հաղորդակցում էր Կարմիր Ծովի հետ, եւ թոյլ էր տալիս նաւերին այնտեղից անցնելու Միջերկրակա-

1) Դարեհը Հնդկաստան էր արշաւել։ Ա. Ա.

նից դէպի Հնդկական ովկիանոս»։

Այո՛, Քրիստոսի ծննդից հինգ դար առաջ, պարսից Դարեհ Ա. Աքեմենեանը առաջին անգամ լինելով բաց էր արել Սուէզի ջրանցքը՝ Միջերկրականը Կարմիր ծովի միջոցով կապելով Հնդկական ովկիանոսի հետ։

Անցեալ դարու 1867 թուին էր միայն, որ ֆրանսացի ճարտարագէտ Ֆերդինանդ Լեսսէպսը բաց արաւ Սուէզի ջրանցքը, որը փակ էր մնացել 2376 տարիներ շարունակ։



ՄԱՆՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ԲԱԼԱՏԵԱՆ

ՆԱԽԱԻՐԱՆԸ

Նախաիրանեան Նախապատմական Շրջան ։

Ռ. Գիրշման հաստատում է, որ յայտնի չէ ո՞ր թուականին իրանցիները մուտք են գործել Իրան և իրենց անունով երկիրը կոչել են Իրան։

Մութ է Նախաիրանեան շրջանը նախ քան մարերի և պարսիկների գալը Իրանի բարձրաւանդակի վրայ։

Իսկ ինչ վերաբերում է Նախապատմական շրջանին, Ռ. Գիրշման ասում է, որ Իրանում կան մարդկային քաղաքակրթութեան հետքեր սկսած Ե. րդ հազարամեակից, Ք. Ա.։

Ե—Զ. հազարամեակին Ք. Ա., կենտրոնական Ասիայից, ասիական այդ տափաստաններից, թափառականներ շարունակ մուտք են գործում Իրան և Նախքան յարձակւելը հարուստ Միջագետքի վրայ, նրանք ճնշում են բնիկներին, որոնք կազմում էին փոքրիկ գիւղական համայնքներ։

Առաջին պատմական աղբիւրներ ։

Ասորեստանի Սալմանասար Գ. թագաւորի տարեգրութեան մէջ, առաջին անգամ յիշւում է 844 թւին, ՓԱՐՍՈՒԱ անը Ուրմիոյ լճի հարաւում — ուր բնակւում էին Պարսիկները, Փարսերը։ Նոյն տարեգրութեան մէջ առաջին անգամ 836 թւին յիշւում են նաև Մարերը, որոնք բնակւում էին Իրանի հիւսիս արևմտեան մասում։

Հիմնւելով այս պատմական տւեալների վրայ, քանի որ Թ. դարու երկրորդ կէսին արդէն իրանցիները հաստատւած են

Իրան։ կարելի է եզրակացնել ըստ Ռ. Գիրշմանի և Քլեման Հիւարթի, որ նրանք մուտք են գործել Իրանի սարահարթի վրայ՝ մօտաւորապէս Ա. հազարամեակի սկիզբներին Ք. Ա.

Մենք նպատակ ունենք այս երկասիրութեան մէջ ուսումնասիրել Իրանի սարահարթը նախքան Իրան կոչուելը և այն բնակիչները, որոնք բնակել են այդ հողամասում, կամ սահմաններում, որ այժմ Իրան է կոչւում։

Նախաիրանը։

Նախքան Իրան կոչուելը, Իրանի սարահարթը որոշուած սահմաններ չունէր։

Տարբեր ցեղերի պատկանող ժողովուրդներ եկան բնակուեցին նրա Զագրոս սարերի վրայ, քաղաքներ շինեցին նրա դաշտերի մէջ և նրա սահմանների վրայ, ուստի չէ կարելի սարահարթի աշխարհագրական և պատմական գիծը ճշտել և նրա սահմանները նշանակել, քանի որ դարերի ընթացքում բազմաթիւ անգամներ և շարունակ փոփոխութեան ենթարկուեցին նրա սահմանները։

Դոքտ. Հ. Սամայի իր L'etat de la civilisation chez l'homme prémedique et des decouvert fortuits (p. 7) գրքում ասում է. «Անհնարին է քաղաքակրթութեան պրպտումներ կատարել հիմնուելով միայն ներկայ Իրանի սահմանների վրայ, որովհետև այն երկրները, որոնք հիմա քաղաքականապէս բաժանուած են Իրանից, հին ժամանակ մաս էին կազմում Իրանին։

Աքեմենեան կայսրութեան սահմանները պատմական ամենաընդարձակածաւալն են եղել, որոնք յետագայում, ուրիշ դարաշրջանում փոխուեցին։

Արշակունեաց Պարթեւների և յետոյ Սասանեանց ժամանակ, Տիզբոնը եղել է Իրանի մայրաքաղաքը։ Իսկ հիմա նա գտնւում է Իրաքում։

Նոյնիսկ մի երկրի աշխարհագրական գիծը, դարերի ընթացքում երկրաբանական զանազան ցնցումների պատճառով, նոյնը չի մնում, ենթարկւում է փոփոխութիւնների։ Օրինակ

համար, ըստ հնէաբանութեան եւ հողաբանականին, Ք. ա. Պար-սից ծոցը ներկայ վիճակը չունէր հաւանաբար։

Նրա հիւսիս-արեւմտեան ջրերը տարածւում, հասնում էին Բաղդադի հիւսիսային կողմից ոչ շատ հեռու տարածու-թեան վրայ. Դարերի ընթացքում Եփրատ և Տիգրիս գետերը իրենց հետ բերած հողերով և տիղմերով, ծածկում են ծովի ջրերը։ Այսպէս էլ կազմւել է նաև Միջագետքը։

Ժ. Քամերոնը իր «Histoire de l'Iran antique» գրքում շեշտում է նոյնպէս, որ մեծապէս նպաստում է Իրանի պատ-մութեան համար իրեն հարեան երկրների և ժողովուրդների պատմութիւնը, տնտեսական, քաղաքական և մշակութային կա-պերի ուսումնասիրութիւնը։

Հետևաբար Իրանի պատմութեան մի փոքրիկ նպաստ բերելու նպատակով, ձեռնարկել ենք ուսումնասիրել Նախի-րանեան պատմական շրջանը։

Ըստ ներկայ բազմաթիւ պատմաբանների կարծիքին, մարդկութեան գոյութեան օրրանը եղել է Միջագետքը։ Իսկ պատմական ամենահին ժողովուրդները, հնութիւնների ապա-ցոյցներով, Սումեր և Աքքադն են։ Այս երկու պատմական երկրներն ու պետութիւններն իրենց համաժամեայ պատմու-թեամբ սերտ քաղաքական, տնտեսական, մշակութային կապեր են ունեցել Իրանի նախաբնակիչների հետ։ Ուստի նախ ու-զում ենք համառօտ խօսել այս երկու ամենահին ժողովուր-դների մասին։

Ըստ երկրաբանների, Քրիստոսից 15·000—10·000 տա-րի առաջ, տեղի է ունենում Առաջաւոր Ասիայում կլիմայա-կան մի մեծ փոփոխութիւն։

Անձրևային հեղեղներին յաջորդում է չոր եղանակի մի ժամանակաշրջան Մերձաւոր Արևելքում 6000 տարի առաջ Քրիստոսից։

Այս ժամանակամիջոցում մարդս դուրս է գալիս քա-րայրներից, թողնում է բարձրաւանդակները և իջնում է հո-վիտների և դաշտերի վրայ, ուր մշակութեան համար հողը պատրաստ էր։

Եփրատ և Տիգրիս գետերի միջև դարերի ընթացքում

գոյացել էր մի դաշտ՝ հողագործութեան համար օգտանշելի մի վայր, որ կոչւեց յետագայում Միջագետք (երկու գետերի միջև)։ Երբ կազմւեց Միջագետքը, այնտեղ յայտնւում են արդէն Դ.րդ հազարամեակին Ք. ա. Սումերները։

Ո՞րն է եղել մեր երկրագնդի վրայ մարդկային բնակութեան առաջին վայրը։

Այստեղ մենք չենք ուզում այս հարցի մանրամասնութիւնների մէջ մտնել, սակայն համառօտ կարող ենք պատասխանել մէջբերելով երկրաբանների երկու կարծիքները։ Հին և երկար տարիների ընդհանուր կարծիքն այն է եղել, որ Միջագետքը հանդիսացել է մարդկային քաղաքակրթութեան օրրանը։ Գիտական և պատմական աւեալներ կան որոնք հիմնւած են հնութիւնների վրայ և հաստատում են այս կարծիքը։ Հնէաբանութիւնը, գտնւած արձանագրութիւնների վրայից և քաղաքակրթութեան զարգացումը հաստատող բազմաթիւ հնութիւններից, եզրակացնում է, որ Քրիստոսից 4 հազար տարի առաջ Միջագետքում գոյութիւն են ունեցել Սումերները, որոնք հաստատւել են Միջագետքի հարաւում, Ստորին Միջագետքում։ Քիշ, Լակաշ, Ուրուք քաղաքներում պեղումների միջոցով գտնւած արձանագրութիւնները, պալատները, դամբարանները և բոլոր հնութիւնները ցոյց են տալիս, որ Սումերների Միջագետքում բնակութեան սկիզբը եղել է 3500-2000թ Ք. ա.։ Արդ, պատմական կերպով չէ կարելի հաստատել, որ մի ուրիշ ժողովուրդ գոյութիւն ունեցած լինի աւելի հին թւականներում քան Սումերները, ուստի, եզրակացնում են այս կարծիքի ընդունողները, թէ Միջագետքն է եղել նաև մարդկային բնակութեան առաջին վայրը։ Երկրաբանների մի ուրիշ խումբ, արդի հնագիտական աւեալների վրայ հիմնւած հաստատում է, որ մարդկային բնակութեան առաջին վայրը եղել է առաջաւոր կամ կենտրոնական Ասիան, առանց սակայն մատնանշելու մի որոշ երկրամաս։ Մենք մի քիչ յետոյ մանրամասնօրէն խօսելու ենք այս կարծիքի մասին, երբ ուսում-

նախիրենք Սումմերների ծագումը։

Սումմերները երբ հաստատւում են Պարսից ծոցի ափերում, համախմբւում են մի շարք քաղաքների շուրջ։ Նշանաւորներն եղել են՝ Ուր, Ուրուք, Լակաշ, Կիշ։ Ամէն մի քաղաք ունէր իր պատ ինքնավարութիւնը. քաղաքապետը կոչւում էր ՓԱԹԵԶԻ։ Այս քաղաքները միշտ մրցակցութեան մէջ էին իրար հետ, որը աւելի էր զօրանում, նա էր, որ իշխում էր ամբողջ Սումմերի վրայ և նաև ամբողջ Միջագետքի վրայ։

Ակկադ եւ Ակկադներ ․

Երբ միջագետքը պատրաստ էր բնակութեան համար, Սումմերների հետ միասին այստեղ խուժեցին նաև Արաբիայ արեւելեան սարահարթից քշւած սեմական խաշնարածներ՝ Ակկադներ։ Այս սեմականները հաստատւում են կենտրոնական Միջագետքում, ներկայ Բաղդադի սահմանագլխի մօտերը։

Երկրաբանները հաստատում են, որ ծովի ջրի բարձրացման հետեւանքով, կործանւել են մեծ մասամբ սեմական հիմնարկութիւնները։ Այս պատահել է շատ հին ժամանակներում և հնէաբանութիւնը գտել է այս աղէտի հետքերը ՈՒՐ քաղաքում։ Սումմերը, այդ դէպքից յետոյ մի առ ժամանակ մնում է ինքնիշխան։ Սակայն Սումմերների Կիշ քաղաքի մօտերը կար «Ակկադ» անունով սեմական մի քաղաք, որի հիմնադիրը կամ վերանորոգողը լինում է Սարգոն Ակկադեան։ Այս քաղաքի անունով սեմականները կոչւեցին Ակկադեաններ և երկիրը՝ Ակկադ։ Սարգոն քաղաքապետը ուժեղանալով, տիրում է ամբողջ Սումմերի և Միջագետքի վրայ և հիմնում է առաջին Ակկադեան կայսրութիւնը 2300 թ. Ք. ա. որ տարածւում էր սկսած Պարսից ծոցից, Քերմանշահի սահմաններից և հասնում էր մինչև Սուրիա, Լիբանան, միջերկրական ծովը։ 300 տարի է տեւում այս կայսրութիւնը։

Սումմերների եւ Ակկադների ծագումը ․

Դժւար է ստոյգ կերպով հաստատել նրանց ծագումը։ Ինչ

վերաբերում է Աքքադներին, մենք տեսանք, որ նրանք սեմականներ են եղել, որ եկել են Արաբիայից: Բայց Սումերների մասին մենք ուզում ենք այստեղ ներկայացնել որոշ պատմագէտների տեսակէտները իրենց յատուկ բերած պատճառաբանութիւններով:

Սումերների ցեղական ծագումը :

Ըստ մարդաբանական քննութիւնների՝ Սումերները պատկանում են ասիական մեծ ժողովրդի խմբին, որին հնագէտ մարդաբանները անուանում են ԱՍԻԱԿԱՆ — Asianique: Ֆելիքս Ֆոն Լուշան՝ գերմանացի յայտնի գիտնականը, որ ուսումնասիրել է Սեմականներին, ասում է, որ «առաջին մարդաբանական տիպը, կամ մերձաւոր Արեւելքի սկզբնական ազգաբնակչութիւնը բաղկացել է Թիապլմերից — «Brun» — որոնք աչքի են ընկնում իրենց կարճ գանգով եւ մեծ քթով: Այդ ազգաբնակչութիւնը անհրաժեշտ է անուանել ԱՍԻԱՆԻԱՑԻՆԵՐ: Նրանք եղել են բնիկ ժողովուրդները մերձաւոր Արեւելքի եւ կազմել են մի ամբողջութիւն իրենց քաղաքակրթութեամբ, մշակոյթով եւ մարդաբանական տիպով: Ուսումնասիրութիւնը պարզել է, որ Արմէնոյիդները տարածուած են եղել ամբողջ Միջագետքում, հարաւից մինչեւ Տիգրիսի եւ Եփրատի ակունքները եւ յետոյ դէպի Փոքր Ասիոյ արեւմտեան մասերը եւ Իրանի բարձրերը:

Ուստի Քոնթրնոս, որ հնէաբանութեան մէջ հեղինակութիւն է, յենուելով իր եւ շատ ականաւոր արեւելագէտների եւ մարդաբանների ուսումնասիրութիւնների վրայ, 1927 թուին իր մէկ աշխատասիրութեան մէջ դասում է ասիական Արմէնոյիդ ժողովուրդների խմբի մէջ Սումերներին եւ նաև այսօրուայ ՀԱՅԵՐԻՆ: Նոյնպէս իր մի ուրիշ աշխատութեան մէջ կարճագանգ ասիականների շարքում դասում է հիթթիթներին, հուրրիթներին, միտանիներին:

Սումմերները ո՞րտեղից են գաղթել ու հաստատուել միջագետք ։

Ն. Ադոնցի ասութեան համաձայն, նախ քան Սեմականների գաղթը Արաբիայից Միջագետք և այդտեղ բնակութիւն հաստատելը, Հայաստանը և Փոքր Ասիան բնակւած են եղել արիական ցեղով։

Հիմնւելով արեւելագիտութեան և հեթագիտութեան ժամանակակից մարդաբանական, լեզւագիտական և հնագիտական տւեալների վրայ, հնագիտական լուրջ ուսումնասիրութիւնները ապացուցում են, որ Սումմերները գաղթել են ոչ թէ Ասիայ սարահարթներից, այլ ըստ Ժագ Դը Մորգանի՝ Հայաստանի լեռներից և բարձրադիր Ատրպատականից։

Բնական է թւում մեզ այս գաղթը, որովհետև Արմէնոյիդների բնակավայրը եղել է Մերձաւոր Արեւելքը և մասնաւորապէս հայկական լեռնաշխարհը։

Ջէյմս Բրեսթըդ, հեղինակաւոր գիտնականը, ասում է, երբ քարի շրջանից կատարւում է անցքը սառցային շրջանին ըստ Աստւածաշնչի, երբ ջրերը քաշւեցին Միջագետքից, մօտ 4000 թ. Ք. ա., Սումմերները հայկական լեռնաշխարհից իջնելով գնացին տեղաւորւելու Միջագետքի արգաւանդ դաշտում։ Նոյն տեսակէտն ունի նաև ամերիկացի մարդաբան Ռոլանդ Դիքսընը։ Պրոֆ. Ավդի նոյնպէս հաստատում է, թէ Դ. րդ հազարամեակին Միջագետքում ծագում է առնում հնագոյն դասակարգային պետութիւնը։

Արիական ցեղի խմբին են պատկանում ուրեմն Սումմերները, Հիթթիթները, Ուրարտացիները, Զակրոսի բնակիչները, Կութիները, Լուլլուբիները, Հուրիթները, Քասիթները և այլն։

Արմէնոյիդ ցեղի գիւտը արել է անցեալ դարու վերջերում Ֆ. Վոն Լուշան E. Von Luschan որ կարճագանգ թուխերը, երկար դէմքով, տափակ ենթագանգով և ընդհանրապէս մեծ քթով, համարել է շատ հին ժամանակներից սկսած Առաջաւոր Ասիայ առաջին և գլխաւոր բնակիչները։ Այս Արմէնոյիդների հետ կապում է նա սումմերների հին քաղաքակրթութիւնը։

Սումմերեան Քաղաքակրթութիւն։

Սումմերները իմանում էին գործածել պղինձը, անագապղինձը, ոսկին, արծաթը։ Իմանում էին աղիւսից տներ շինել։ Գործածում էին կնիքներ, նրանք զարգացրել էին սագումի ձեւը։ Մետաղների եւ քարերի համար փոխանակականական շփում ունէին Կասպից ծովի, Միջերկրականի եւ Ինդոսի հետ։ Ամենահին եւ առաջին ժողովուրդն է եղել Սումմերի ժողովուրդը, որ հնարել է նշանագրեր իր լեզուի համար։ Այդ նշանագրերը եղել են բեւեռագիր տառեր, որոնք որպէս հիմք են ծառայել յետագայում բոլոր միւս լեզուների բեւեռագիր նշանագրերի։ Ուրուք քաղաքում գտնուեցին Սումմերեան արձանագրութեանց առաջին բեւեռագիր գրատախտակները։

Սումմերեան քաղաքակրթութիւնը ունեցաւ իր վերածնութեան շրջանը երբ Գ-րդ Հազարամեակի վերջում Փ. Ա. Լակաշ քաղաքի քաղաքապետը՝ Գուտէա՝ իշխեց Սումմեր-Աքքադի վրայ։ Այս շրջանը Նոր Սումմերեան շրջան է կոչւում։ Այս ժամանակամիջոցում է, որ նոր թռիչք առաւ Սումմերեան մտքի եւ գեղարուեստի բոլոր արտայայտութիւնները։ Լուվրի թանգարանում գտնւում են Գուտէայի 15 արձանները երկար Սումմերեան բեւեռագիր արձանագրութեամբ։

Նոր Սումմերեան շրջանում, Աքքադեան լեզուի փոխարէն գործածուեց Սումմերեան լեզուն, որ պաշտօնական դարձաւ եւ բեւեռագիր նշանագրերը սկսեցին Սումմերեան լեզուով գրել Աքքադերէնի փոխարէն։

Թէեւ Սումմերը եւ Աքքադը միացած են եղել իրար հետ մանաւանդ Սարգոնի կայսրութեան ժամանակ, սակայն Աքքադը մնացել է միշտ սեմական. իսկ Սումմերը, որ ծագումով ասիական Արմէնոյիդ էր, դարերի ընթացքում կրելէ շրջապատի սեմական ազդեցութիւնը եւ վերջում ձուլուել է սեմականների մէջ։

Աքքադը պահելով իր ինքնուրոյնութիւնը ապրեց անջատ եւ յետագային կոչուեց Բաբելոն։

Հնէաբանութիւնը գտել է բեւեռագիր նշանագրեր, Աք-

կադերէն լեզուով, 2400 թուից Ք. ա.։ Ասւում է, որ նախ քան Սումերների Միջագետք հաստատուելը, Ակկադերէնը եղել է խօսակցական լեզու։ Ոմանք, Ակկադերէն լեզուի նշանագրերի գիւտը գնում են 3400 թուին Ք. ա.։ Ամէն պարագայում, Ակկադերէնը սեմական ամենահին լեզուն է և սեմականների քաղաքական նուաճումների համաձայն, Ակկադերէնն էլ տարածուել է։ Մենք առաջին խօսելու ենք Ակկադերէն լեզուի մասին՝ մեր ուսումնասիրութեան հին լեզուների բաժնի մէջ։

Նախիրանի բնակիչները·

Նախքան իրանցիների գալուստը և հաստատուելը այն երկրամասի վրայ, որ այժմ Իրան է կոչւում, այդտեղ եղել են ուրիշ բնակիչներ։ Մենք պատմական աղբիւրների վրայ հիմնուած համառօտ կերպով ուզում ենք նրանց յիշել հետեւելով պատմական ժողովուրդների հետքերին։ Ուստի պարտաւոր ենք նախ սկսել Սումեր — Ակկադիներից, որոնք Միջագետքի ամենահին պատմական ժողովուրդներն են եղել։

Սումերը

Հիմնուելով պեղումներից գտնուած հնութիւնների վրայ, պատմաբանները երկու շրջանի են բաժնում Սումերի քաղաքակրթութիւնը։ Հին Շրջան և Նոր Շրջան։

1· Սումերի քաղաքակրթութեան Հին Շրջանը կամ Նախա-Սարգոնեան շրջան·

Սումերի այս հին շրջանը իր մէջ ամփոփում է երկու դարաշրջաններ. մէկը սկզբից մինչև սումերեան նշանագրերի յայտնութիւնը·

Եւ միւսը՝ Հին դինաստիական շրջան փոխարքաների կամ քաղաքապետների։ Այս երկու շրջաններն էլ մենք մի ընդհանուր անուան ներքոյ ուզում ենք յիշել և անուանել «Նախասարգոնեան Շրջան»։

(Շարունակելի)

ԻՐԱՆ...

Իրա՜ն, չարաստղ նստած,
Յաղթական, գեղանի աղջիկ,
Բարեպաշտ, խոհուն,
Աչքերդ վճիտ՝ լոյսն է սփռւած
Ժողովրդիդ մէջ՝ բարեմտութեան.
Փայլը շրթերիդ՝ առատութիւնն է
Արեւոտ երկրիդ հիւրընկալութեան,
Եւ շողն աչքերիդ լուսամտութեան
Կանթեղն է այն հին,
Որ պապերից - պապ,
Սրտից - սիրտ անցել, այդ քեզ է հասել,
Եւ լուսապայծառ արեւ է դարձել.
Դու խոհեմ, ժպտուն, քնքոյշ մի աղջիկ,
Շրթերիդ վրայ երգն է անպակաս
Քո հազարամեայ մեծ պոետների,
Սիրտդ կայանն է գործարաններիդ՝
Անքուն ու աննինջ մեծ աշխատանքի,
Եւ երակներիդ գիտութեան լոյսի
Եւ մշակոյթի
Փոխադրալարերն են՝ լեզւից մտքին,
Մտքից՝ գրքերին՝
Եւ մշտապտոյտ հողագնդի պէս
Անթիւ գրքերից՝ մարդկանց մտքերին.

Իրա՜ն, չարաստղ նստած
Գեղանի՛ աղջիկ,
Դու չգոհացող փոքր յաղթանակով,
Դու գիտութեան ցածր մարզերից
Երկինք սլացող,
Առաքինութեամբ, լուսամտութեամբ

Դու չպարծեցող, խոհուն, լուռ աղջիկ՝
Յաղթական ու վեհ.
Վառման տենչերից, լուսեղ ու տողուն
Նպատակներից փափագը սրտումդ,
Վաղուայ յոյսերով դու կանգուն, հպարտ,
Աչագե՛դ Իրան.

ՌՈՒՄԱ ԳԱՌՕՆԵ

ԵՐԵՔ ԵՐԳ ԻՐԱՆԻՆ

1.

Ո՛վ դու Իրան, արևատող,
Պայծառատես իմ երկիր,
Դարերի լոյսը վկայող,
Դու դարաւոր թագակիր.

Մեծ Կիւրոսի լուսեղ մտքով
Ցօղուած չնաղ իմ փերի,
Իմաստութեան ծփուն դու ծով,
Դու օրրանը դարերի.

Դար է եկել ու դար անցել,
Միշտ ծաղկուն է քո այգին,
Արևի հետ է խաղացել
Ոսկեճաճանչ քո հոգին.

Աքեմենեան արքաներից
Մինչ Փահլաւիքն իմաստուն՝
Լոյս ես խլել դու աստղերից,
Տիեզերքից՝ գիտութիւն.

Դու դիցազներ ծնող երկիր,
Ազատատենչ ու արդար,
Սահմաններդ լայն ու անծիր,
Սեղանդ լի, հիւրընկալ։

Ո՛վ դու Իրան, երգի, խոհի,
Խաղաղատենչ իմ երկիր,
Մայրը՝ Արիամեհր արքայի,
Գոհարազարդ թագակիր.

2.

Ես ժպտում եմ քո բախտով,
Քո վերելքի մեծ փառքով
Հիանում, ո՛վ Իրան,
Ու ողջունում բերկրանքով
Շեմս - արևդ հոգեպով,
Որ բազմել է քո գահն.

Դու երէկուայ իմ երկիր,
Անճանաչ ես դու հիմա
Ու ջահել...
Քեզ կախարդել են այսօր՝
Իմաստութեամբ մի հզօր
Հմայել...

Հրահրել են քո հոգում
Նո՛ր, լուսեղէն տենչերի
Վառ կրակ,
Աստուածային խորհրդով
Պահել են քեզ վերուց՝
Արևելքի վառ ճրագ։

3.

Վե՛ր կաց Խայեա՛մ, գինի խմենք ես ու դու,
Իրանի վարդաստանները ծաղկել են կրկին,
Վարդ-Շիրազին բոյր է սփռել ամեն դին,
Վե՛ր կաց Խայեա՛մ, գինի խմենք ես ու դու...

Վառ բաժակս քո բաժակին թող զարկեմ,
Խմենք, տակի մրուրն‿իսկ թող չը մնայ,
Կեանքն էլ ոչ քեզ՝ եւ ոչ մէկին կը մնայ,
Վե՛ր, բաժակս քո բաժակին թող զարկեմ,

Խայեա՛մ, գինին յաղթեց թանին թթուահամ,
Սաղին դարձաւ իր բերկրանքից խելագար,
Գինեձօնի արեւալոյս է, ե՛լ Խայեամ,
Մեր երկիրն այն չէ, ինչ որ առաջ կար։

Թաւիշ մարգերն անուշաբոյր ծաղկունքով
Նոր բոյր կը տան բանաստեղծի քո հոգուն,
Հեզ պարսկուհու գեղ ու թովիչ հայեացքով
Կըզգայ սիրտդ նո՛ր կեանք, նո՛ր սէր ու խնդում...

Դու կը լսես ուրախ երգեր քաղցրալուր՝
Նման ձայնին քո սիրասուն առուակի,
Պոէտները դու կը տեսնես ամենուր,
Մեծ Իրանի արշալոյսի ու փառքի...

Վե՛ր կաց Խայեա՛մ, գինի խմենք ես ու դու
Յաղթ Իրանի այս մեծ օրին վարդագոյն,
Խնդութեամբ լի բաժակ զարնենք իրարու,
Նոր Իրանի փառքը երգենք ես ու դու։

ԱՐԱՄ ԳԱՐՕՆԷ

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ՝ ԱՌԱՋԻՆ ԱՔԵՄԵՆԵԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԻ

(Ըստ Մ. Ա. Դանդամաեւի։ Ակադեմական հրատարակութիւն։ 1963 թ. Մոսկուա)

Մօտ 612 թուին Քր. առաջ Պարսումաշի թագաւոր Կիւրոս I իր որդուն նուէրներով ուղարկում է Ասորեստանի Աշուրբանիպալ թագաւորի մօտ։

558—530 Կիւրոս II։

550 Մեդիայի ենթարկումը պարսիկների կողմից։

546 Լիդիայի նուաճումը։

539 թուի Հոկտեմբեր 10-ին Սիփփարայի գրաւումը պարսիկ զօրքի կողմից։

539 թուի Հոկտեմբեր 12-ին Բաբելոնի գրաւումը պարսիկների կողմից։

539 թուի Հոկտեմբեր 29-ին Կիւրոս II-ի մուտքը Բաբելոն։

530 թ. Յուլիս, պարսիկների արշաւանքը Մասսագետների դէմ և Կիւրոս II-ի մահը։

530 թ. Օգոստոսից 522 Յուլիս՝ Կամբիզ II.

525 թ. Մայիս. պարսիկները նուաճում են Եգիպտոսը։

522 թ. Մարտ 11. Բարդիայի (Գաումաթա) յեղաշրջումը։

522 թ. Յուլիս 1. Բարդիայի (Գաումաթա) ճանաչելը իբրև Աքեմենեան ամբողջ պետութեան թագաւոր։

522 թ. Սեպտեմբեր 29. Դարեհ I գրաւում է իշխանութիւնը։

522 թ. Հոկտեմբեր 3. Նաբուգոդոնոսոր III-ի (Նիդինթ Բէլ) ապստամբութիւնը։

522 թ. Դեկտեմբեր 10. Բակտրիայի սատրապ Դադար-

չէսի 1) յաղթանակը ապստամբ մարգիանացինե-րի դէմ։

522 թ. Դեկտեմբեր 13· Դարեհ I-ի յաղթանակը Նաբուգոդոնոսոր III-ի դէմ՝ Տիգրիս գետի մօտ։

522 թ. Դեկտեմբեր 18· Դարեհ I-ի յաղթանակը Նաբուգոդոնոսոր III-ի դէմ Եփրատ գետի մօտ, Զազանա աւանում։

522 թ. Դեկտեմբեր 29· Արախոզիայի սատրապ Վիվանի առաջին յաղթանակը Վահեազդատի զօրքերի դէմ։

522 թ. Դեկտեմբեր 31 Դարեհ I-ի զօրավար Վաումիսի յաղթանակը հայերի դէմ Իզալա վայրում։

521 թ. Յունուար 12 Դարեհ I-ի զօրավար Վիդարնայի յաղթանակը մեդացիների դէմ։

521 թ. Փետրուար 21 Արախոզիայի սատրապ Վիվանի երկրորդ յաղթանակը Վահեազդատի զօրքերի դէմ։

521 թ. Մարտ 8· Դարեհ I-ի հայր Վշտասպի առաջին յաղթանակը Պարթեւների և Հիրկանացիների դէմ։

521 թ. Մարտ Արախոզիայի սատրապ Վիվանի վերջնական յաղթանակը Վահեազդատի զօրքերի դէմ։

521 թ. Մայիս 7 Դարեհ I-ի յաղթանակը Ֆրաւարտիշի միջոցով ապստամբած մեդիացիների դէմ։

521 թ. Մայիս 21 Դարեհ I-ի զօրավար Դադարշէսի յաղթանակը ապստամբած հայերի դէմ՝ Զուզախիա վայրում։

521 թ. Մայիս 25 Դարեհ I-ի զօրավար Արտաւարդի առաջին յաղթանակը Վահեազդատի զօրքերի դէմ։

521 թ. Մայիս 31 Դադարշէսի յաղթանակը ապստամբած հայերի դէմ՝ Տիգրիս գետի մօտ։

521 թ. Յունիս Դարեհ I-ի զօրավար Թահմասպատի յաղթանակը ապստամբած հայերի դէմ Աուտիարա վայրում։

521 թ. Յունիս 21· Դադարշէսի յաղթանակը հայերի դէմ՝ Ուեամա յեռան մօտ։

1) Դադարշէսը ազգով հայ էր։

521 թ. Յուլիս 12 Վշտասպի վերջնական յաղթանակը ապստամբած Պարթևների և Հիրկանացիների դէմ։

521 թ. Յուլիս 16 Արտաւարդի վերջնական յաղթանակը Վահեազդատի զօրքերի դէմ Պարգա լեռան մօտ Պարսկաստանում։

521 թ. Օգոստոս Նաբուգոդոնոսոր IV-ի (Արախա[1]) ապստամբութիւնը Բաբելոնում։

521 թ. Նոյեմբեր 27 Դարեհ I-ի զօրավար Վինդաֆարնան գերի է բռնում Նաբուգոդոնոսոր IV-ին։

520 թ. Պարսից տիրապետութեան դէմ Էլամի երրորդ ապստամբութեան ճնշումը Էլամում։

519 Դարեհ I-ի արշաւանքը սկիւթական Տիգրախաուդ ցեղի դէմ մօտ 518 թուին։ Դարեհ I-ի վարչա-ելեւմտական բարենորոգումները1)։

Ռուսերէնից թարգմ. Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

1) Ծանօթութիւն.— Այս «Ժամանակագրական ցանկ»-ի աղբիւրներն են՝ Hinz, Zur Behistun-inschrift des Dareos»-ZDMG, 1942,S 326 ff.: R. Parker and W. Dubberstein. «Babylonian chronology 626 B. C.—A. D. 75, Providence 1956 A. Poebel. «Chronology of Darius first year of reign» —A. J. S. L. vol. 55, 1938, pp. 142 ff.

Դարեհ I-ի (521-486) յաջորդները

Քսերքսէս (Խշայարշա), որ յաջորդեց Դարեհ I-ին, թագաւորեց 486—465 թ.

Արտաշէս երկայնաբազուկ (Արտաշիր Դրազդաստ) 465-424 թ.

Դարեհ II հարճորդի — 423—404 թ.

[1] «Արախա»ն ազգով հայ էր։ Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

Արտաշէս Մնեմոն 1) — 404—358 Թ.
Արտաշէս Ովքոս — 358—337 Թ.
Դարեհ III Կոդոմանոս — 337 — 334 Թ.

Այս Դարեհ III Կոդոմանոսը պարտութիւն կրեց Աղեքսանդր Մակեդոնացուէն և եղաւ Աքեմենեան հարստութեան վերջին արքան։

Ուրեմն պարսից Աքեմենեան (Հախամանեշեան) հարստութիւնը տևել է 558 Թ. (Ք. ա.) մինչև 334 Թիւը (Ք. ա.), ընդամենը՝ 224 տարի։

1) Այս Արտաշէսը (Արտաշիր) յայտնի էր իր արտակարգ յիշողութեամբ, ուստի կոչեցին *Մնեմոն*։ Հին հայերը Արտաշէսին կոչում էին՝ ուշեղ, այսինքն սուր յիշողութիւն ունեցող։ Ա. ԱՄՐՈՒՐԵԱՆ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՇԱՀ ԱԲԲԱՍ ՄԵԾԻ ԿԱՐԾԻՔԸ

ՀԻՆ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Թանգարանում գտնւում են թւով 24 հատ արքայական հրովարտակներ, որոնք պատմական խոշոր նշանակութիւն ունեն՝ հայ ժողովրդի հանդէպ Իրանի արքաների անցեալում ունեցած ջերմ վերաբերմունքները հաստատելու խնդրում:

Այս հրովարտակները (ֆարմաններ – հրամանագրեր), ամէն մէկը մի երաշխիք է հայ ժողովրդի օրինապահ քաղաքացի լինելը ցոյց տալու եւ պետութեան կողմից հայ ժողովրդի հաւասար իրաւունքը ճանաչւած լինելու մէջ:

Հայերի Սպահան գալուց յետոյ տրւած առաջին հրովարտակը պատկանում է Շահ Աբբաս Մեծին: Արժէ որ մի անգամ եւս անդրադառնանք այդ հրովարտակին եւ որոշ մէջբերումներով պարզենք նրա մէջ եղած մի քանի կարեւոր հաստատումները:

Շահ Աբբասն իր այս հրամանագրով, որ վերաբերում է հայ նորեկ ժողովրդին եւ Սպահանի արւարձանում գտնւող մի գիւղի գիւղացիների հետ ունեցած վէճին, իր մէջ մէկից աւելի խնդիրներ է շօշափում:

Դրանցից առաջինն, ըստ Մեծ արքայի վկայութեան, այն է, որ հին Ջուղայի ժողովուրդը եղել է հարուստ, վաճառականական ասպարէզում յայտնի ու ձեռներէց եւ բարւոք ապրելու ճամբան գտած ու կեանքում յաջողած մի ժողովուրդ:

Այս մասին լսենք հրովարտակի կարծիքը.

«Մի ժողովուրդ, որ ի պատիւ մեզ, լքել է իր հա-

զարամեայ հայրենիքը եւ խարաւաններով ոսկին ու մետաքսը թողած՝ ձեր տունն է եկել...

Տե՞ղ ունի.... որ նրանց հետ կռուէք»։

Ընդգծած «Խարաւաններով ոսկին ու մետաքսը» նախադասութիւնը, ինքնին մի պերճախօս հաստատում է, որ կարիք չունի այլեւս լայն բացատրութեան։

Երկրորդ վկայութիւնը վերաբերում է հին Ջուղայի տներին, որոնք, այն օրերի հասկացողութեամբ, եղել են ճոխ ու փառաւոր եւ արժանի արքայի ուշադրութեան։

Այս մասին կրկին խօսքը տանք հրամանագրին։

«Ջուղայում տներ կային, որոնց վրայ երկու հազար թուման էին ծախսել»....

Ընդգծած նախադասութիւնը գրական այնպիսի վկայութիւն է տալիս, որ շատ աւելին է քան լոկ մի խօսք, սրանով հաստատում է, որ հին Ջուղայում, սրանից 400 տարի առաջ եղել են կառուցած այնպիսի տներ ու ապարանքներ, որ այն օրերում իւրաքանչիւրը, մի մեծ ու երկրների տէր արքայի աչքում, հարուստ ու փառաւոր են թուացել։

Հրովարտակի միւս կարեւոր կէտերից է Արքայի այն ջերմ վերաբերմունքը, որ տածում է դէպի գաղթական ժողովուրդը, այդպէս հրամայելով Սպահանի Նահանգապետին.

«Ինչնէ եւ ամեն կերպ Ջուղայեցիների սիրտն առ եւ այնպէս արա, որ մխիթարուած ու գոհ մնան..... Ինչքան որ պետական կալուածներում տեղ լինի՝ նրանց յատկացրէք ..... Մինչեւ որ բարձրեալն Աստծու յոյսով, ապագայում իրենց համար տներ կառուցեն....։1)

Արդարեւ Ջուղայեցիները հազիւ իրենց ոտքի տակի հողն ամրացուած տեսնելով, հայ ժողովրդին յատուկ շինարա-

1) Լրիւ հրովարտակը, պարսկերէնով, տպուել «Հոնար վա Մարդոմ» ամսագիրը 1348 Մեհր ամսի էջ 16, իսկ հայերենի լրիւ թարգմանութիւնը «Նոր Ջուղայի թանգարանը» գրքոյկում,

Նոր Ջուղա 1968 թ. էջ 32։

րութեան ձգտումով, կրկին լծուեցին իրենց հայրերի օրինակին և սկսեցին առևտրական ու վաճառականական արհեստն ընդարձակել և կարճ ժամանակում հսկայ հարստութիւն ու ոսկի դիզելով, իրենց նոր բնակավայրում ևս մեծ ու փառաւոր տներ կառուցել և շքեղազարդ եկեղեցիներ հիմնել, որոնք այսօր իսկ, դարեր անցնելուց յետոյ, հիացմունք են պատճառում բոլոր այցելուներին։

Ջուղայում այժմ ևս կան այդ գեղեցիկ նկարազարդ տներից, որոնց աւելի հանգամանօրէն անդրադառնալու ենք մի այլ յօդուածով։

Նոր Ջուղա
10 Յունիս 1971 թ.

Է. Ս. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՆՇԽԱՐՆԵՐ ԻՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻՑ

Քսանհինգ երկար ու ձիգ դարերի հակառակ պահւած է մի շարք Իրանցի և Հայ գիտնականների, գրողների և իմաստասէրների լուսեղ անուններով. այդ համատեղութեան մէջ առաջնակարգ տեղ են գրաւում Անկեղարի մեծ մտածողները Հայաստանում, Ջոնդի Շահփուրի գիտնականները՝ Իրանում: Ու երբ աւելի ենք խորանում երկու երկրների մշակութային պատմութեան մէջ, մեծ հաճոյքով հանդիպում ենք համաշխարհային հռչակ վայելող դէմքերի, յանձինս Աբու Ալի Սինայի, Մխիթար Հերացու, Բիրունիի և Շիրակացու, Հաֆէզի և Նարեկացու, որոք բոլորն էլ անհասանելի գագաթներ են:

Անժխտելի և փաստւած իրողութիւն է, որ ժամանակն ու ժողովրդի գոյավիճակն են գիտունին ու իմաստասէրին գոյութեան կոչում և այդ մաքուր ու առաքինի հոգիները կարողանում են զգալ ու ըմբռնել ժամանակի շունչն ու էութիւնը և դառնալ նրա ուսուցիչը, գիտունը և մարգարէն:

Հայ և Իրանցի ժողովուրդների բանահիւսական, գրական և գիտական փոխյարաբերութիւնները գալիս են դարերի խորքից. դրանք նոյնքան հին են, որքան երկու արիւնակից ժողովուրդները, նրանց բազմահարուստ պատմութիւնը, նրանց զարգացած մշակոյթը:

Մեր ուշիմ ժողովուրդը ասում է...., Մեծ լեռնագագաթները հեռուից են երևում»... Եւ ահա Հայ-Իրանական գիտական յարաբերութիւնները ուսումնասիրելիս մենք դէմ յանդիման ենք կանգնում մի քանի անհաս գագաթների, որոնցից հետու

ենք այսօր մի քանի դար… ու որքան ալ մեծ գաղափարները հեռուից երեւան ամբողջական ու վեհ, նոյէն իրենց ամբողջ հարստութիւնն ու գանձերը կը նուիրեն միայն նրանց, ովքեր մօտիկից կը ծանօթանան այդ շքեղ մարդկանց թողած արժէքաւոր ժառանգութիւնների հետ, և մենք այսօր ուխտաւորի երկիւղածութեամբ գրում ենք այդ անմահների մասին, որոնք հիմք են դրել Հայկական և Իրանական գրական գիտական փոխյարաբերութիւնների անքակտելի կապերի։

Իրանի կայսրութեան հիմնադրութեան 2500 ամեակի առթիւ մտադիր ենք մեր սիրելի ընթերցողներին ծանօթացնել մի շարք դէպքերի և անձնաւորութիւնների հետ, որոնք հիւսել են մի շքեղ ու ոսկէ պատմութիւն։

Հայ և Իրանցի գիտնականներն ու իմաստասէրները հիմք են դրել ՎԱՂ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ հսկայ շարժման, որից դարեր յետոյ միայն հնարաւոր եղաւ մարդկութեան հասնելու ԻՐԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ։

Հայկական գիրն ու գրականութիւնը, իր խանձարուրի օրերից սկսած, սերտ շփման մէջ է եղել ժամանակի ժողովուրդների՝ «իրանցիների, յոյների, հռոմէացիների և ասորիների» մշակոյթի հետ, նրանցից շատ բան է փոխ առել և շատ բան սովորել, սակայն ոչ մի դէպքում էլ չի կորցրել իր ազգային կերպարանքն ու ինքնուրոյնութիւնը, այլ ընդհակառակը կատարելագործել է, զարգացել է, մի հանգամանք, որ անտարակոյս նրա ուժի ու դիմագրականութեան աղբիւրներից մէկն է եղել։

Հայկական գրերը գտնուելուց առաջ, Հայաստանի պետական ու հասարակական կեանքում յունական գրերին զուգահեռ օգտագործել է պարսկերէն այբուբենը, այդ առթիւ վկայ բերենք մեր պատմահայր Խորենացուն, որ այսպէս է գրել։

«Դտանին գիր…գիր պարսից և յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, եւ և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ դրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն»։

Գիտական ուսումնասիրութիւնները ապացուցել են, որ Արտաշէս Ա. ի գահակալութեան տարիներում գործածութեան մէջ են եղել արամէական գրերը, որոնք երկար դարեր կիրառուել են նաև Իրանում։

Դեռևս հնագոյն շրջանում հայ ժողովուրդը աչքի է ընկել մշակոյթի բաւական բարձր մակարդակով։ Հողագործութեան և անասնապահութեան կողքին մեծ դեր էին խաղում տարբեր արհեստները։ Օրացոյցի ստեղծումը, աստղագիտութեան ասպարիզում ձեռք բերուած գիտելիքները վկայում են գիտութեան զարգացման մասին։

Հնադարեան Իրանում գոյութիւն ունեցող Զրադաշտի և Մազդեզնայի վարդապետութիւնները շատ աւելի խորն ու հիմնաւոր են եղել քան Յունաստանի բժշկական ուսմունքները։ Մազդեզնայի դպրոցը Զրադաշտի անմիջական ղեկավարութեամբ է գոյութեան կոչւում։ Նա Ատրպատականում հիւանդութիւնների մասին դասեր է տուել իր հետևորդներին։ Հիմնականում մենք Մազդէզնայի վարդապետութեան մէջ նկատում ենք, որ առաջին անգամը լինելով մարդկային պատմութեան մէջ, Զրադաշտի օրերին բժշկութիւնը և բժիշկ բառը անջատւում է սնոտիապաշտութիւնից և սա Իրանի գիտութեան պատմութեան մէջ մի խոշոր անկիւնադարձ է։

Այդ դպրոցի վարդապետութեան գլխաւոր հիմքը ՄԱՔՐՈՒԹԻՒՆՆ էր, ջրի, հողի, հագուստի և ուտելիքի մաքրութիւն, որը հիմնաքարն է մարդկային ընդհանուր առողջապահութեան։

Հնադարեան Իրանի մի ուրիշ բժշկական դպրոցը Էկբատանն էր, որը հարիւր տարի Զրադաշտից յետոյ իր աշակերտներից մէկի՝ Սամնա Փուր Անուամաթութիի կողմից է հիմնւում։ Պլուտարքը յիշատակել է, որ այդ դպրոցում ուսուցւում էր աստղագիտութիւն, բժշկութիւն և աշխարհագրութիւն։

Սակայն նոյն դարերում, Յունաստանում որևէ փաստ չի գտնուել, որ իրանցիների չափ գիտելիքներ ունեցած լինեն... այնպէս է թւում, թէ՛ յունական և թէ՛ եգիպտական դպրոցները մեծ ազդեցութիւն են կրել Իրանի վերոյիշեալ երկու բժշկական դպրոցներից։

Հայաստանում բժշկական մշակոյթը սկսել է զարգանալ տակաւին մեր թուարկութիւնից դարեր առաջ, անտիկ աշխարհում, իրանական, յունահռոմէական երկրներում բարգաւաճող մշակոյթների փոխազդեցութիւնների ոլորտում, այս մասին պրոֆեսոր Լեւոն Յովհաննիսեանը հետեւեալ փաստերն է բերել իր «Հայ Բժշկութեան Պատմութիւն» հսկայածաւալ ու եզակի աշխատութեան մէջ։

«ա. Մեր թուարկութիւնից առաջ Հայաստանում գոյութիւն է ունեցել դեղագործական այգի, որտեղ աճեցւել են զանազան դեղաբոյսեր, որոնք ուսումնասիրւել են Պլինիոս Աւագի կողմից։

«բ. Նոյնոյն ժամանակներից ի վեր Հայաստանում պատրաստւող մի շարք դեղանիւթեր՝ Հայկական կաւ «Բոլուս Արմէնիա», Կապոյտ քար «Փեթրա Արմէնիա», Հայկական Բորակ «Նուշադիր, որը կոչւել է Արմէնիակ» այսինքն ամմանիում, որդանկարմիր՝ ըստ Պլինիոսի Աւագ ֆէթիքա են, զանազան հիւանդութիւնների բուժման մէջ իրենց ցուցաբերած դրական ներգործութեան շնորհիւ արտահանւում էին արտաքին շուկայ։

«գ. Սկսած երրորդ դարից (260) Հայաստանում գործել է բուրաստանոց, իսկ Կեսարիայում և Սեբաստիայում «Փոքր Հայքում» դեռեւս չորրորդ դարում հիւանդանոցներ կային, որոնք ունէին ներքին, վիրաբուժական և վարակիչ հիւանդների առանձին բաժանմունքներ, նաեւ բժշկական անձնակազմ»։

Մենք ակամայից մի քիչ աւելի խորացանք երկու հարեան երկրների բժշկական գիտութեան վրայ, հաստատելու համար, որ նախքան հինգերորդ դարը, թէ՛ Իրանում և թէ՛ Հայաստանում գիտութիւնը զարգացած է եղել և թէ Մեսրոպեան վարդապետութիւնը և թէ Ջոնդի Շահփուրի դպրոցը գաւառի միջավայրերի արդասիք չեն եղել։ Այսօր բոլորի համար պարզ է, որ գիտութիւնը երբէք հոգեկան, ընկերային դատարկութեան մէջ չի կարող զարգանալ, նա վստահօրէն իր ազդեցութիւնն է առնում իր շրջապատից, ազգից ու ժողովրդից։

ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. «Հայոց Պատմութիւն», Մ. Խորենացի։
2. «Հայ Բժշկութեան Պատմութիւն», Պրոֆ. Լ. Յովհաննիսեան։
3. «Իրանի Մշակութի Պատմութիւն», Մորթէզա Ռավանդի։
4. «Իրանի բժշկութեան Պատմութիւն», Դր. Նաջմ Աբադի։
5. «Բժշկութեան Պատմութիւն», Է. Ս. Ն. (անտիպ)։

Հեղինակ՝ ՓԻԵՐ ԺՈՒԲԵՐ

Փոխադրեց՝ ԴՐ. ՀՐԱՉ ԲԺՇԿԵԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՐԱՆ

Վերը յիշուած գրքի հեղինակ՝ Փիեր Ամետէ Էմիլիեն Փրոբ Ժուբերը ծնուել է 1779 թւին Էքս-ան-Փրովանս քաղաքում և մահացել Փարիզում 1847 թւի Յունուար 27-ին։ Նա պատկանում էր Ֆրանսիայի ընտրանի մտաւորականութեան այն փաղանգին, որոնք Սիլուեստր դը Սասի խելացի ղեկավարութեամբ 19-րդ դարու սկզբին Ֆրանսիան դարձրին արեւելագիտութեան ամենամեծ կենտրոնը։

1805 թուականին Փիեր Ժուբերը Նապոլէոն Բոնապարտի կողմից գործուղուեց Իրան՝ Ֆաթալիշահ արքայի պալատը, որպէսզի ուսումնասիրէ բոլոր այն միջոցները որոնք պիտի ստեղծէին պայմաններ, որով Իրանը պիտի կիրառէր հակաանգլիական քաղաքականութիւն։ Այս նպատակի համար նա ճամբորդեց Կ. Պոլիս—Տրապիզոն, Էրզրում—Բայազէդ—Վան Խոյ—Մարանդ—Թաւրիզ—Արդաբիլ—Խալխալ—Սուլթանիէ—Աբհար—Ղազուին և Յունիս 5-ին հասաւ Թեհրան։

Իր արկածալից և վտանգաւոր այս ճամբորդութիւնը, ինչպէս նաև վերադարձը Ֆրանսիա որպէս իրական ականատես նկարագրել է Ճամբորդութիւն Հայաստանում և Իրանում անուան գրքի մէջ։

«ՀԱՒՐ» ամսագրի այս թւով սկսում ենք հրատարակել Փիեր Ամետէ Ժուբերի այս աշխատութիւնը, որը թարգմանել է ամսագրիս երիտասարդ աշխատակիցներից Դոքտ. Հրաչ Բժշկեանը։

Խմբ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ճանապարհորդութեան, ինչպէս նաև Կոստանդնուպոլիս ժամանումը, Սուլթան Սելիմին այցելութեան և Տրապիզոն անցնելու նպատակով նաւ նստելու [illegible]։

Մինչ այն ժամին, երբ Ս. Պետերբուրգում Ռուսական և Անգլիական պետութիւնները մտադրում էին համաձայնութեան գալով կազմել Եւրոպական երկրներից բաղկացած մի դաշնակցութիւն ընդդէմ Ֆրանսիայի, Կոստանդնուպոլսից Ֆրանսիա հասաւ մի նամակ, տեղեկագրելով, թէ Իրանի Թագաւորը բարեկամական ձեռք է մեկնել ժամանակի Ֆրանսիայի պետութեանը, յայտարարելով օժանդակութիւն և փոխադարձ օգնութիւն։ Նամակը Կոստանդնուպոլսում յանձնել էր Ֆրանսիայի դեսպանին մի ինչ որ հայ վաճառականի միջոցով. սակայն ոչ ոք չգիտէր, թէ արդեօք իրապէս նամակը գրուած է Իրանի Թագաւորի կողմից թէ ոչ, Ինկատի առնելով Պարսկաստանի հետաքրքրութիւնը և այն խառնակութիւններն ու խռովութիւնները, որ տեղի էին ունեցել այնտեղ, փոշու և արեան վերածելով երկիրը Նադիր-Շահի մահից յետոյ, սոյն տեղեկութիւններ չկային Իրանի բանակի և պատերազմական ոյժի կարողութեան շուրջ։ Պարզաբանելու համար խնդրի էութիւնը, Ֆրանսիայի կառավարութիւնը յարմարագոյնը գտաւ Պարսկաստան ուղարկել մի աշխոյժ ու խոհեմ ներկայացուցիչ, ձեռք բերելու համար պէտք եղած տեղեկութիւնները։ Եւ որովհետև ես1) Դամասկոսի ու Եգիպտոսի ճակատում ուղեկցել էի Նապոլէոնին որպէս արևելեան լեզուների գրագիր ու թարգմանիչ, ու այնուհետև պատգամաւոր էի եղել Կահիրէ, Դամասկոս, Սուրիա, Իոնեան կղզիները և ապա վերջերս էլ Օսմանեան Խալիֆայի արքունիքում, այդ իսկ հանգաման-

1) Գրքի հեղինակը։

քով սոյն յանձնակատարութեան համար ընտրեց ինձ, պատուիրելով անմիջապէս մեկնել Կոստանդնուպոլիս, այնտեղից անցնելու Իրան։

Արտասովոր կարեւորագոյն կէտ՝ յաջողելու վերոյիշեալ յանձնակատարութեան մէջ, հարկադրում ու պահանջում էր որ ճանապարհորդութեան շարժառիթը մնար թաքուն ու ծածուկ։ Իրանի Թագաւորը, յատկապէս Ֆրանսիայի կառավարութեան խնամքին և ուշադրութեան էր յանձնել սոյն խնդիրը։

Յանձնակատարութիւնը ունէր իր մի քանի դժուարութիւններն ու արգելքները։ Բարձրագոյն դուռը երբեւիցէ չէր ցանկանում, որ Եւրոպայի ճանապարհորդները անցնէին Օսմանեան կայսրութեան Ասիական իշխանութիւններից։ Կար նաև աւելի քան կարեւոր ուրիշ հարց եւս. և այն, Օսմանեան հողամասերում գտնուող Ռուս և Անգլիական պետութեանց գործակալներն էին, որոնք ճանապարհորդութեանս բուն և վերջնական նպատակից տեղեկանալու դէպքում, չէին խնայի որեւէ ջանք կասեցնելու և չէզոքացնելու արդիւնքները։ Այդ իսկ պատճառով Ֆրանսիայի պետութեան կողմից տրուած էին ինձ պէտք եղած խիստ կարգադրութիւններ ու ցուցմունքներ ծայր աստիճան զգուշանալու, քողարկելու և արթուն լինելու համար։ Այսպիսով 1805 թւի Մայիս 7-ին ուղեւորւելով Փարիզից, չափազանց զգուշութեամբ անցնելով Գերմանիայի, Հունգարիայի և Թրանսիլւանիայի1) վրայով Ապրիլ 2-ին հասայ Բուխարեստ2)։

1) Թրանսիլվանիա.— Պատմական վայր Ռումինիայում, որը սահմանափակւում է արեւելքից ու հարաւից Կարպատ լեռնաշղթաներով։ Այդ վայրը 1711 թւին անցնում է Աւստրիայի տիրապետութեան տակ եւ ապա համաշխարհային առաջին պատերազմից Ռումինիան վերստին գրաւում է այդ վայրը։

2) Բուխարեստ.— Ռումինիայի առեւտրական եւ հաղորդակցութեան կարեւորագոյն ու գլխաւոր կենտրոն քաղաքը։ 1861 թւին դարձաւ երկրի մայրաքաղաքը։

Բուխարեստում Իպսիլանտին2) ծայր աստիճան օժանդակութիւն ու աջակցութիւն ցուցաբերեց. կարգաւորելով Կոստանդնուպոլիս ճանապարհորդութեան յարմարութիւնները։ Հասնելով Միսիվրի3) (ժամանակին կոչւում էր Մեսեմբրիա), Սև ծովի նաւեզերեան ճամբան կտրելով անցայ Սիզեբոլի 4) Այնադա և Միդիէ5) քաղաքներից (վերոյիշեալ վայրերի վըտանգները համեմատաբար աւելի պակաս էին քան Ղարաքիլիսայի և Անդրիանապոլի ճամբին դարանուած վտանգները) ու այդպիսով Ապրիլ 10-ին, այսինքն երեսուն և հինգ օրեայ երկարատև ճանապարհորդութիւնից յետոյ, ի վերջոյ հասայ Կոստանդնուպոլիս։

Ֆրանսիայի կառավարութիւնը ինձ յանձնել էր մի նամակ մատուցանելու Սուլթան Սելիմին6). այդ իսկ պատճառով,

---

1) Իպսիլանտի։ — Կոստանդին Իպսիլանտին (1760-1816)։ Մոլդաւիայի եւ Վալախիայի գաւառապետը, որին Սուլթանը 1806 թւին ռուսական միտումների տէր լինելու պատճառով հեռացրեց իր պաշտօնից։

2) Միսիվրի (Մեսեմբրիա)։ — Երկու քաղաքների անունները, որոնք գտնւում են Թրակիայում, Սև ծովի ափին։

4) Սիզեբոլի։ — Փոքր գիւղաքաղաք (աւան) արեւելեան Ռումելի Նահանգում, Սև ծովի ափին։

3) Այս քաղաքը գտնւում է եւրոպական Թուրքիայի հիւսիս-արեւելեան մասում Սև ծովին կից, Ստամբուլից 103 կիլոմետր հեռաւորութեամբ դէպի հիւսիս-արեւմուտք։

5) Սուլթան Սելիմ III (1761-1808)։ Թուրքիոյ քսանեւութերորդ Սուլթանը։ Նա իշխեց երկրին 1789-1807։ Ռուս եւ Օսմանեան երկարող պատերազմին առաջին պարտութիւնները կրելով, երբ նորէն 1806 թւականին կրկնեցին երկու երկրների միջեւ տեղի ունեցող կռիւները, ենիչէրիներն ու պահպանողականները՝ հակառակելով Սուլթանի կողմից ձեռնարկած բարենորոգումներին, ապստամբելով՝ պաշտօնանկ արին նրան։ Սուլթան Սելիմը 1807 թւականին բանտ նետելով, այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն։

Կոստանդնուպոլիս հասնելով՝ աշխատեցի ներկայանալ Սուլթանին. սակայն որովհետև՝ Մարշալ Բրյունի՝ Օսմանեան կայսերական մայրաքաղաքից հեռանալուց յետոյ Ռուսաստանի ազդեցութիւնն ու ներգործութիւնը աւելի քան զօրացել էր Բարձրագոյն Դռնից ներս, Սուլթանին այցելելը ամէն վայրկեան արգելքի ու դժուարութեան էր հանդիպում: Ի վերջոյ, մանրամասն քննութիւնից ու խորհրդակցութիւնից և յաճախակի ջանքերից յետոյ, որոշեց մի հնգշաբթի օր, երբ Սուլթանը սովորաբար գնում էր ամառանոց, ժամանակի վարչապետի միջոցով ներկայանալ իրեն: Որոշուած օրը Քաղդախանէում տեղի ունեցաւ հանդիպումը: Սելիմն ինձ ճանաչելով՝ 1) քաղցրաբարոյութեամբ վերցրեց յանձնածս նամակը և գրպանը դնելով՝ խոստացաւ շուտով վերադարձնել պատասխանը: Սուլթանի դիմագծերը բացայայտում էին ինչ որ ներքին խոր մտահոգութիւն և տրտմութիւն: Մի կողմից Օսմանեան կայսերական ներքին խռովութիւններն ու խառնակչութիւնները և միւս կողմից Ենիչերիների արտասովոր մշտական աճումն ու թափանցումը պետութեան սիւներից և նախարարութիւնից ներս կատարելապէս մտահոգել ու տրտմեցրել էին Սուլթան Սելիմի միտքն ու հոգին: Ենթադրւում էր, թէ դժբախտ Սուլթանը նախապէս տեղեակ էր գալիք պատահարներին և իշխանութեան ու կեանքի վերջաւորութեանը:

Այդ, վերջացել էր համբերութեան և յանձնարարութեանս առաջին բաժինը: Վերջնական կէտն էր՝ մեկնել Իրան: Ֆրանսիական դեսպանատան խորհրդատու պրն. Ռաֆֆինը բերեց պէտք եղած ամանդակութիւնը և առաջնորդութիւնը: Խորհրդակցեցի նաև այն հայ վաճառականի հետ, որ Տաճկաստան էր բերել Իրանի թագաւորի նամակը և դեռ սպասում էր այդ նամակի գրութեան պատասխանը յետ տանելու նպատակով:

Պարսկաստան գնալու համար վերջինս ի նկատի ունէր

1) Ժոբերը 1804 թուականին Նապոլէոնի կողմից յանձնարարուած էր պաշտօնապէս տեղեկացնելու Սելիմին իր կայսրութեան լուրը: Այդ իսկ նպատակով՝ Սուլթանը նախապէս ճանաչում էր Ժոբերին:

երեք տարբեր ուղիներ՝ Բաղդադի ճամբան, որով յաճախակի անցնում էին կարաւանները. փոքր Ասիայի ճամբան, որը անցնում էր Թոքաթ 1) և էրզրում քաղաքներից և ի վերջոյ՝ Տրապիզոնի ճամբան, որը կտրում էր Երևան և էրզրում քաղաքները։ Բաղդադի ճամբան ունէր իր դժուարութիւնները. նախ՝ բաւականին երկարում էր ճամբան և ապա ամառն ընկերքը լինելով՝ պիտի կտրէինք Միջագետքի կիզիչ և այրող անապատները։ Վերոյիշեալ գիտումներից բացի, գոյութիւնն ու արթնութիւնը պահանջում էր ըստ կարելւոյն խուսափելու մօտենալու Բաղդադում հաստատուած Անգլիայի ներկայացուցչի իշխանութեան սահմաններին։

Հայ վաճառականի խորհուրդն էր՝ ընտրէի Թոքաթի ճամբան. տակայն այդ բոլորով հանդերձ՝ այն ճամբան էլ զերծ չէր վտանգներից, քանի որ ճամբի վրայ գտնւող ապստամբած կուսակալութիւններից բացի, ամէն վայրկեան կար նաև աւազակութիւնն ի յայտ գալու վախը։ Ստիպուած՝ որոշեցի ընտրել ծովային ճամբան, գիտենալով հանդերձ թէ տարուայ այդ եղանակին նաւ գտնելը օժտուած պիտանի ու տեղեակ յայն նաւաստիով, որը լողին ծանօթ լինէր Կոստանդնուպոլսի և Տրապիզոնի ծովային ճամբին. բաւական դժուար խնդիր էր, աւելացրած նաև Քոլխիդ 2) լեռնաշղթաների կողմից մեզ ամէն վայրկեան սպառնալիք վտանգներն ու դժուարութիւնները։

Ուրիշ ոչ մի ելք ու միջոց չգտնելով, ի վերջոյ ժամանակի Ֆրանսիայի դեսպանատան առաջին թարգման պրն. Ֆրանչինիի օգնութեամբ յաջողեցի վարձել մի առագաստանաւ, որը սովորաբար տեղական պարձւածքով կոչւում էր «Բէշ չէֆթա» այսինքն օժտուած հինգ զոյգ թիակով։

Թիւրքերի կողմից, ամէն կողմից, ամէն կերպ վտան-

---

1) Թոկաթ. Փոքր Ասիայի հյուսիսի կենտրոնական մասում գտնվող քաղաք։

2) Կոլխիդ անվամբ հին երկիր Սև ծովի ափին, որը աշխարհագրական տեսակետից գտնվում է Կովկասյան հարավային մասում, ներկայ արևմտյան Վրաստանում։

գիր խուսափելու համար, ստիպուած էի նաև նստելուց առաջ բացանալ Խալիֆայի կողմից գրուած նամակի պատասխանը։ Սոյն գրութիւնը ինձ յանձնեց Իսմայիլ փաշան, որը Իւսուֆ Փաշայի պաշտօնակիցներից յետոյ, ստանձնել էր նախարարապետի հանգամանքը։ Թիւրքիայի վարչապետը ի միջի այլոց աւելացրել էր գրութեան մէջ, թէ բարձրագոյն Դուռը չպիտի խնայի ոչ մի ջանք՝ կայուն պահելու համար երկու երկրների միջև բարեկամական կապն ու նրա ամրապնդումը։ Ապա, ըստ տեղական սովորութեան, ինձ տուեցին նուէրներ։

Խալիֆայի կողմից գրուած նամակը յանձնելով հաւատարիմ ու վստահելի անձնաւորութեան, պատրաստեցի անցնել յանձնակատարութեանս աշխատանքին։ Գրն. Ֆրանչինին Օսմանեան պետութեան կողմից յանձնեց նաև մի հրաման, որը հանդիսանալու էր ինձ համար որպէս անցագիր և թոյլտուութեան թուղթ. ճանապարհորդութեան ընթացքում, այն կէտից ուր խարիսխ էր գցել նաւը, մինչև Փէնար 1) մեզ ուղեկցեց Սև ծովի մուտքին գտնուող մի ամրոց։

Որովհետև Ֆրանսիայի մայրաքաղաքում կար այն վախը թէ երկրիս առաջին ներկայացուցիչ և յանձնակատարը չէկարողանայ հասնել որոշեալ նպատակակէտին, կամ չյաջողէր իրեն յանձնարարուած պաշտօնում, այդ իսկ միտումով յարմարագոյնն էին գտել մի ուրիշ եւ պատգամաւորութիւն ուղարկել Պարսկաստան։ Վերոյիշեալ ներկայացուցիչը, որ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքն էր հասել մէկ ամիս Կոստանդնուպոլիսից իմ դուրս գալուցս յետոյ, Նապոլէոնի ընդհանուր համհարզ գեներալ Ռոմիոն էր։ Վերջինս նաև կարգադրուած էր նոյն յանձնակատարութիւնը. սակայն նախքան ինձ՝ ընտրելով Բաղդադի ճամբան և անցնելով մեծ վըտանգներից ու բազմաթիւ արգելքներից, ի վերջոյ հասնում է Թեհրան։ Ցաւալին, մինչև հիմա էլ անորոշ և անյայտ պատճառներով, կնքում է իր մահկանացուն։

(Շար. 1)

1. Ծնթգր. — Յոյների նախկին թաղը Ստամբուլ քաղաքում, որը հաստատուած է քաղաքի հիւսիս արեւմտեան մասում, արեւելեան Հռովմայեցիների նախկին կայսերական պալատի կից։

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՆԿԱՐՆԵՐ

Ն. Կ. Մ. Մոհամմէդ Ռէզա Շահնշահ Արիամեհր Կիւրոսի գերեզմանի առջեւ մէկ րոպէ լռութիւն պահելուց յետոյ, վերադառնում է, արքայական ամբիոնը.

Ա. ՄՈՒՐԱԴԽԱՆԵԱՆ

ԿԻՒՐՈՍԱՊԱՏՈՒՄ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Հայաստանի թագաւորը գերւում է, իր որդի Տիգրանը, մի առաքինի փիլիսոփայի աշակերտ՝ պաշտպանում է հօրը և ձեռք բերում նրա ներումը։

Մինչ Կիւրոսն այսպէս զբաղւած էր, Հայաստանի թագաւորը պատգամաբերից տեղեկանալով՝ թէ Կիւրոսն ինչ է յայտնում իրեն, զարմանահար եղաւ։

Նա զգում էր, որ հարկ չտալն ու զօրք չուղարկելն իր յանցանքն է. նա աւելի վախենում էր այն պատճառով, որ կը տեսնէր, թէ ինքն ամրացնում է իր պալատը, դիմադրելու վիճակի մէջ դնելու համար, այս բոլոր պատճառները նրան վարանել տւին, այդուամենայնիւ իր ուժերը համախմբելու համար ամեն կողմ մարդիկ ուղարկեց։ Միաժամանակ իր և որդու կանանց և աղջիկներին իր կրտսեր որդի Սաբարիսի հետ հանապարհեց լեռները, ինչպէս նաև իր ամենաթանկագին զարդերն ու կարասիները մի պահակախմբով փոխադրեց այնտեղ։

Նա շտապեց Կիւրոսի վրայ հսկելու համար հետախոյզներ ուղարկել, ինքն էլ ձեռքի տակ ունեցած հայերին ռազմական պատրաստութիւն տւեց. շատ չանցած նրան լուր տւին, որ Կիւրոսն անձամբ մօտենում է, այլեւս չհամարձակելով նրա դէմ դուրս գալ՝ նահանջեց, հայերն այդ տեսնելով՝ ամեն

մէկը փախաւ իր կալուածքը ունեցուածքը փրկելու համար։

Կիւրոսը տեսնելով դաշտը ծածկուած է ամէն կողմ փախչող և իրենց առջևից անասուններ քշող մարդկանցով, նրանց լուր տուեց, թէ նրանց հետ չի վարուի որպէս թշնամիների, եթէ մնան իրենց տեղում, իսկ ովքեր փախչեն՝ բռնուելիս նրանց հետ կը վարուի որպէս թշնամիների։ Մեծ մասը մնաց, իսկ ոմանք Թագաւորի հետ փախան։

Կանանց հետ նախապէս գնացողները դէմ ընկան լեռներում դիրք բռնած զինուորներին և ճիչ արձակելով փախուստի դիմեցին, բայց նրանց մեծ մասը գերի ընկաւ, ի վերջոյ բռնուեցին նաև Թագաւորի որդին, կանայք և աղջիկները, ինչպէս նաև հետները տարած գանձերը։

Թագաւորը տեղեկանալով անց ու դարձի մասին և չիմանալով՝ թէ ո՞ր կողմ գնայ, փախաւ մի բարձրութեան վրայ։ Կիւրոսն այդ տեսնելով իր մօտ եղած զօրքերի բարձրունքը շրջապատեց և մարդ ուղարկեց Քրիզանթասին ասելու, որ թողնի լեռների հսկողութիւնը և գայ միանայ իրեն։

Մինչև զօրքերի հաւաքուելը նա մի պատգամաւոր ուղարկեց Հայաստանի Թագաւորին այս հարցերը տալու. «Ասա՛ ինձ, Հայաստանի Թագաւոր, գերադասում ես մնալ ուր որ կաս և պայքարել քաղցի ու ծարաւի դէմ, թէ՞ իջնել դաշտ ու կռուել»։

Հայաստանի Թագաւորը պատասխանեց, թէ ոչ մէկի և ոչ միւսի դէմ չի ուզում կռուել։ Կիւրոսը նրան կրկին հարցնել տուեց. «Ուրեմն ինչո՞ւ ես շարունակում մնալ այդտեղ և չես իջնում»։

— Որովհետև չգիտեմ ինչ անել, — պատասխանեց նա։

— Դու վարանելու տեղիք չունես, պիտի իջնես և քեզ արդարացնես։

— Իմ դատաւորը ո՞վ է լինելու։

— Պարզ է, նա՛ ում Աստուած տուել է վարուել, ինչպէս ցանկանայ, մինչեւ իսկ առանց դատաստանի։

Այլ բան անել չկարողանալով Հայաստանի Թագաւորը ցած իջաւ։ Կիւրոսը նրան և ամբողջ ընտանիքն ընդունելով իր զօրքի մէջ, որ արդէն միացած էր, նրանց փակեց իր բա-

նախատեսւում:

Այդ պահին Հայաստանի թագաւորի աւագ որդին՝ Տիգրանը վերադառնում էր ճամբորդութիւնից. անցեալում նա Կիւրոսի որսի ընկերն էր եղել. երբ անցուդարձի մասին տեղեկացաւ, ճամփորդական հագուստներով անմիջապէս անցաւ Կիւրոսի մօտ. իր հօրը, մօրը, եղբայրներին և իր կնոջը գերուած տեսնելով՝ սկսեց լալ: Կիւրոսը նրան տեսնելով բարեկամական ոչ մի արտայայտութիւն չարաւ, այլ պարզապէս ասաց. «Դու ժամանակին ես գալիս հօրդ դատավարութեանը ներկայ լինելու»:

Նա կանչեց պարսիկ և մար պետերին, կանչեց նաև Հայաստանի աւագներին, որոնք այնտեղ էին գտնւում, չհեռացրեց կանանց, որոնք իրենց կառքերի մէջ էին գտնւում, թոյլ տւեց, որ լսեն: Երբ խօսելու պահն եկած համարեց, նա սկսեց խօսել:

— Հայաստանի թագաւոր, ամենից առաջ քեզ խորհուրդ եմ տալիս քո պաշտպանութեան համար ճշմարտութիւնն ասել, քեզանից վանելու համար ամենաատելի մեղքը՝ ստութեան մէջ բռնւելը, որը, լաւ իմացիր, ներման ամենամեծ արգելքըն է, միւս կողմից, — աւելացրեց նա, — քո երեխաները, քո կանայք իրենք էլ գիտեն այն բոլորը, ինչ որ արել ես, ինչպէս նաև ներկայ հայերն. եթէ նկատեն, որ դու այլ բան ես ասում, քան ինչ որ տեղի է ունեցել, նրանք կը մտածեն, որ դու ինքդ քեզ դատապարտում ես վերջին տանջանքը կրելու, երբ ես ճշմարտութիւնն երևան հանեմ:

— Ուրեմն տուր ինձ ինչ հարց որ ցանկանում ես, վստահ եղիր, որ ինչ էլ պատահելու լինի, միայն ճշմարտութիւնն եմ ասելու:

— Ասա՛ ինձ, — հարցրեց Կիւրոսը, — անցեալում դու կռւե՞լ ես Աժդահակի՝ իմ մօր հօր և մարերի դէմ:

— Այո, — պատասխանեց նա:

— Դու նրանից պարտւելով պայմանագիր չկնքե՞ցիր հարկ տալ, նրա հետ պատերազմի գնալ ուր որ նա քեզ կանչի և ամրութիւններ չկառուցել:

— Ճիշտ է:

— Այդ դէպքում ինչո՞ւ հարկը չես տալ, զօրք չես ուղարկել և ամրութիւններ ես կառուցել։

— Ես ազատութիւն էի փափագում, որովհետև հաւատացած էի, թէ գեղեցիկ բան է, որ ինքս էլ ազատ լինեմ և իմ գաւառակներին ազատութիւն թողնեմ,— պատասխանեց Թագաւորը։

— Իրաւէս գեղեցիկ է կռուել գերութիւնից ազատուելու համար, բայց եթէ մի մարդ պատերազմի մէջ յաղթուելով կամ որևէ ձևով ենթարկւում է գերութեան, բացարձակ կերպով գործի է անցնում իր տէրերից ազատուելու համար իր անձը, դու նրան պատուում ես և քա՞ջ մարդ կը համարես, թէ՞ կը պատժես նրան, եթէ բռնես։

— Ես նրան կը պատժեմ, խոստովանում եմ, քանի որ թոյլ չես տալիս սուտ ասել։

— Պարզ կերպով կէս առ կէս բաղդատիր,— ասաց Կիւրոսը։— Եթէ դու մի պաշտօնեայ ունենաս, որ իր պարտականութեանց մէջ թերանայ, նրան իր պաշտօնի մէջ կը պահե՞ս, թէ փոխարէնը մի ուրիշին կը նշանակես։

Մի ուրիշին կը նշանակեմ։

— Եւ եթէ այդ մարդը մեծ հարստութիւն ունենայ, դու այդ հարստութիւնը նրան կը թողնե՞ս, թէ՞ նրան աղքատութեան կը մատնես։

— Ինչ որ ունենայ՝ կը գրաւեմ։

— Եթէ իմանաս, որ նա անցնում է թշնամու կողմը, ի՞նչ կանես։

— Ես նրան մեռցնել կը տամ․ քանի որ պիտի մեռնեմ, ի՞նչու ճշմարտութիւնը չասեմ և թոյլ տամ, որ իմ սուտն երևան բերեն։

Այդ միջոցին՝ Նրա կրտսեր որդին այդ խօսքերը լսելով պոկեց գլխից իր խոյրը և հագուստները պատռեց, կանայք սկսեցին ճչալ և հանդերձները պատառոտել, որպէս թէ իրենց հայրն արդէն մեռած լինէր և իրենք կորած։

Կիւրոսը հրամայեց լռել և ասաց. «Ահա թէ արդարու-

թիւնն ինչպէս ես հասկանում, Հայաստանի թագաւորը, այժմ մեզ ի՞նչ խորհուրդ կը տաս անելու։

Հայաստանի թագաւորը լուռ մնաց. նա վարանում էր. պէ՞տք էր, որ խորհուրդ տար իրեն սպանել, թէ՞ հակառակը տար։

Նրա որդի Տիգրանը դիմեց Կիւրոսին։

— Քանի որ հայրս շփոթութեան մէջ է, ասա՛ ինձ, Կիւրոս, կարո՞ղ եմ խորհուրդ տալ քեզ, ինչ որ իմ կարծիքով յաւագոյնն է քեզ համար։

Կիւրոսը, որ Տիգրանի հետ որս անելիս տեսել էր, որ նա մի փիլիսոփայի դասերին էր հետեւում և որով հիացած էր՝ բուռն կերպով ցանկանում էր նրան լսել, թէ ի՞նչ կարող է ասել, ուստի սիրով թոյլ տուեց, որ նա իր կարծիքն յայտնի։

— Եթէ դու հաստատում ես հօրս մտադրութիւնները կամ գործերը, քեզ խորհուրդ կը տամ խիստ նմանես նրան. իսկ եթէ քեզ թւում է, թէ նա միայն սխալներ է գործել, խորհուրդ եմ տալիս չնմանել։

— Այդպիսով, ասաց Կիւրոսը, արդարութեան հետեւելով՝ ես հօրդ սխալները կրկնելու փորձանքին չեմ ենթարկւի։

— Ոչ։

— Ուրեմն ըստ քո դատողութեան հարկաւոր է հօրդ պատժել, որովհետեւ յանցաւորին պատժելն արդար է։

— Բայց քո կարծիքով, Կիւրոս, պատիժ սահմանելիս ո՞րն է լաւ՝ քո շահը թէ՞ վնասը նկատի առնելը։

— Վերջին պարագայի՛ն ինքս ինձ պատժած կը լինեմ, ասաց Կիւրոսը։

— Ուրեմն այն պահին, Կիւրոս, երբ դու քո հպատակներին քո կողքին ունենալու համար պիտի մեծ գին նշանակես, իսկ եթէ մահուան դատապարտես, քեզ մեծապէս վնասած կը լինես։

— Ի՞նչպէս մեծ գին նշանակեմ այն մարդկանց, որոնք յանցանք գործելու մէջ են բռնւած։

— Իսկ եթէ նրանք դրանից յետոյ խելամիտ դառնան։ Ես կարծում եմ, որ բոլոր առաքինութիւններն առանց իմաստութեան անօգուտ են դառնում. ինչի է պէտք ուժեղ, քաջ

և հմուտ ձիաւոր մարդը, եթէ նա խելօք չէ, պետութեան մէջ ինչի՞ պէտք կը գայ զօրաւոր և հարուստ նոյնպիսի մի անձ, մինչդեռ իմաստութեամբ ամեն մի քաղաքում օգտակար է և ամեն մի տարում՝ լաւ:

— Ասա թէ ի՞նչ, ասաց Կիւրոսը — ուրեմն դու յաւակնում ես, որ հայրդ մի օրուայ մէջ անմտութիւնից զուրկ գալով իմաստուն է դարձել:

— Այո՛, այդպէս է:

— Քո կարծիքով ուրեմն իմաստութիւնը հոգու մի արտայայտութիւն է, ինչպէս վիշտը, այլ ոչ գիտութիւն. եթէ իմացականութիւնն անհրաժեշտ է իմաստուն դառնալու համար, ապա ի՞նչպէս հնարաւոր է տեղն ու տեղն անմտութիւնից իմաստութեան դառնալ, անկարելի է, չէ՞:

— Ի՞նչ կայ որ, պատասխանեց Տիգրանը, չե՞ս նկատել Կիւրոս, որ մի մարդ տարուած խենթ մեծամտութեամբ յարձակւում է իրենից աւելի զօրաւորի վրայ, բայց ծեծւելուց յետոյ յաղթականի վերաբերմամբ ունեցած իր խենթ մեծամտութիւնից զուրկ է գալիս, չե՞ս տեսել, որ մի պետութիւն կռւի է դուրս գալիս մի այլ պետութեան դէմ, բայց պարտութիւնից յետոյ համաձայնում է հպատակել և կռիւը չշարունակել:

— Իսկ ո՞րն է քո հօր պարտութիւնը, որ այդքան վստահութիւն է տալիս քեզ ասելու թէ հայրդ իմաստուն է դարձել:

— Այն ինչին որ ենթարկւեց նրա գիտակցութիւնը, երբ նա ձգտում էր ազատութեան, այլ բան չստացաւ քան իր գերութիւնը հաստատուն դարձրեց, երբ նա կարծում էր, թէ ծածուկ է պահում իր մտադրութիւնը՝ կանխել կամ յետ մղել թշնամու ուժերը, ընդունակ չեղաւ ոչ մի բան իր բարի վախճանին հասցնել. այն հարցերում որ դու ուզել ես խաբել, դու խաբել ես նրան, ինչպէս կը խաբեն կոյրերին, խուլերին և այն մարդկանց, որոնք ողջմտութեան կաթիլ իսկ չունեն: Նա տեսնում է, երբ դու քո ծրագիրները թաքուն պահել ես ուզում, դու՝ անթափանցելի ես դառնում այնքան լաւ կերպով, որ նրա ամրացրած վայրերը, որոնք նրա վերջին պատսպա-

բանը պիտի պահանջէին՝ դու նախապէս նրա բանտն ես դարձ-րել, դու մի հեռաւոր երկրից բազմաթիւ զօրքերով այնպիսի արագութեամբ ես հասել, քան նա կարողանար իր ձեռքի տակ եղած զօրքերը հաւաքել.

— Ուրեմն դու կարծում ես, որ մի պարտութիւն նրան տեսնել տւեց, որ իրենից աւելի լաւ և ընդունակ մարդիկ կան, որոնք նրան կարող են իմաստուն դարձնել, ասաց Կիւ-րոսը.

— Աւելի՝ քան մի կռւի պարտութիւնը, — պատասխա-նեց Տիգրանը. — մէկից աւելի անգամ տեսնուած է, որ մի պարտուած մարդ կարծել է, թէ իր մարմինը մարզելով կարող է նորից կռւի մտնել, պարտուած պետութիւններ դաշնակիցներ գտնելու յոյսով վերսկսել են պատերազմը, բայց նրանք, ով-քեր ուրիշ իրենցից բարձր են դասում, յաճախ հաճութիւն են ցոյց տալիս նրանց հպատակելու.

— Բայց կարծես մոռանում ես, խօսեց Կիւրոսը, որ բռնաւոր մարդիկ ճանաչելով հանդերձ որ իրենցից աւելի մեղմ մարդիկ կան, գողերը գողութիւն չանողներից, ստախօս-ները՝ ճշմարտախօսներից, ոճրագործները՝ արդարադատ մարդ-կանց, դարձեալ չեն հրաժարւում իրենց գործերից. չգիտե՞ս որ հայրդ ներկայ դէպքում ստել է, չի յարգել մեր մէջ կնքուած համաձայնութիւնները, գիտենալով հանդերձ որ մեր կող-մից չենք խախտել ձեր և Աժդահակի մէջ եղած պայմանագ-րութիւններից և ոչ մէկը.

— Բայց ես յաւակնութիւնը չունեմ ասելու, թէ միայն լաւ մարդկանց ճանաչելը բաւական է իմաստուն դառնալու համար. հարկաւոր է նաև իրենցից գերազանցների կողմից պատժուած լինել, ինչպէս որ ներկայումս իմ հայրն է.

— Բայց քո հայրը դեռես ոչ մի վնաս չի կրել, ճիշտ է, նա վախենում է բարձրագոյն պատժից, ես այդ գիտեմ.

— Դու պատկերացնո՞ւմ ես վախից աւելի ուժեղ մի բան, որ հոգիները ընկճել կարողանայ, չգիտե՞ս որ սրից նուա-ճուած մարդիկ, բարձրագոյն պատժին սպասողները ցանկա-նում են կռւել նոյն այդ մարդկանց հետ, իսկ այն մարդիկ, ովքեր խիստ կերպով են վախենում, մինչեւ իսկ երբ դուք

նրանց հանգստացնում էր, չէին համարձակւում նրանց երեսին նայել։

— Ուրեմն դու կարծում ես՝ վախը մարդկանց աւելի է պատժում, քան՝ իրական պատիժը։

— Դու ինքդ էլ գիտես, որ ես ճիշտ եմ ասում,— պատասխանեց Տիգրանը,— դու գիտես նոյնպէս, ովքեր վախենում են հայրենիքից աքսորուելու համար, ովքեր ճակատամարտի նախօրէին պարտութիւնից վախենում են, վհատութեան մէջ օրեր են անց կացնում, նոյնը՝ նաև ծովագնացներն երբ վախենում են խեղդուելուց, ստրուկները՝ շղթաներից. բայց մի անգամ աքսորուելուց, պարտուելուց, ստրկանալուց յետոյ նրանք ընդունակ են դառնում յաճախ աւելի լաւ ուտելու, քնելու, քան երջանիկ մարդիկ։ Ահա մի քանի օրինակներ, և որոնք քեզ ցոյց կը տան, թէ ի՛նչ ծանր բեռ է վախը։

Մահապատժից առաջ մարդիկ վախենալով՝ նախ քան պատժի գործադրութիւնը մեռնում են, ոմանք գունատուելով, ոմանք իրենց կախելով և ոմանք իրենց մորթելով. այնքան որ ճշմարիտ է, թէ սարսափելի բոլոր բաներից ամենասոսկալին վախն է և ամենից աւելի նա է խորտակում հոգին։ Ինչ վերաբերում է հօրս, նա որ վախենում է գերութիւնից ոչ միայն իր այլև իմ, իր կնոջ, իր բոլոր երեխաների համար, ի՞նչ ես կարծում, ի՞նչ դրութեան մէջ է գտնւում ներկայումս։

— Առանց դժուարութեան պատկերացնում եմ նրա դրութիւնը,— պատասխանեց Կիւրոսը,— բայց ես կարծում եմ նաև որ նոյն մարդը բարեկեցութեան մէջ կարող է ամբարտաւան դառնալ և մոռացութեան տալով իր անյաջողութիւնները՝ կրկին յանդուգն դառնալ և նոր նեղութիւն պատճառել։

— Մեր սխալները քեզ իրաւունք են տալիս մեզանից կասկածել, բայց դու կարող ես բերդեր բարձրացնել, մեր ամուր վայրերը գրաւել և ամէն կարգի երաշխիքներ ստանալ. հակառակ այս բոլորի՝ մենք չենք յուսահատւի. որովհետև մենք կը յիշենք, որ այս բոլորի պատճառը մենք ենք։ Եթէ իշխանութիւնը յանձնես մի անպարտ մարդու՝ զգոյշ եղիր որ նա հակառակ քո բարեգործութեանց քեզ իր բարեկամը չհամարի

և նրա քինախնդրութիւնից քեզ զերծ կացուցելու նպատակով նրան քո լծին չենթարկես կարծելով դա կ՚արգելի նրան յանդուգն դառնալու, զգոյշ եղիր որ նրան խելքի բերելու համար ստիպուած չլինես անելու ինչ որ մեզ համար ես արել։

— Այո, աստուածները վկայ են լաւ գիտեմ, որ անախորժութիւնից զատ այլ բան չեմ ունենայ, եթէ ինձ ծառայողներին ես հակառակ իրենց կամքին վերցնեմ, իսկ եթէ ես նրանց բարեկամութիւնը շահեմ՝ ինձ ծառայելու միջոցին նրանց գործած սխալներն աւելի հեշտութեամբ կարող կը լինեմ տանել քան այն ծառայողներին, ովքեր իրենց պարտականութիւնները կատարում են հպատակութեամբ բայց դժկամութեամբ։

— Դու բարեկամութիւնից ես խօսում, ասաց Տիգրանը, ո՞վ կարող է երբէք քեզ ցոյց տալ այն բարեկամութիւնը ինչ որ մենք ներկայումս։

— Նրանք ովքեր երբէք մեր թշնամիները չեն եղել և եթէ ես նրանց այն շնորհն անեմ ինչ որ դու յանձնարարում ես ձեզ անել։

— Եւ դու ներկայ պայմաններում կարո՞ղ ես գտնել մէկին, որին կարողանաս անել այն մեծ շնորհը ինչ որ իմ հօրը. օրինակի համար եթէ դու թողնես որ քո դէմ որևէ մեղք չգործած մարդ ապրի ի՞նչով նա շնորհապարտ կը լինի քեզ, իսկ եթէ չխլես մէկից ոչ նրա երեխաները և ոչ կինը, ո՞վ կը լինի այն մարդը որ դրա համար քեզ առաւել սիրի, եթէ ոչ այն մարդը որ համոզուած է թէ դու իրաւունք ունէիր նրան զրկելու իր ընտանիքից։ Նոյնը նաև Հայաստանի թագաւորութեան վերաբերմամբ. կարծում ես կը գտնե՞ս մէկը, որ աւելի ցաւի քան մենք որ զրկւում ենք դրանից. պարզ չէ՞ այն մարդը որ այլեւս թագաւոր չլինելու համար աւելի պիտի վշտանայ, քո հանդէպ իրաւէս երախտապարտ կը լինի որ քեզանից կրկին ստանում է իր իշխանութիւնը։ Միւս կողմից քո գնալուց յետոյ այս երկրի խաղաղ մնալը քեզ մտահոգում է, ապա նայիր, թէ նոր կառավարութեան հաստատելով կունենա՞ս այն թէ սովորական կառավարութիւնը պահելով. եթէ քեզ համար շատ զինուորներ տանելը կարևոր է, քո կարծիքով ո՞վ ա-



Իրանահայութեան մատուցած նուէրը Ն. Կ. Մ. Մոհամմէդ Ռեզա Արիամեհր Շահնշահի թագադրութեան առթիւ։

ԻՐԱՆԻ ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԳԱՒԱԶԱՆԸ

Գործ Թաւրիզեցի հայ ոսկերիչ վարպետներու։ Նկարի մէջ երեւում են.—

1.— Պրն. Խաչատուր Պաստմագրեան

2.— Պրն. Մամիկոն Պաստմագրեան

3.— Պրն. Յարբնակովը Մասրէոսեան

ւելին կը զինուորագրի քան նա՝ որ յաճախ է այդ արել, եթէ քեզ դրամ է հարկաւոր, քո կարծիքով ո՞վ աւելի ընդունակ կը լինի հայթայթել քան նա՝ որ ծանօթ է աղբիւրներին եւ դրանց տէրն է. իմ բարի Կիւրոս, զգուշացիր որ մեզ կորցնելով ինքդ քեզ աւելի վնաս չպատճառես, ինչ որ իմ հայրը չկարողացաւ քեզ պատճառել։

Այսպէս խօսեց Տիգրանը. Կիւրոսը ծայր աստիճանի հաճոյքով էր լսում նրան, որովհետեւ նա մտածում էր թէ Կիաքսարին տւած իր խոստումները կատարել է։ Նա յիշում էր, որ նրան ասել էր, թէ յոյս ունի հայերին նախկինից աւելի հաւատարիմ դաշնակից դարձնել։ Այս բանավէճից յետոյ նա դիմելով Հայաստանի թագաւորին ասաց.

— Եթէ ես համաձայնեմ որդուդ խնդրանքին, ասա ինձ Հայաստանի թագաւոր, ո՞րքան զօրք կ'ուղարկես ինձ եւ պատերազմին ինչ գումարով կ'օգնես։

— Կիւրոս, ես աւելի պարզ բան ցոյց տալու եւ աւելի պարզ բան ասելու ոչինչ չեմ տեսնում քան այն, որ իմ զօրքը քեզ ցոյց տամ, երբ դու տեսնես քեզ հետ, կը տանես այնքան որքան լաւ կը գտնես, իսկ մնացեալը կը թողնես երկրի պահպանութեան համար. նոյնը նաեւ դրամի վերաբերմամբ, ճիշտ կը լինի եթէ քեզ յայտնեմ ամբողջ գումարը. դու որքան ցանկանաս, այնքան կը տանես եւ կը թողնես՝ որքան ցանկանաս։ Այս պատասխանը տւեց Հայաստանի թագաւորը։

— Նախ ինձ ասա թէ ինչ ոյժեր ունես, յետոյ կը յայտնես թէ դրամդ որքան է։

— Հայոց այրուձին ութ հազարի է հասնում, իսկ հետեւակը՝ քառասուն հազարի. իմ հարստութիւնը, որի մէջ նաեւ հօրս թողած գանձը, արծաթով հաշւած երեք հազար տաղանդից [1] աւելի է։

1) Տաղանդի ատտիկեան արժէքով հաւասար է՝ 5,884.25 ֆրանկի, ուրեմն ամբողջ գումարը 17,682,500 ֆրանկ. իսկ բաբելոնեան տաղանդը, որն ընդունուած էր Պարսում, հաւասար է ատտիկեան տաղանդի 1 $\frac{2}{3}$-ին, ուրեմն ամբողջ գումարը՝ 29,470,815 ֆրանկի։ Ծանօթ. Ֆր. թարգմնչի։

— Քո բանակի կէսն ինձ կ'ուղարկես, որովհետև քո հարևան խալդերը 1) պատերազմում են քեզ հետ, իսկ քո դրամից փոխանակ յիսուն տաղանդի, որ վճարում էիր որպէս հարկ, վճարի դադարեցմանդյու պատճառով դու դրա կրկնակին կը տաս, նաև հարիւր տաղանդ. եթէ բախտն ինձ օգնի՝ առածդ պարտքի փոխարէն քեզ ծառայութիւններ կը մատուցանեմ, որոնք աւելի կարևոր են, քան եթէ դրամդ վերադարձնեմ, իսկ եթէ չկարողանամ՝ ինձ դուցէ կարելի լինի մեղադրել անկարողութեանս, բայց անարդարութեանս՝ ոչ, ես դրան արժանի չեմ լինի։

— Յանուն աստուածների, Կիւրոս, — ասաց Հայաստանի թագաւորը, — այդպէս մի՛ խօսիր ինձ, չէ քո բարեկամութեան վրայ վստահութիւն չեմ ունենայ, հաւատա ինձ, ինչ որ թողնում ես մեզ, քո տարածի պէս քեզ է պատկանում։

— Լինի՛, — ասաց Կիւրոսը, — կնոջ վերադարձնալու համար ո՞րքան դրամ կը տաս։

— Ինչ որ կարողանամ։

— Իսկ երեխաների՞դ համար։

— Նոյնպէս այնքան՝ որքան կարողանամ։

— Դա քո ունեցածի կրկնակին կը լինի. իսկ դու, Տիգրան, ասա՛ ինձ, կնոջ վերադարձնալու համար ո՞րքան կը վճարես (Տիգրանը նոր էր ամուսնացել և կնոջ վրայ բուռն կերպով սիրահարուած էր)։

— Ես իմ կեանքը կը ծախեմ, որ նա երբէք գերի չըդառնայ։

— Դէ լաւ՝, տա՛ր նրան, նա քոնն է, ես նրան գերի չեմ համարում, որովհետև դու միշտ մեր կողմնակիցն ես եղել. և դու, Հայաստանի թագաւոր, դու ևս քո կնոջն ու զաւակներին առանց վճարելու տար, որպէսզի նրանք քեզ մօտ վերադառնալիս զիտենան որ ազատ են. այժմ ճաշեցէք մեզ հետ, իսկ ճաշից յետոյ կը գնաք՝ ուր որ սիրտներդ ուզենայ։ Նրանք

1) Խալդեր չպիտի խառնել միջագետքի քաղդեացիքի, այլ՝ Հայաստանի հին խալդերը։

Թարգմ. Էր. Բարգմեան

Թացին։

Ճաշի միջոցին Կիւրոսը հարցրեց.— Տիգրան, ասա՛ ինձ, որտեղ է այն մարդը որ մեզ հետ որսի էր դուրս գալիս և թւում էր թէ դու նրանով շատ էիր հիացած։

— Է՜հ, հայրս նրան սպանել տուեց։

— Ի՞նչ ոճիր էր գործել։

— Կարծում էր թէ նա ինձ փչացնում է, բայց, Կիւրոս, նա այնքան ազնիւ մարդ էր որ մեռնելիս ինձ կանչեց և ասաց. «Տիգրան, հօրդ դէմ մի չդաճես ինձ սպանել տալու համար, քո հանդէպ անբարեացակամ լինելու պատճառով չէր որ նա այս արեց այլ՝ անգիտութեան. մարդկանց ագիտաբար գործած բոլոր սխալներն ես համարում եմ յակամայից արուած»։

— Դժբա՜խտ, գոչեց Կիւրոսը։

Հայաստանի թագաւորն ասաց.— Մարդ երբ իր կնոջը բռնում է ուրիշի հետ, սպանում է այդ մարդուն մեղադրելով ոչ թէ կնոջ հոգին փչացնելու համար, այլ կնոջ հանդէպ ունեցած իր սէրը յափշտակելու համար և այս է պատճառը, որ նրա հետ թշնամաբար է վարւում, իսկ եթէ ես խանդումէի այդ փիլիսոփային, դրա պատճառն այն էր, որ իմ կարծիքով նա իմ որդու հանդէպ աւելի համարում ունէր, քան իմ հանդէպ։

— Ցանուն աստուածների, Հայաստանի թագաւոր, իմ աչքին քո սխալը մարդկային թուլութեան մի արտայայտութիւնն է. Տիգրա՛ն, հօրդ ներիր։

Այս խօսակցութիւններից և բարեկամական արտայայտութիւններից յետոյ ինչ որ բնական է, երբ մարդիկ հաշտւում են իրար հետ, հայերն իրենց կանանց հետ կառք նստեցին և ամենայն ուրախութեամբ յետ դարձան։ Երբ նրանք իրենց բնակարանը հասան, սկսեցին Կիւրոսին գովել, մէկը՝ իմաստութիւնը, մէկը՝ համբերատարութիւնը, մէկը՝ քաղցրաբարոյութիւնը, միւսը՝ գեղեցկութիւնն ու բարձր հասակը։ Տիգրանը հարցրեց կնոջը.— Հայուհի, դո՞ւ էլ Կիւրոսին գեղեցիկ գտար։

— Աստուած վկայ ես նրան չէի նայում։

— Հապա ո՞ւմ էիր նայում։

— Նրան՝ ով ասաց, թէ իր կեանքը կը ծախի իմ գերի դառնալը թոյլ չտալու համար:

Այդ ժամանակ, ինչպէս հասկանալի է, այդքան յուզմունքներից յետոյ նրանք գնացին քնելու:

Յաջորդ օրը Հայաստանի թագաւորը Կիւրոսի և նրա բանակի համար ուղարկեց հիւրընկալական ընծաներ և իւրայիններից ովքեր պիտի մասնակցէին նրա արշաւանքին, հրամայեց երեք օրւայ մէջ պատրաստել, ապա Կիւրոսի պահանջած դրամի կրկնակին ուղարկեց նրան: Կիւրոսը վերցրեց միայն իր ուզածը և մնացեալը վերադարձրեց, յետոյ հարցրեց, որդին թէ՞ հայրն է լինելու բանակի պետը:

— Ում որ դու ցանկանաս,— պատասխանեց հայրը:

— Կիւրոս, ասաց Տիգրանը, ես քեզանից չեմ բաժանւի, մինչեւ իսկ եթէ պարտաւորւեմ բեռ կրել:

— Ի՞նչ գին պիտի վճարես կնոջդ, երբ նա տեղեկանայ որ դու բեռ ես կրում,— ծիծաղելով ասաց Կիւրոսը:

— Նա տեղեկանալու կարիք չի ունենայ, նա կարող է տեսնել, թէ ես ինչ եմ անում, որովհետև հետս տանելու եմ,— ասաց Տիգրանը:

— Ժամանակն է, որ ձեր պատրաստութիւնները տեսնել սկսէք:

— Հօրս ասածով մեզ կազմ ու պատրաստ համարի՛ր,— ասաց Տիգրանը:

Զինւորները հիւրասիրւելուց յետոյ գնացին հանգստանալու:

Թարգմ. Ա. ՄՈՒՐԱԴԽԱՆԵԱՆ

ՔՍԱՆ ՀԻՆԳ ԴԱՐ

Կիւրոս մեծից մինչ Փահլաւի գերդաստանը արեւազօծ,
Քսան հինգ դար անխոցելի տեւեց ինչպէս մի մեծ ամրոց։

Արեւելքից մինչ Արեւմուտք աստղերի պէս բազմաերանգ,
Հին Իրանի մշակոյթը շողացել էր գիրք երգ ու կեանք,

Հետք էր թողել հնամենի արուեստներում անգերազանց
Եւ գիտութեան աղբիւրներում ծովացել էր, դարձել մեծ գանձ,

Դարձել կոթող Պերսեպոլիս, մի Ֆերդովսի դարձել հսկայ,
Դարձել սիրոյ, հիացմունքի սեպագիր տող հին, արեւկայ։

Հրկիզել են մրրիկները եւ տէրտ առ տէրտ հողն Իրանի,
Խոշտակի պէս արշաւել են մեր ցեղերը բիրտ, վայրենի...

Յաջորդել է դարը դարին, բիւր գահերի փայլն է թաղել,
Հազարամեայ ճամբաներում քանի հազար միտք է ծնել...

Մինչեւ եկել ծովացել է յեղաշրջման շողը ճերմակ,
Մինչեւ գետնից բարձրացել է մեր այսօրը պարզ ու յստակ։

Եւ այս տարի ողջ «Շահնամէ», ողջ հնութեան արձան հսկայ՝
Հնադարեան պատուանդանում Նոր Իրանի հեւքը ներկայ։

Կիւրոս Մեծից մինչ Փահլաւի գերդաստանը արեւավառ
Քսան հինգ դար անխոցելի տեւեց ինչպէս մի մեծ պատուար։

1971 ՀԱՑԻԿ

ՑՆԾԱ՛ ԿԻՒՐՈՍ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Ցնծա՛ Կիւրո՛ս, յառնած փառքի քո դամբանից,
Ցնծա՛ հոգով արիացած, յուզիչ սրտով փոթորկալի,
Տես, ժողովուրդը քո արթնամիտ ու սիրալից,
Շեփորում է *պատգամը* քո, քսան հինգ դարի։

Աքեմենեան Արքայից Արքան, Պերսեպոլսի քո պալատում,
Տիեզերական հաւաքոյթում մեծ պետերի ու դէմքերի,
Աննախընթաց հանդիսութեան մի շքերթ է կազմակերպել,
Եւ զօդում է շղթան իրար, անցեալ ու նոր մեծ փառքերի։

Ցնծա՛ Կիւրո՛ս, Իրանն այսօր իր նոր դիրքով,
Դարձել է վայրն ազգ հանդիպման, տասնեակ արքա-նախագահի,
Որոնք այց են եկել քո պատմական մեծ դամբանին,
Սեղմելու ձեռքն իրաւակերտ քո յաջորդի։

Դարերի մէջ փոքր դարձան տասնեակ ազգեր,
Ցաւէս կորան, ուժ ու փառքով անցին գահեր,
Բայց գահը քո, կերտուած խղճի զգայուն լարից,
Ցայտում է վեր ու լոյս սփռում նոր բարձունքից։

Ի՛նչ կա՛յ բա՛րձր ու վե՛հ, աշխարհի փառքերի մէջ,
Քան ձեռքն արդար՝ հող ու ջրին քո ծառայող,
Արդիւնքն ու մշակոյթ քո դաշտերը բերրիացած,
Գիւղաբնակ զաւակներից ուրախ կանչը զուարթացնող։

Ցնծա՛ Կիւրո՛ս, շատ կողմերում մեր աշխարհի այս տարածքում,
Ձայնն է լսւում բռնաւորի, եւ շեփորը մարտ ու ռազմի,
Իսկ քո երկրում ծաղկում է գիւղն ու զարգանում՝
Ձեռքով ՈՒՍՄԱՆ, ԱՌՈՂՋԱԿԱՆ ու ՇԷՆԱՑՄԱՆ բանակների։

Ննջա՛ Կիւրօ՛ս, սեւ երկիրը քո ընդարձակ,
Ցանցապատուած հազարաւոր դպրոցներով,
Դաշտերի մէջ աջ ու ձախին մի ամբարտակ,
Քաղաքներդ ողջ ողողուած կայծի լոյսով,

Ննջա՛ Կիւրօ՛ս, քաղաքամայր Թեհրանի մէջ
Արիամեհր Շահի ձեռքով պիտի բացի
Մարզարանը տասնեակ ճիւղեր առնող իր մէջ,
Հոգի կերտող, մարմին կոփող նոր սերնդի։

Ննջա՛ Կիւրօ՛ս . . . .

Ննջարանդ մէջ է, տե՛ս, աշխարհն համայն,
Եւս երկրներից, հինգ մայր ցամաքի,
Ուրախ ձայնը միացրած ժողովրդից ուրախ ձայնին
Տօնում են տօնն, համամարդկային քո պատգամի։

Ննջա՛ Կիւրօ՛ս, քո քարակերտ դամբանի մէջ,
Որ ազգն ընկերից քո վաղեմի՝ Տիգրանածին,
Ջերմ սրտալից փառքն է տենչում դեռ գալիքի,
Նուիրելով համեստ տուրքը մշակոյթի իր ազգային։

Նոր Ջուղա
17 Հոկտ. 1971

ԱՐԵՒՈՏ ԻՐԱՆԻՆ

Սարերի, Հովիտների հզօր երկիր,
Արեւելեան բնաշխարհում վառ ես, Իրա՛ն,
Արեւավառ ծաղկանոցում դու մի ծաղիկ՝
Նորափթիթ ու հնաւէտ վառ ես, Իրա՛ն…

Քանի՜-քանի՜ արիւնարբու ցեղեր անթիւ
Աւերեցին շէները քո անծայրածիր,
Բայց դու նորից կենդանացար. Քեզ բիւր պատի՜ւ,
Ազատութիւն, արդարութիւն սփռեցիր…

Սարերի, Հովիտների մեծ հայրենիք,
Արեւելքում անուշաբոյր վառ ես, Իրա՛ն.
Արեւավառ ծաղկանոցում դու մի ծաղիկ՝
Ականակուռ ու պայծառ, վառ ես Իրան…

1964 ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՁՕՆԵՐԳ ԻՐԱՆԻՆ

Դու երկիր վարդի, արեւի,
Օրօրան հինաւուրց գիտութեան,
Պատմութեան հնահոս դարձի մէջ
Քայլում ես դէպի վառ ապագան…

Դու արեւ, հրակէզ ու շքեղ,
Դու փառքի յուշարձան անմահան,
Կը երգեմ, կը գովեմ հոգեբուխ
Քո երգը, քո երթը յաղթական…

Դու երկիր վարդի, արեւի,
Հպարտ եմ քո շէն երկրով,
Պայծառ է, արեւոտ՝ քո ներկան,
Լուսաւոր՝ վաղուայ ապագան…

Թեհրան ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՄՏՔԵՐ

ԻՐԱՆԻ ՀՌՉԱԿԱՒՈՐ ԲՈԶՈՐԳՄԷՀՐԻՑ 1)

Ամէն մի անձուկ վայր որ ընկայ և ինձ նեղութիւն պատճառեց, այնուամենայնիւ ոչ մի նեղ տեղ վատ ստորութիւնից ու տգեղ վայրից աւելի ինձ ազդելը չեղաւ.

* * *

Ամէն վնասի մասին տեղեակ եմ և ոչինչ աւելի վնասակար քան լեզուն՝ չեմ տեսել.

* * *

Ամենալաւ բաների հետազօտութիւններ արի, այս բարի ժողովրդից ոչինչ աւելի լաւ չգտայ.

* * *

Կրակի վրայ եմ կռուել և նրա բոցավառող հուրերի վրայ քայլել եմ, բայց իմ կատաղութեան կրակից ուրիշ ոչինչ աւելի կրակոտ չտեսայ, որ երբ անձիս վրայ գերիշխէ՝ ինձ լաւ ձեռով կը բոցավառի.

* * *

Կատաղի առիւծների հետ գիրկընդխառն կռիւներ մղեցի և արիւնարբու գայլերի հետ պայքարեցի և նրանց հանդէպ յաղթող եղայ, բայց վատոգի անձնաւորութեան հանդէպ չը կարողացայ յաղթող լինել.

* * *

Համբերութեան դառն օշարակը խմել եմ, բայց և այնպէս չքաւորութիւնից աւելի դառն ոչինչ չեմ տեսել.

Թարգմ. ՇԱՒԱՍՊ

1) Անուշիրուան արդարադատ արքայի նախարարը.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՀԱՖԵԶԻ ՄԱՍԻՆ

Յարգելի սենատոր եւ անուանի գրականագէտ պրն. Ալի Դաշտիի աշխատասիրութեամբ մի շատ ուշագրաւ գիտական շարադրութիւն էր զետեղուած «Հուր» ամսագրի առաջին համարում, որին արձագանգել եմ մի պարսկերէն յօդուածով։

Ընդ սմին ներկայացնելով Հաֆեզի երեք գազելների թարգմանութիւնը, հարկ եմ համարում ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալ հանգամանքի վրայ։

Հաֆեզը համարւում է Իրանի ամենաառաջնակարգ բանաստեղծը։ Համաշխարհային չափանիշով էլ նա մեծ բանաստեղծ է։

Հաֆեզը խրթնաբան է, գուցէ նոյնքան՝ որքան մեր Նարեկացին։

Ինչպէս Նարեկացուն հասկանալու համար պէտք է ծանօթ լինել նրա ժամանակի անցուդարձին, քրիստոնէական կրօնին եւ նրա յարակից աստուածաբանական հարցերին, այնպէս էլ Հաֆեզին հասկանալու համար, անհրաժեշտ է տեղեակ լինել նրա դարի (XIV դ.) պատմութեան, քաղաքական անցուդարձին, պարսկական գրական եւ փիլիսոփայական հոսանքներին, մահմեդական կրօնին եւ նրա աստուածաբանական հարցերին։

Այդ բոլորն ի նկատի ունենալով՝ թարգմանութիւններն օժտուած են անհրաժեշտ ծանօթութիւններով. յանձնարարելի է ուշադրութեամբ կարդալ այդ ծանօթութիւնները։

Բացատրութիւնները կազմելու համար մեծ մասամբ օգտուել եմ յայտնի մեկնաբան Սուդիի բազմահատոր «Մեկնութիւն Հաֆեզի»-ից եւ այլ հեղինակների աշխատութիւններից։

ԳԱԶԵԼՆԵՐ ՀԱՖԵԶԻՑ

1.

در ازل پرتو حسنت ز تجلی دم زد   عشق پیدا شد و آتش بهمه عالم زد

Յաւերժութեան մէջ շողշողաց շքնաղ դէմքդ լուսափառ,
Սէրը ծնուեց և հրդեհեց տիեզերքը ծայրէ ծայր. 1)

Հրեշտակը սիրոյ դիմաց մնաց սառը — անտարբեր, 2)
Սէրը խոցւած անարգանքից մարդուն զարկեց շանթահար.

Միտքը ուզեց այդ բոցերից մի լուսատու ջահ վառել, 3)
Բայց կայծակը չար նախանձի ցնցեց հիմքից ողջ աշխարհ.

Ոսոխն ուզեց դէպքից օգտուել — սիրոյ գաղտնիքն իմանալ —
Աներևոյթ մի Կարող Ձեռք յետ մղեց այդ միտքը չար. 4)

Ուրիշներին ուրախութիւն, վայելք ու սէր վիճակւեց,
Իմ վշտագգած 5) սիրտը միայն դարձեալ մնաց վշտահար.

Սիրտս անդուլ կարօտում է քո ծնօտի փոսիկին —
Գանգուրներիդ տատանմին ձեռք մեկնեցի ես անճար. 6)

Եւ Հաֆեզը այդ ժամանակ սիրոյ երգը յօրինեց,
Բայց Գրիչը նրա երգից ջնջեց ուրախ խօսք ու բառ. 7)

2.

هزار جهد بکردم که یار من باشی   مراد بخش دل بیقرار من باشی

Հազար ու մի ջանք թափեցի, որ իմ եարը լինես դու,
Իմ անհանգիստ սրտի սատար ու դադարը լինես դու.

Անքուն, արթուն գիշերներիս ճրագը մէջս վառ պահես,
Իմ հարազատ, իմ յուսատու լուսարարը լինես դու.

Ինչպէս արքան իր հնազանդ հպատակի յանդիման,
Իմ թագակիր ու ողորմած վեհափառը լինես դու.

Թէ արնաթոյր շրթներիդ դէմ սիրտս գանգատ ունենայ,
Իմ անաչառ ու արդարացի դատաւորը լինես դու.

Մի գիշեր գաս մեր խրճիթը, սիրով հիւանդ մարդկանց մօտ,
Իմ վշտահար, սգւոր սրտի դեղ ու ճարը լինես դու.

Արևածին եղնիկն անգամ յոկ աննշան մի որս է, 1)
Եթէ մի պահ դու իմ որսը — իմ եղնարը լինես դու. 2)

Ես մի փափուկ փայփայուած եմ, որ մի՛ միայն մի գիշեր,
Արցունքներիս փոխարէնը, իմ ընկերը լինես դու.

Թէպէտ յայտնի Հաֆեզն եմ, բայց մի գարի գին չունեմ,
Բացի միայն՝ գութ ունենաս և իմ եարը լինես դու.

3.

مژده وصل تو کو کز سر جان بر خیزم   طایر قدسم و از دام جهان بر خیزم

Ո՞ւր է զուարթ բարի լուրը՝ կեանք ու հոգիս նուիրեմ,
Թռչուն դառնամ, այս աշխարհի նեղ ծուղակից ազատուեմ.

Երդւում եմ քեզ քո արևով, թէ ինձ ստրուկ կոչես դու,
Այս աշխարհում իշխան լինելն այդ շնորհին կը զոհեմ.

Ողորմութեանդ ամպից, Տէր իմ, ինձ մի անձրև պարգևիր—
Նախ քան որ ես փոշու նման ճամբի միջից դուրս նետուեմ.

Իմ շիրիմին երգ-նուագով և գինիով այցի եկ—
Բոյրդ առնեմ և պարելով գերեզմանից դուրս ելնեմ.

Վեր կաց, ցոյց տուր վեհ հասակդ և քայլուածքդ սիրաճեմ,
Որ այս կեանքից և աշխարհից ծափ ու դափով անջատուեմ.

Թէպէտ ծեր եմ, բայց միմիայն ինձ մի գիշեր գիրկդ առ,
Լուսաբացին ջահելացած ես քո մօտից վեր ցատկեմ.

Մահուանս օրը միայն մի պահ քեզ տեսնելու միջոց տուր—
Քեզ տեսնեմ ու Հաֆեզի պէս, որ աշխից բաժանուեմ.

Թարգմանեց պարսկերենից՝ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 1.

1) Այս գազելը — սիրոյ ծագման եւ նրա մարդկային բնոյթի մասին՝ սուֆիական գաղափարաբանութեան մի ուշագրաւ նմոյշ է.

2) Յայտնի մեկնաբան Սուդին ասում է՝ «Սիրոյ զգացմունքը յատուկ է միայն մարդուն. հրեշտակների եւ միւս արարածների մէջ սէր չկայ... սիրոյ այրուելը մենք ժառանգել ենք Ադամից». Թուում է՝ բուն գաղափարը հիմնուած է Ղուրանի մի հատուածի վրայ, որտեղ ասուած է «... Մենք (իմա՝ Աստուած) այդ աւանդը առաջարկեցինք երկնքին, երկրին եւ սարերին. նրանք մերժեցին ընդունել եւ նրանից վախեցան, բայց մարդը վերցրեց. նա դաժան եւ տգէտ էր» (Սուրէ Ահզաբ-այէ 72).

3) Այսինքն՝ միտքը ուզեց օգտուել այդ պատեհ առիթից, բայց խանդոտ սէրը չհանդուրժեց այդ միջամտութեան եւ իր կայծակով կրակի մատնեց աշխարհը. Մի խօսքով սէրը եւ միտքը անհաշտ են եւ նրանց հաշտ ու խաղաղ կենակցութիւնը հնարաւոր չէ.

4) «Մուդդաի»-ը Սատանան է, Դաստ-Ղեյբը՝ «Կարող Ձեռքը» կամ աստուածային կամքը ետ մղեց նրան եւ արգելք հանդիսացաւ, որ նա սիրոյ գաղտնիքին իմանայ.

5) Վէրազգած նշանակում է վէրով համակուած (եւ ոչ՝ վէրազգաց).

6) Սիրտս կարօտից էր ծնօտի փոսիկին—ուստի ձեռք մեկնեց եւ ոլորապտոյտ մազերին, ուզեց որ այդ դժուար ճանապարհով հասնի իր նպատակին. Ծնօտի փոսիկը պարսկ. կլասիկ պոէզիայում գեղեցկութեան նշաններից մէկն է. Սիրոյ յաղթանակի առաջապահ դիրքը. Այստեղ Հաֆեզը, ըստ իր սովորութեան սիրոյ թեման խառնում է վերացական հարցերին.

7) «Գրիչ» (մեծատառով) այստեղ ճակատագրի նշանակութեամբ է.

№ 2.

1) «Արեւածին նժոյգ» բնագրում آفتاب قيزغ (Լազալի ձիրար) երկու կերպ կարելի է հասկանալ — «Արեւի նժոյգը» կամ որպէս «Արեւ» (արաբերէն) երկուսն էլ գեղեցկութեան սիմվոլներ։ Մի քանի մեկնաբաններ «Լազալէ ձիրար» «Արեւածին» են թարգմանել — մենք էլ այդ բացատրութեամբ թարգմանեցինք։

2) «Եղնար — եղ եղնիկ (տես Ս. Մալխասեանցի բացատրական բառարանում)։

№ 3.

1) Այս գազելի առաջին տողը Հովհաննիսեանի «Համեդ-Լիրիկա» ժողովածուի մէջ թարգմանուած է այսպէս՝

«Դալիս լուռ սուր բնդառաջեմ՝ *ոգուց վեր թարգմանում*»։ Վերջին մասը — «Ոգուց վեր թարգմանում» ձեւը թարգմանութիւն չէ։ نسر جان بر خيزم (բառացի՝ ոգուց գլխից թարգմանում) այստեղ մատուցողը մեր «կյանքից ձեռք քաշել» իմաստն ունի։ برخاستن սովորաբար նշանակում է թարգմանել, բայց այս գազելում մի քանի տարբեր նշանակութեամբ է կիրառուած։

Այս տողը Սուդին այսպէս է մեկնաբանում՝

«Ո՞վ է նա գալու ասեսիր, որ կյանքիցս անցկենամ, այսինքն՝ կյանքս, որպես փառաւորութիւն այդ բարի լուրի, նուիրեմ»…

2) Այս գազելի առաջին եւ յետագայ մի քանի բէյթը կառուցուած է բանաստեղծի գեղեցկածածուի վրայ։

ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ԻՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2500-Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեծախորհուրդ են Իրանի Կայսրութեան հիմնադրման 2500 փառաւոր տարիների տօնակատարութիւնները։ Մեծախորհուրդ են այն իմաստով, որ ոչ միայն վերյիշեցնում են մի հնամենի ժողովրդի գոյատեւումն ու անկախութիւնը, այլեւ բովանդակում են համամարդկային քաղաքակրթութեան եւ մշակոյթի ոգիքն ու զարգացումը։ Մեծախորհուրդ են նաեւ նրանով, որ այս բարեբաստիկ առիթով պատմութեան ընդերքից յառնում է պատմութեան ամենամեծ առաջնորդներից՝ Կիւրոս Մեծի կերպարը ներկայ մարդկութեան մտապատկերում, մի անգամ եւս վերյիշել տալով պատմական այն նշանակալից անկիւնադարձը, երբ Կիւրոս Մեծը հրատարակեց մարդկային իրաւանց առաջին եւ իսկական յայտագիրը։ Դեռ աւելին՝ 25 երկարաձիգ դարերից յետոյ իրանական ժողովուրդը՝ յանձին Ն. Կ. Մ. Արիամեհր Արեաց Արքայի՝ օժտւում է մի այնպիսի լուսամիտ ու ճշմարիտ առաջնորդով, որ իրաւամբ կարող է համարել Կիւրոսի ամենաարժանաւոր ժառանգորդը՝ լինի դա քաղաքական հորիզոնում, համամարդկային առումով, թէ երկրի ներքին կեանքից ներս։

Հայ ժողովուրդը դարեր շարունակ եղել է Իրանի բարեկամը եւ այսօր էլ մնում է որպէս այդպիսին։ Հայ եւ պարսիկ ժողովուրդները պատմական անխախտ կապերով կապուած են իրար եւ այսպիսով Իրանի Կայսրութեան Հիմնադրման 2500-ամեակի տօնակատարութիւնների մէջ հայ ժողովուրդը, մասնաւորապէս Իրանի հայ գաղութը, ունի իր անբաժանելի մասը։

Այս փառաշուք օրերին իրանահայ գաղութը իր կատարած աշխատանքներով մի անգամ եւս եկաւ ապացուցելու իր խոր նուիրուածութիւնը Իրանին, Արիամեհր Արեաց Արքային եւ

Իրանի եղբայր ժողովրդին։

Յիշատակ-գրքոյկների կառուցումը, գոհաբանական մաղթանքները, բազմաթիւ հանդիսութիւնները, տեղիս հայ մամուլի անդրադարձը և այլ տօնախմբութիւնները լաւագոյն ապացոյցն են հայ ժողովրդի շինարար ոգու և նուիրուածութեան։

Ստորև տալիս ենք նշմարներ իրանահայ գաղութի՝ Իրանի Կայսրութեան հիմնադրման 2500-ի տօնակատարութիւններին բերած սրտագին մասնակցութիւնից։

1.— ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՃԱՌԵՐԸ

ա. ՊՐՆ. ՍԵՒԱԿ ՍԱԳԻՆԵԱՆ

բ. Դր. ԳԱԳԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ՊՐՆ. ՍԵՒԱԿ ՍԱԳԻՆԵԱՆԻ ՃԱՌԸ ՄԵՋԼԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԻՑ ՅԵՏՈՅ.—

Նախագահ. — *ՊՐՆ. ՍԱԳԻՆԵԱՆԸ օրակարգից յետոյ արտայայտուում է։*

ՊՐՆ. ՍԱԳԻՆԵԱՆ. — Նախագահութեան և յարգոյ պատուիրակութեանց թոյլտուութեամբ։

25 դար առաջ Կիւրոս Մեծը հիմնեց Իրանի Շահնշահութիւնը, որի հիմնաքարն էր մարդասիրութիւնն ու մարդկային իրաւունքների պահպանումը, որ ըսկզբից միախառնուեց իրանցիների բնութագիրը բնորոշող խանդաղատանքով ու հայրենասիրութեամբ։

Մենք այսօր հպարտ ենք որ տօնում ենք Իրանի

Կայսրութեան Հիմնադրման 2500-ամեակը՝ այնպիսի պահին, երբ կանգնած ենք մի փայլուն ապագայի սեմին և գտնւում ենք մեր հայրենիքի պատմական ամենափառաւոր շրջանում։

Այսօր՝ 2500 երկարաձիգ տարիներից յետոյ, շնորհիւ Կիւրոսի ամենաարժանաւոր ժառանգ Շահնշահ Արիամեհրի մարդասիրական ու լուսամիտ գաղափարների, էլ աւելի գեղեցկացել է մեր մշակոյթն ու քաղաքակրթութիւնը, իր վրայ հրաւիրելով բովանդակ մարդկութեան սէրն ու համակրանքը, որով բազմաթիւ երկրներ միակամ կերպով, նոյնիսկ մրցելով իրար հետ, յատուկ կոմիտէների միջոցով տօնում են Իրանի Շահնշահութեան Հիմնադրման 2500-ամեակը։ Զուր չէ որ աւելի քան յիսուն երկրների պարագլուխները այսօր մասնակից են մեր տօնակատարութիւններին, որպէսզի տեսնել և շուք տան համամարդկային բնոյթ կրող այս մեծ փառատօնին։

Այս փոթորկալից աշխարհում, ուրախ ենք, որ մեզ բախտ է վիճակուել ապրելու Շահնշահական մի փայլուն ժամանակաշրջանում, որը պարգեւել է մեզ խաղաղութիւն, անդորրութիւն և հանգիստ կեանք։

Մեր հայրենիքը, Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայից Արքայի ճշմարիտ առաջնորդութեան շնորհիւ, հսկայ քայլերով գնում է դէպի նորանոր նուաճումներ ու յաղթանակներ, վերականգնելու համար անցեալի մեծութիւնները և իրագործելով Սպիտակ Յեղափոխութեան վեհ նպատակները։

Դրանից բխող հսկայ յեղաշրջումները, որ արդէն խիստ պարզօրէն նշմարւում են մեր հասարակութեան բոլոր խաւերի մէջ, նպաստաւոր պայմաններ են ստեղծել երկրի երիտասարդ զանգւածների համար։ Նրանք այսօր գիտութեան, առողջապահութեան, բարենորոգչական և արդարադատութեան բանակայինի պատւաւոր կոչումով պայքարում են երկրի վերաշինութեան, ժողովրդի վերածննդի համար, ընդ որում ցուցաբերում են ուրախառիթ նուաճումներ, ճիգ ու ջանք։

Տգիտութեան դէմ մղւող միջազգային պայքարի ու Մարդու Բարօրութեան ծառայող Լեգէոնը որ մաս են կազմում Արիամեհր Արեաց Արքայի լուսամիտ գաղափարների, լուսաւորել են աշխարհի մութ անկիւնները, աւելի և բարձրացնե-

լով Իրանցու անունը, որպէս Սպիտակ Յեղափոխութեան ու ազատութեան դէմ պայքարող տիպարների։

Յարգելի պատւիրակներ, եթէ թերթելու լինենք Իրանի պատմութեան փառաւոր ու ոսկեդար էջերը, պիտի հանդիպենք այն իրողութեանը, որ հայերը Իրանում երբէք չեն զլացել իրենց լաւագոյնը մատուցանելու մեր սիրելի հայրենիքին ու արքաներին, և թերևս դա է պատճառը, որ հայերը միշտ էլ վայելել են Իրանի արքաների և ազնիւ ժողովրդի ուշադրութիւնն ու համակրանքը։

Այսօր նրանք երախտագիտօրէն տօնում են Իրանի Շահնշահութեան 2500-ամեակը՝ բոլոր հնարաւոր միջոցներով։ Աշխարհի տարբեր կէտերում լոյս ընծայող հայ մամուլի էջերում յայնօրէն արտացոլւել են Իրանին նւիրւած նիւթեր։ Աւելի քան երեք ամիս սրանից առաջ, «Ալիք» օրաթերթը և «ՅՈՅՍ» ամսագիրը անընդմէջ կերպով անդրադառնում են Իրանի պատմական անցեալի փառաշուք դրւագներին։

Մի հոյակապ նախաբանով, Ստամբուլում հրատարակւող «ՄԱՐՄԱՐԱ» օրաթերթը տալիս է Իրանի համառօտ պատմութիւնը, Արքայական տոհմակալութիւնների տեղի նկարագրութիւնը և ապա մանրամասնօրէն ուրւագծում է Կիւրոս Մեծի բնութագիրը։

«ՄԱՐՄԱՐԱՆ» — Կիւրոսին բնորոշում է նախ որպէս մի կայսրութեան հիմնադիր, գնահատելով նրա տաղանդն ու բընատուր շնորհքները կառավարչական ասպարէզում, և ապա նկարագրում է նրան՝ որպէս բարի մարդ։ Տւեալ յօդւածը լուսաբանում է այն անհերքելի ճշմարտութիւնը, որ Կիւրոսը առաջին պարագլուխն է աշխարհում, որ հրատարակել է մարդկային իրաւանց յայտագիրը վեց դար Քրիստոսի Ծնունդից առաջ։

Կիւրոսի հռչակը հասել էր այնտեղ, որ Սուրբ Գրքերը նրան համարել են մարդկութեան ամենամեծ դէմքերից, և շատ ժողովուրդներ կոչել են նրան որպէս «Հայր»։

Հետևաբար Կիւրոսի անձնականութիւնը և նրա մեծ գործի հռչակը վաղուց անցնելով Իրանի ազգային սահմաններից՝ տարածել է համաշխարհային և համամարդկային բնոյթ։

դառնալով շատերի սեփականութիւնը։ Այս հիման վրայ է, որ բազմաթիւ պատմագիրներ, փիլիսոփաներ և նոյնիսկ արեւամտագէտներ գրառանցով են արտայայտուած Կիւրոսի մասին։

Բէյրութում հրատարակուող «ԱԶԴԱԿ» հասարակագիտական և գաղափարաբանական շաբաթաթերթը իր վերջին համարում հաղորդելով նորութիւններ այն մասին, թէ ինչպէս են տօնում աշխարհի հայերը Իրանի Կայսրութեան հիմնադրման 2500 ամեակը, տեղ է տալիս Թեհրանի, Թաւրիզի և Ջուղայի Առաջնորդարանների հաղորդագրութիւններ՝ Իրանի տարբեր կէտերում յիշատակի դպրոցներ կառուցելու կապակցութեամբ։

Իրանի 2500-ամեակի տօնակատարութեանց մանրամասն տեղեկութիւնները կանոնաւորապէս լոյս են տեսնում Ամ. Միացեալ Նահանգների հայութեան օրգան «ՀԱՅՐԵՆԻՔ» օրաթերթի մէջ։ Այստեղ շարունակաբար հրատարակւում է նաև հայ իրանագէտներից մէկի պատմաբանասիրական յօդուածը նոյն առիթով։ Յօդուածագիրը, թափանցելով պատմութեան խորքը, վեր է հանում Իրանի փառաւոր անցեալը և դրան կապւող դէպքերն ու դէմքերը։

Լիբանանի հայերէնով հրատարակուող «ԱԶԴԱԿ» օրաթերթը ևս ուսումնասիրական ու մանրամասն յօդուածներով իր մասնակցութիւնն է բերել Իրանի 2500-ամեակի տօնակատարութեանց։

«ԱԶԴԱԿԻ» տեսանկիւնից յիշեալ տօնակատարութիւնները կրում են ազգային վերածնունդի բնոյթ։ Վերջում օրաթերթը եզրակացնում է, որ Իրանի թագաւորութիւնն ու ժողովուրդը միախառնուելով իրար, առեղծել են մի անքակտելի միասնականութիւն։

Աթէնքի հայութեան միակ օրգան «ԱԶԱՏ ՕՐ»-ը, որ անընդմէջ կերպով հրատարակւում է աւելի քան 27 տարուց ի վեր, իր առաջին էջում անդրադառնալով Իրանի 2500-ամեակին, գրում է.—

«Իրանի ժողովուրդը պատրաստւում է պատշաճօրէն տօնելու Իրանի Շահնշահութեան հիմնադրման 2500-ամեակը։ Այս բարեբաստիկ առիթով ցայժմ կատարուած աշխատանքներից՝ նշանակալից են թւով 2500 դպրոցների, 2500 էլէկտրոկայան-

ների և դիւղական ուսուցչութեան համար 2500 ընթերցարան-ների կառուցումը։

Իրանի Շահնշահութեան 2500-ամեակը պատմական մի աննախընթաց և կարեւոր երեւոյթ է, գա այն է որ Իրանի հաստատականութիւնը զուգորդուել է թագաւորութեան հետ այնպիսի ամուր կապերով, որ այլևս դարձել է անքակտելի։

Նշանակալից է նաև այն երեւոյթը, որ Իրանի Կայսրութեան հիմնադիր Կիւրոս Մեծը առաջին անձնաւորութիւնն է պատմութեան մէջ, որ հրատարակեց մարդկային իրաւանց առաջին յայտագիրը։ Հետեւաբար 2500-ամեայ տօնակատարութիւնները կրելով միջազգային բնոյթ, տօնւում են համաշխարհային չափանիշով»։

Ամերիկայի Միացեալ Նահանգներից և աշխարհի տարբեր կէտերից՝ իրենց հայրենիքը ժամանած հայերը, սրտի անհուն ուրախութեամբ ականատես եղան որ մեր խանդաշփոթ դարում, սիրելի Իրանը, Ն. Կ. Մ. Արիամեհր Արեաց Արքայի իմաստուն առաջնորդութեան շնորհիւ, ինչպիսի՞ վիթխարի քայլերով է գնում դէպի յուսապայծառ ապագայ։ Ուրախութեամբ ընկալեցին այն երեւոյթը, որ Իրանի հայերը իրենց հնարաւորութեանց սահմաններում գործակից են՝ Իրանի Սպիտակ Յեղափոխութեան գործադրման ի խնդիր։

Մենք, հայերս այսօր, բոլորից առաւել մասնակից ենք զգում մեզ Իրանի Կայսրութեան հիմնադրման տօնակատարութեանց և հպարտութեամբ յայտնում ենք մեր սրտագին պատրաստակամութիւնը Սպիտակ Յեղափոխութեան ժողովրդանուէր նպատակների իրագործման ճանապարհին, որոնք մասն են կազմում Կիւրոս Մեծի արժանաւոր ժառանգորդ Ն. Կ. Մ. Արիամեհր Արեաց Արքայի լուսաւոր գաղափարների։

Խօսքիս աւարտին հայցում եմ ամենակարող Բարձրեալից, որ պահպանի Ն. Կ. Մ. Արիամեհր Արեաց Արքային, Սիրեցեալ Թագուհուն և Թագաժառանգին (Կեցցէ՛ք)։

ԴՐ. ԳԱԳԻԿԻ ՃԱՌԸ, ՄԱՋԼԷՍԻ ՕՐԱԿԱՐԳԻՑ ՅԵՏՈՅ ԱՍԻԱԾ.—

Նախագահ.— Դր. ԳԱԳԻԿԸ այժմ ելոյթ կ'ունենայ որպէս համախոս օրակարգից յետոյ։

Խնդրեմ համեցէք։

Դր. ԳԱԳԻԿ.— Մեծարգոյ պրն. Նախագահ, յարգելի գործակիցներ, տիկնայք, պարոնայք.—

Անցեալ օրերը մեզ համար եղան ուրախութեան, ոգեւորութեան եւ աննախընթաց զգացումների պահեր։ Օրեր, որոնց ընթացքում մեր հայրենիք Իրանը ունեցաւ օգտաւէտ թռիչք ու շարժում, որով այս բարեբեր երկրի բովանդակ ծագերում արեւելքից-արեւմուտք, հիւսիսից-հարաւ, մենք ականատես եղանք փայլուն յեղաշրջումների ու փոփոխութեանց։

Ողջ երկրում՝ թէ Թեհրանում, թէ ծաղիկների քաղաք Շիրազում, գունագեղ Սպահանում թէ հովասուն Թաւրիզում, հիւսիսային՝ ծովափնեայ նահանգների կապուտակ եզերքներին, թէ գիւղական շրջաններում, գարնան մի շունչ է փչում ամեն տարածւում է Իրանի տասնեակ դարերի գարնանային զեփիւռը։

Իրանը, որպէս Կայսրութիւն, դարձել է 2500 տարեկան, որովհետեւ անցնող 2500 փառաւոր տարիների ընթացքում եղել է եւ մնում է որպէս ազգային յատուկ խորհրդով առլեցուն մի հասարակայնութիւն։ Քայլել է խորտուբորտ ճանապարհներից, անցել է երբեմն փշոտ, փշոտ, երբեմն ծաղկոտ ուղիներից։

Պատմութեան ընթացքում ունեցել է բարեկամներ, հանդիպել է նաեւ թշնամիների։ Դարերի ընթացքում արտայայտուել կրօնական, մշակութային, լեզուական եւ այլ ազգակներով, որով մնացել է հաստատուն ու անխախտ չկորցնելով իր իւրայատուկ

գիմագիծը։ Մնացել է Իրանը։

Կիւրոս Մեծից մինչև Արիամեհր Արքայից Արքայի փառաշուք թագաւորութեան այս շրջանը, Իրանը, հակառակ պատմութեան վերիվայրումներին յաջողել է ձեռք բերել փայլուն նուաճումներ ու յառաջադիմութիւններ։

Այն ազգերը, որոնք հարուստ են անցեալով, եթէ սոսկ հպարտութեան առարկայ ունենան իրենց պատմութիւնը համեմատելով անտեսուած դրամի հետ և գոհանան լոկ երազներով, անշուշտ անդրդայլի մէջ են, հետևաբար չպիտի մոռանան որ մեր օրերի հսկայ յառաջադիմութեանց ու վերելքի այս դարում, անցեալ նշանակում է յետադիմութիւն, ճիշտ այն լճի պէս, որ եթէ չլցուի նոր ջրով՝ պիտի չորանայ։

Մեր սիրեցեալ արքան, թագաւորութեան սկզբից ցայժմ իր լուսամիտ ուղղութիւններով ու հեռատես քաղաքականութեամբ մեծ ուշադրութիւն է ցուցաբերում կրթական մակարդակի բարձրացմանն ու ժողովրդի վիճակի ու կենցաղի բարելաւմանը։ Չքաւորութեան վերացումը, գիւղական առումով պայմանների ու գործոնների բարելաւումը, պայքարը տգիտութեան դէմ, բնական հարստութիւնների շահագործումը՝ խնդիրներ են, որ միշտ եղել են Արքայից Արքայի հեռատես քաղաքականութեան կենտրոնում։ Հետևաբար այսօր բողբոջում են, մասնաւորաբար անցնող տասնամեակի ընթացքում, Իրանի խաղաղ մթնոլորտում ցանուած սերմերը։

Մենք՝ հայերս, այն ինչ յիշում ենք և որ գա մաս է կազմում մեր պատմութեան և ցոյց է այսօրուայ մեր կեանքը հիմնուած է անցեալի անցքերի վրայ, որոնք քանդակուած են Թախթը Ջամշիդի քարէ արձանագրութեանց մէջ և մեր սրտերը քարէ այդ քանդակների պէս իրենց վրայ լաւագոյն ձևով դրոշմուած են պահում Իրանի Կայսրութեան թանկագին յուշերը՝ սկսած Կիւրոս Մեծից, հասնելով մեր պանծալի օրերի ժամանակաշրջանին։

Իւրաքանչիւր խնդրի լինելութիւնը հիմնուած է արդարութեան վրայ, իսկ Իրանի Շահնշահութեան հիմքը դարեր շարունակ եղել է արդարադատութիւնը։ Դրա ամենալաւ ապացոյցը այն բարի վերաբերմունքն է, որ զգացել են փոքրա-

ժամանութիւնները Իրանում, պատմութեան ընթացքում։

Մեզ՝ հայերիս համար 2500-ամեակի տօնակատարութիւնները ունեն մասնաւոր նշանակութիւն։

Պատմականօրէն ոչ մի երկիր և ոչ մի ժողովուրդ այս աշխարհում աշխարհագրականօրէն ինչպէս և ցեղային և ընկերային և այլ տեսակէտներից այնքան մօտ է եղել մեր Հայաստան աշխարհին և մեր Հայկազնեան ցեղին, որքան Իրանն ու Իրանցին։ Նախնական ժամանակներից սկսած, բայց մանաւանդ Արշակեան ցեղի Փոքր Ասիայում հաստատման ժամանակներից՝ շատ սերտ, շարունակական և անքակտելի յարաբերութեան մէջ են եղել Իրանցի և Հայ ժողովուրդները։

Աւելացնենք և այն, որ բացի ուրիշ կապերից, հայերը երկար դարեր ապրել են Պարսկաստանում, և դրա շարժառիթը ընդհանրապէս եղել են պատերազմական դրդապատճառները ու քաղաքական վայրիվերումները։ Գոյութիւն ունեն պատմական պարզ ակնարկներ ու փաստեր, որոնք վկայում են այն մասին, թէ հայերը գաղթել են Իրան 11-րդ դարից Սելջուկների և ապա Մոնղոլների արշաւանքներից յետոյ։

Այս շրջաններում բազմաթիւ հայեր փոխադրուելով Իրան՝ բնակութիւն են հաստատել Թաւրիզում, Մարանդում, Խոյում, Շահփուրում, Մարաղայում, Ռէշտ և Արաք քաղաքներում, ինչպէս նաև Հիւսիսային շրջանի բնակավայրերում։

Հայերի գաղթը դէպի հարաւ, որ տեղի ունեցաւ 17-րդ դարում Մեծն Շահ Աբբասի հրամանով, ունի պատմական նշանակութիւն։ Հազարաւոր հայեր գաղթեցին ժամանակի մայրաքաղաք Սպահան և հաստատուեցին Զայանդէրուդի հարաւային եզերքին։ Այնտեղ հիմնեցին Նոր-Ջուղա աւանը և ունեցան հանգիստ ու բարօր կեանք, որովհետև Շահ Աբբասը և նրա յետնորդները լաւագոյն կենցաղային պայմաններ շնորհեցին նրանց։

Հայ հարուստ ու կարկառուն վաճառականները այս շրջանում մեծ դեր են ունեցել Իրանի արտաքին առեւտրի ծաւալման խնդրում, լինի դա Եւրոպայում թէ Արեւելքում։ 17-րդ դարու ֆրանսիացի նշանաւոր աշխարհաշրջիկ Թաւերնիէն հայ առեւտրականների մասին գրում է.—

«Սրանք կարճ ժամանակում այնքան յառաջադիմեցին, որ այլեւս չի մնացել որեւէ առեւտրի ճիւղ, որ չձեռնարկեն, այժմ առեւտրի մէջ են հեռաւոր կէտերի՝ օրինակ Թունքէնի, Ջաւայի, Ֆիլիպինի, Չինաստանի, Ճապոնիայի ինչպէս նաեւ Ռուսիայի հետ»:

Ներկայիս, երբ գտնւում ենք 20-րդ դարու եօթերորդ տասնամեակում, չպիտի անտեսել այն երեւոյթը, որ Իրանը անցնելով պատմութեան փոթորիկների միջից՝ այսօր վայելում է մի այնպիսի խաղաղութիւն, որից զուրկ են Միջին Արեւելքի, Հեռաւոր Արեւելքի եւ աշխարհի այլ բազմաթիւ երկրները: Ուստի փառաբանենք Աստծուն եւ Իրանի լայնախոհ եւ իմաստուն առաջնորդ Արիամեհր Արքայից-Արքային, որ մեզ շնորհել է այս խաղաղ մթնոլորտը՝ նոր յառաջդիմութիւնների ու նուաճումների նպաստաւոր ժամանակաշրջանը:

Այսօր աշխարհի շատ տեղերում կրօնական վերածնունդի շօշափելի երեւոյթներ են պարզւում: Մասնաւորաբար համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ, մարդկութեան կրած խորունկ ցնցումի յառաջ բերած ինքնագիտակցութեան շնորհիւ, մարդիկ անդրադարձան որ առանց կրօնական զգացումի առանց Աստուծոյ ներկայութեան գիտակցութեան, առանց հոգեւոր-բարոյական ճշմարտութիւնների եւ սկզբունքների հասկացողութեան՝ մարդ ի վերջոյ կը դառնայ գազանային կիրքերի տէր մի էակ եւ ինքն իրեն մեծագոյն թշնամին:

Հոգեւորականներն ու կրօնական առաջնորդները հանդիպում են իրար հետ, աշխարհիկ թէ հոգեւոր անհատները մասնակցում են կոնգրեսների, համագումարների եւ հակառակ անցեալի ոչ դաւանաբանական պայքարների ու ախտաղթութիւնների փոխարէն, այսօր բարեկամութեան եւ եղբայրութեան ձեռք են մեկնում իրար՝ աւելի եւս ամրապնդելու կրօնի ու հաւատքի հիմունքները: Ինչպէս որ Իսլամի զանազան դաւանանքները, մերձեցման շարժումի հետեւանքով, իրար են գալիս եւ այս շարժման հիմնադիրներից մէկը Իրանցի է: Մենք եւս յոյս ունենք, որ այս խորհրդակցութիւնն ու մերձեցումը միւս Աստուածային կրօնների մէջ եւս տեղի ունենայ, ինչպէս որ արդէն տեղի է ունենում Քրիստոնեայ աշխարհում:

Այս ժողովրդի կեանքի վրայ ունեցած կրօնական հաւատացողութեան և նրա կենսական ազդեցութեան պատճառով է, որ Ն. Վ. Մ. Արիամեհր Արքայի հրամանով կեանքի է կոչուել «Կրօնի Բանակը» և այսպիսով տեսնում ենք, որ մի առողջ կեանքի ստեղծման համար առաջին հիմնական կէտը կրօնն է համարւում։

Որովհետև իմ յարգելի համագործակից պրն. Սագինեանը երկարօրէն արդէն անդրադարձել է հայերի մասնակցութեան 2500-ամեակի փառահեղ տօնակատարութեան և Իրանի ու արտասահմանի հայկական մամուլի անդրադարձումներին, ուստի ես խուսափում եմ կրկնութիւններից։

Ուշադրութեան արժանի խնդիրը Թախթը Ջամշիդի մէջ տեղի ունեցած փառահեղ տողանցքն էր, որին բոլորս ականատես եղանք հէնց տեղի վրայ կամ հեռուստատեսի միջոցով և տեսանք թէ ինչպէս պատմութեան բոլոր շրջանների Իրանեան զօրքերի տողանցքի վերջին և ռազմական բոլոր ցուցադրութիւններից յետոյ տողանցեցին գիտութեան, առողջապահութեան բանակայինները, ինչպէս և մարդկութեան ծառայող Լէգէոնի անդամները, որոնք բոլորն էլ ծնունդն են Ն. Վ. Մ. Արիամեհր Արքայից Արքայի բարձր գաղափարների, որով համայն մարդկութեան ցոյց է տրւում թէ ինչպէս Իրանցիք յարգանք ունեն աշխարհի խաղաղութեան և մարդկային պարտականութիւնների հանդէպ։

Այժմ ամենայն պատուութեամբ պարտականութիւն եմ համարում աղերսել Աստծուց, որպէսզի Ն. Վ. Մ. Արիամեհր Արքային, Ն. Վ. Բ. Սիրեցեալ Թագուհուն և սիրելի Թագաժառանգին առողջութիւն, երկար կեանք և իրենց իշխանութեան յարատեւութիւն պարգեւէ։

2 — 2500-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՆԵՐՍ

ԹԵՀՐԱՆ

— Իրանի Կայսրութեան 2500-ամեակի առթիւ Թեհրանի Հայ Ակումբի վարչութեան նախաձեռնութեամբ, Հոկտ. 15-18-19-ին, երեք գիշեր, Հայ Ակումբի սրահում տեղի են ունեցել ուրախ խրախճանքի երեկոներ մասնակցութեամբ հայ և պարսիկ հոծ բազմութեան:

— Թեհրանի Հ. Կ. Ը. Ընկերութիւնը, Հոկտ. 11-ին իր միութենական ժողով թէյասեղանը նուիրել է Իրանի Կայսրութեան Հիմնադրման 2500-ամեակին: Ներկայ են եղել մեծ թւով միութենականներ և համակիրներ: Երեկոն անցել է ջերմ և ուրախ մթնոլորտում. եղել են արտայայտութիւններ, գովաբանելով Մեծն Կիւրոսի արժանի ժառանգ Իրանի Արիամեհր Արքայից Արքայի ճշմարիտ առաքելութիւնը՝ մարդկային իրաւանց պաշտպանման ճանապարհին:

— Թեհրանի Հայ Կին Միութիւնը Հոկտ. 24-ից մինչև 27-ը Իրանի Կայսրութեան Հիմնադրման 2500-ամեակի առթիւ կազմակերպել է ցուցահանդէս՝ «Հայ Կնոջ ձեռքի աշխատանքների ու զանազան արուեստների»:

Ցուցահանդէսը իր խնամուած և գեղեցիկ դասաւորումով արժանացել է բարձրաստիճան այցելուների և ժողովրդի գնահատանքին:

— Բացի վերը յիշուած ձեռնարկներից, 2500-ամեակի տօնակատարութեան օրերին Թեհրանի բոլոր ազգային դպրոցներից ներս եղել են դպրոցական հանդէս-խրախճանքներ՝ նուիրուած Իրանի Կայսրութեան 2500-ամեակին, ինչպէս նաև լուսազարդուել և դրօշազարդուել են բոլոր ազգային դպրոցներն ու ազգային հաստատութիւնների շէնքերը:

ԹԱՒՐԻԶ

1971 Թւի Հոկտ. 15-ին, ուրբաթ երեկոյեան, Ազգ. Թեմական Խորհրդի նախաձեռնութեամբ, Թաւրիզի Հայոց Ակումբի սրահում կազմակերպուած պաշտօնական ընթրիքի ընթացքում, Թաւրիզահայութիւնը ոգեկոչել է Իրանի Կայսրութեան Հիմնադրման 2500-ամեակը և Նոր Իրանի վերելքը։

Երեկոյի գեղարուեստական կարճ ծրագրից յետոյ Դոքտ. Ռոբէրտ Յովհաննիսեանը Թեմական Խորհրդի կողմից շնորհաւորանքի և Իրանին էլ աւելի բարգաւաճման մաղթանքի խօսք է ասել։ Այնուհետև Արեւելեան Ատրպատականի նահանգապետ Ն. Վ. Դրն. Սարլաքը շնորհակալութիւն է յայտնել Թաւրիզահայութեան՝ իրենց բերած մասնակցութեան համար Իրանի փառքի տօնակատարութեանց, ինչպէս նաև արքայատիրական ու հայրենասիրական անխառն զգացումների համար։ Հիւրերին բաժանուել է Ատրպատականի Հայոց Թեմ. Խորհրդի կողմից հրատարակուած «2500 տարի Իրանի Կայսրութեան Հովանաւորութեան Ներքոյ» պարսկերէն գրքոյկը։

ՆՈՐ - ՋՈՒՂԱ, ԻՍՖԱՀԱՆ

Իրանի Կայսրութեան Հիմնադրութեան 2500-ամեակի բարեբաստիկ առիթով, Հոկտ. 15-ին, բացումն է կատարել Նոր-Ջուղայի հայոց Նորակառոյց Թանգարանի։ Ներկայ են եղել Իսֆահանի Նահանգապետը, Իրանի Խորհրդարանի երկու հայ պատգամաւորները, պետական հայ ու պարսիկ բարձրաստիճան պաշտօնեաները, Թեհրանի Թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. ԱՐՏԱԿ Սրբ. Արք. ՄԱՆՈՒԿԵԱՆԸ, Իրանահնդկաստանի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Եպիսկ. ՍԱՐԳՍԵԱՆԸ և տեղացի ազգայիններ։

Հանդէսի բացումը կատարել է Գերշ. Տ. Գարեգին Սրբ. Եպիսկ. Սարգսեանը։ Այնուհետև Խորհրդարանի պատգամաւոր Պրն. Սեւակ Սաղինեանը հայ ժողովրդի հաւատարմութեան խօսքն է ասել Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայից Արքային։

Երեկոյթի ընթացքում Թեհրանի Թեմի Բարեխնամ Ա-

առաջնորդ Գերշ. Տ. Արտակ Ս. Արք. Մանուկեանը անդրադարձել է Իրանի Կայսրութեան 2500-ամեակի առթիւ տեղի ունեցած ձեռնարկների նշանակալից ազդեցութեանը, ինչպէս նաև հայ և պարսիկ բարեկամական յարաբերութիւններին։

Հանդիսութեան ընթացքում Ն. Վ. Նահանգապետը, ինչպէս նաև պարսիկ հիւրերը, գնահատանքով են արտայայտել հայ ժողովրդի շինարար ոգու մասին։ Հանդէսի գեղարուեստական բաժնին իր մասնակցութիւնն է բերել Նոր-Ջուղայի Կարա-Մուրզա երգչախումբը՝ պրն. Հրանդ Աճէմեանի ղեկավարութեամբ։

3 — ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

1971 Թւի Հոկտ. 4-ին Թեհրան են ժամանել Ամերիկայից Իրանահայ Միութեան անդամներից շուրջ 200 հոգի, մասնակցելու Իրանի Կայսրութեան 2500-ամեակի տօնակատարութեանց։

Այցելութիւնը կազմակերպուել է Հ. Մ. Ա. Կ.-ի Կենտր. Վարչութեան կողմից։ Հիւրերը մէկ ամիս տեւողութեամբ եղել են Իրանի զանազան քաղաքներում և ամենուր խանդավառուել են Իրանի վերջին տարիների վերելքով։ Այս երեւոյթը լաւագոյն ապացոյցն է այն անխախտ բարեկամական կապի, որ գոյութիւն ունի երկու եղբայրակից ժողովուրդների մէջ։



4 - 2500-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—

1.— Ն. Կ. Մ. Արիամեհր Արքայից Արքայի «Սպիտակ Յեղափոխութիւն» գրքի հայերէն թարգմանութիւնը Թեհրանի Հայոց Թեմ. Խորհրդի կողմից: Թարգմանութիւնը կատարել է պրն. Աշոտ Մուրադխանեանը:

2.— Գերյն. Տ. Գարէգին Ա. Եպիսկ. Սարգսեանի «Թուղթ առ ժողովուրդը» գրքոյկը նուիրուած Իրանի Կայսրութեան 2500-ամեակին, հայերէն և պարսկերէն, իւրաքանչիւր մաս տարբեր գրքոյկով: Պարսկերէն թարգմանութիւնը կատարել է Դոկտ. Հրանդ Ղուկասեանը: Գիրքը հրատարակել է Իրանա-հնդկաստանի Թեմ. Խորհրդի կողմից:

3.— «2500 տարի Իրանի Կայսրութեան Հովանաւորութեան ներքոյ» պարսկերէն գրքոյկը, հրատարակութիւն Ատրպատականի Հայոց Թեմ. Խորհրդի կողմից: Գիրքոյկը կազմել է Ճրագ. Պրն. Էմիլ Յակոբեանը:

4.— «Կիւրոսապատում» գիրքը, հեղինակութիւն Քսենեֆոնի թարգմանել է պրն. Աշոտ Մուրադխանեանը:

5.— Բացի վերոյիշեալ հրատարակութիւններից «Ալիք» օրաթերը լոյս է ընծայել բացառիկ մի թիւ, նուիրուած Իրանի Կայսրութեան 2500-ամեակին:

6.— Այսօրուայ թւով լոյս է տեսնում «ՀՈՒՍ» ամսագրի 3-4 միացեալ թիւրը նուիրուած նոյնպէս Իրանի Կայսրութեան 2500-ամեակին:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹԻ 40-ԱՄԵԱԿ

1971 թ. Մարտ 22-ին, լրացաւ «Ալիք» Օրաթերթի քառասուն տարին: Այս առիթով օրաթերթը պատրաստում է պատշաճօրէն տօնելու իր քառասունամեայ յոբելեանը: Կազմուել է Յոբելեանական Յանձնախումբ պրն. պրն. Ա. Տ. Օհանեանի, Ս. Սարուխանեանի, Ա. Մամեանի և Ժ. Ղարիբեանի մասնակցութեամբ:

ԳԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՅՈՒՇԵՐԵԿԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Իրաւամբ կարելի է ասել, որ 1971 թ. Սեպտ. 12-ին հանճարեղ բանաստեղծը Թեհրանահայութեան մէջ էր։ Առինքնել է ընա բոլորի հոգիներում, մերթ իր ստեղծագործութիւններով, մերթ հարազատ ձայնով, մերթ անկրկնելի անձնականութեամբ։

«Այն էլ զգացի՝ ցա՜վ զգացի,
Որ կտրելուց հետո է միայն
Երևում ծառի բուն հաստությունը»։

Արդէն առակի բնոյթ ստացած և ժողովրդի սեփականութիւնը դարձած այս խորիմաստ տողերը, ոչ միայն հաստատւում էին իրենց անողոք մերկութեամբ, այլև «հրապուրելու» ողբերգական առեղծուածը, որ պարփակւում է հակատագրական խաղի սահմանափակ խորհրդի մէջ, սարսափանքով էր ընկալւում ներկայ բազմահազար հասարակութեան կողմից։

Երեկոն տպաւորիչ էր, թէ իր աներաշունչ ոգիով, թէ յաջող բանախօսութեամբ, կատարումներով և մասնաւորաբար յուզիչ էր Գարոյր Սևակի ձայնի սփռումը, որ տարաբախտ բանաստեղծի պատգամն էր ամուսնոց Յակոբ Կիւլոեանին։

Իրանահայ Գրողների Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած այս յուշերեկոն արժանի է գնահատանքի։

ԳԵՏՕ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՄԱՀԸ ՈՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Իրանահայութիւնը հասարակական վաստակաւոր գործիչ՝ պրն. Գետօ Գրիգորեանի ցաւալի մահուամբ, որ տեղի ունեցաւ սոյն թւի Օգոստոս 30-ին, կրեց մեծ կորուստ։

Գետօ Գրիգորեանը ծնուել է 1902 թ. Փետր. 31-ին Թեհրանում, Գրիգորեան անուանի գերդաստանում։ Իր կրթութիւնը ստացել է Ղազւինի ազգ. դպրոցում, Թեհրանի ռուսական գիմնազիայում և մէկ տարի եղել է Մոսկուայի «Ռեալական» դպ-

բոցի ուսանող։

1916 թուականից պաշտօնավարել է պետ. և այլ հաստատութիւններում և 1962 թւին հանգստի է կոչուել Նաւթի Ազգ. Ընկ.-ի կողմից։

Տարիներ շարունակ, մինչև իր դառնակսկիծ մահը եղել է «Ալիք» Օրաթերթի հրատարակչական բաժնի նախագահ. միաժամանակ Թեհրանի ազգային հաստատութիւններից ներս՝ համագործակցել է հաշուեքննիչ, ներկայացուցչական, թեմի պատգամաւորական և այլ ժողովներին։

Թեհրանահայութիւնը ազգային թաղումով և ժողովրդի խուռներամ մասնակցութեամբ, հրաժեշտի և գնահատանքի վերջին տուրքը տուեց վաստակաւոր գործիչին։

Յարգանք նրա անթառամ յիշատակին։

ՇԱՐԼ ԱԶՆԱՒՈՒՐԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Ն. Վ. Բարձրութիւն Ֆարահ Փահլաւու բարձր հովանաւորութեամբ Սեպտ. 8, 9, և 10-ին տեղի ունեցան Բարտներին Թնամոց Միութեան սրահին կազմակերպուած երգահանդէսներ, որոնց իր մասնակցութիւնն էր բերել հայազգի աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուրը։

Երգահանդէսները անցան բուռն յաջողութեամբ և արժանացան ներկայ հասարակութեան գնահատանքին, ապահովելով շօշափելի եկամուտ տուեալ նպատակի համար։

Սեպտ. 11-ին Շարլ Ազնաւուրը թողեց Թեհրանը Ֆրանսիա վերադառնալու համար։

Ա. ԱՒԵՏԻՍԵԱՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

«Ալիք» օրաթերթի Սեպտ. 1, 1971 համարում, հրատարակել է Աւետիսեան բուժարանի Վարչութեան միամեայ գործունէութեան համառօտ զեկուցագիրը՝ 1970թ. Մայիս 1-ից առ. 1971 թ. ապրիլ 30-ը։ Այս ընթացքում բուժարան են այ-

ցելել աւելի քան տաս հազար հոգի հիւանդներ և այլն, որոնք բուժման են ենթարկել ներքին հիւանդութեանց, ակնաբուժական, ատամնաբուժական, կանացի հիւանդութեանց, ռադիօլոժիի, պատուաստումների և այլ բաժիններում:

Համաձայն զեկուցագրի բուժարանը հովանաւորել է Աւետիսեան բարերար գերդաստանը, բարեգործական զանազան մարմինների և այլ բարեսէր անհատների նիւթական աջակցութեամբ, լրացնելով այն բացը, որ գոյացել է կարիքաւոր այցելուների ձրի կամ խոշոր զեղչերի բուժման, ինչպէս նաև անհրաժեշտ ծախսերի հետևանքով:

Վերջում նշուած է, որ Վարչութիւնը ջանք է թափում բուժարանը ինքնաբաւ վիճակի տակ դնելու ուղղութեամբ, որով դա կը դառնայ սփիւռքահայութեան կեանքում իր տեսակի մէջ օրինակելի մի հաստատութիւն:

Ամփոփեց՝ Արմինէ Մարութխանեան

ԻՐԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ՎԱՆՔԵՐԸ

ԷՄԻԼ ՅԱԿՈԲԵԱՆ

I.

Ս. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔԸ

(Շարունակութիւն Ա. թւից)

Ե. — ԹԱԴԷԻ ՎԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՒՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ.—

Ս. Թադէի Վանքի և իր հիմնադրման մասին ստոյգ տեղեկութիւններ չկան. մինչև այսօր ինչ որ գրւել է իր մասին՝ հիմնւած է եղել զանազան ենթադրութիւնների վրայ։ Խուսափելու համար նման ենթադրութիւններից՝ այս աշխատութեան մէջ աշխատել ենք ժամանակագրական կարգով տալ բոլոր այն տեղեկութիւնները, ինչ որ կարողացել ենք հաւաքել։ Այս տեղեկութիւնների վրայ յետագային պէտք աւելանան Մատենադարանի պարսկերէն ֆարմանների և կալւածագրերի տեղեկութիւնները, ինչպէս նաև Թաւրիզի Հայոց «Մելիք-Թանգեան» Թանգարանի վաւերագրերի ու Թաւրիզի Ազգային Առաջնորդարանի արխիւներից քաղած պատմական տեղեկութիւնները, որոնք այնքան վաւերական տեղեկութիւններ ունեն յատկապէս վերջին երեք դարերի ընթացքում կատարւած աշխատանքների և գէպքերի մասին։

Ուրախ ենք որ Ատրպ. Հայոց Թեմական Խորհրդի բարեհաճ արտօնութեամբ «Հուր» ամսագրի առաջին համարից իսկ հերթականօրէն լոյս են տեսնում բոլոր այդ վաւերագրերը, գիտութիւն ընձեռելով Ս. Թադէի Վանքի պատմութեամբ հետաքրքրւող բոլոր անհատներին։

Այժմ տանք պատմական հերթականութեամբ Ս. Թադէի Վանքին առընչւող պատմական տեղեկութիւնները.—

48 Թ. Ք. Յ. — Ս. Թադէոս Առաքեալը 15 տարի շարունակ Հայաստանում առաքելութեան պաշտօն կատարելուց յետոյ, Սանատրուկ արքայի հրամանով, շատ քրիստոնեաների և արքայադուստր Սանդուխտ Ս. Կոյսի հետ նահատակւում են Շաւարշան կամ Արտազ գաւառում 48 Թ. Ք. յ.:

Ս. Թադէոս առաքեալի և Ս. Սանդուխտ Կոյսի մարմինները հաւատացեալները ամփոփում են Շաւարշան գաւառի Սանատրուկ կոչւած դաշտի մի բլրակի գագաթի արեւմտեան կողմը՝ մի մեծ քարի տակ։

239 Թ. Ք. Յ. — Ըստ աւանդութեան՝ Թադէոս առաքեալի նահատակութեան տեղում գոյութիւն ունեցող մի սրբատեղում յղանում է Ս. Գրիգոր Լուսաւորչի մայրը:

400 — 500 Թ.

Ք. Յ. — Մովսէս Խորենացու վկայութիւններից երեւում է, որ իր ժամանակ Արտազի դաշտումն են գտնուելիս եղել Ս. Թադէոս առաքեալի և Ս. Սանդուխտ կոյսի գերեզմանները, սակայն վանքի մասին որևէ յիշատակութիւն չի անում։

633 Թ. Ք. Յ. — Կարինի եկեղեցական ժողովի մասնակիցների շարքին յիշւում է Արտազի արքեպիսկոպոս Տիրատուրը, որ հաւանաբար նստում էր Ս. Թադէի վանքում։

721 Թ. Ք. Յ. — Ըստ Յայսմաւուրքի՝ Յովհան Օձնեցու Կաթողիկոսութեան և Վահան Ամիրկոնեանի իշխանութեան ժամանակ տեղի է ունեցել Թադէոս առաքեալի և Սանդուխտ կոյսի նշխարների գիւտը։

900 — 1000 Թ.

Ք. Յ. — Թովմա Արծրունին առաջին պատմաբանն է որ խօսում է Ս. Թադէի վանքի մասին։ Թովմա Արծ-

բանին ապրում էր տասներորդ դարու սկզբնե-րում։

1113-1114 Թ.

Ք. Յ. — Բարսեղ Կաթողիկոսի մահւանից յետոյ Աղթամարի Աթոռը ըմբոստանում է և Կաթողիկոս է ընտրւում Դաւիթ Թոռնիկեան արքեպիսկոպոսին։ Սրան հնազանդութիւն է յայտնում նաև Ս. Թադէի Վանքը։

1100-1300 Թ.

Ք. Յ. — Արաբագիր պատմագիր Համդուլլահը Մաթոֆին Մակուի շրջանը, ուր գտնւում է նաև Ս. Թադէի վանքը, համարում է քրիստոնեայ վանականների նստավայրը։

1229 Թ.Ք.Յ. — Չինգիզ Խանի մահից երկու տարի յետոյ տեղի է ունենում Մոնղոլ իշխանների համագումարը՝ Կուրիլթայը, ուր Օգթայ-Կաանը կամ Հաքաթա-Խանը ընտրւում է որպէս Խան։ Նոյն համագումարում որոշւում են պատժել Խուարէզմշահ Ջալալ-էդ-դին Մանքաբրանի-ին՝ ուղարկելով մի բանակ դէպի Ատրպատական։ Բանակի հրամանատարութիւնը յանձնւում է անւանի զօրապետ Չարմաղան Նոյան-ին, որը 1230-31 թւերին մտնում է Ատրպատական և Մուղանի դաշտում անակնկալի մատնելով թշնամուն՝ պարտութեան է մատնում Ջալալ-էդ-դինի բանակներին և կողոպուտի է ենթարկում ամբողջ Ատրպատականը։ Այս կողոպուտից զերծ չէ մնում նաև Ս. Թադէի Վանքը։ Մեր պատմիչ Կիրակոս Գանձակեցին Չարմաղանին կոչում է «այր խորագէտ ու իմաստուն»։

Չարմաղանից յետոյ գալիս է Բայջու մոնղոլ զօրապետը։ Այս զօրապետը 1242 թւին լրացնում է այն՝ ինչ որ կիսատ էր

թողել Չարմաղանը Ս. Թադէի Վանքում։

Մոնղոլական զօրավարների այս աւարառութեան վերջ է տալիս Իլխան Արղունը։ 1265-1285-ին նշանակւում է Իրանի կուսակալ։ Իլխան Արղունը Հօլաքու-Խանի քարտուղարը լինելով՝ մնում է այս պաշտօնին մինչև Հօլաքու-Խանի Իրան գալը, որից յետոյ նրա մտերիմների շարքն է անցնում։

1243 Թ.Ք.Յ. — Կոստանդին Կաթողիկոսի հրաւէրով Սսում գումարւած եկեղեցական ժողովին, որ պիտի պատասխանէր Պապի նամակին, հրաւիրեալների շարքում յիշւում է նաև Ս. Թադէի Վանքի վանահայր Յովսէփ վարդապետը։

1247 Թ.Ք.Յ. — Յովսէփ վարդապետը շինում է Ս. Թադէի գաւիթը, որովհետև թուրքերն ու վրացիները աւերել ու կողոպտել էին վանքը, որի հետևանքով երկար ժամանակ վանքը մնացել էր ամայի և անմարդաբնակ։ Յովսէփ վարդապետի ջանքերով և Կոստանդին Կաթողիկոսի նիւթական օժանդակութեամբ վերականգնւում է վանական կեանքը։ Արղուն զօրավարը նախապէս իր հաւանութիւնն ու արտօնութիւնն էր տւել վանքի նորոգութեան համար։

1253 Թ.Ք.Յ. — Հօլաքու- Խանը իր եղբօր՝ Մանգու Խանի կարգադրութեամբ և իր բանակով, որի զինւորների մեծ մասը բաղկացած էր Մոնղոլ-քրիստոնեայ ցեղերից (Քարաիթ-Նայման-Օյղուր) արշաւում են Բաղդադի վրայ, որի գրաւումից յետոյ Մարաղան դարձնում են իրենց մայրաքաղաքը։

Հօլաքու-Խանի մայրը՝ Սարկոյթի-Խաթունը և Հօլաքուի կինը՝ Դոկուզ-Խաթունը երկուսն էլ լինելով քրիստոնեայ, Հօլաքու-Խանը բարեացակամ վերաբերմունք է ունենում քրիստոնեաների հանդէպ։ Իր օրոք Ս. Թադէի վանքը նո-

թողւում է և վանքին են յատկացւում մի շարք կալւածներ։

1284 Թ.Ք.Յ. — Իշխան Արղունը բարձրանում է գահ։ 1285 թւին Կիլիկիոյ Հայոց թագաւոր Լևոն Գ.-ը Թորոս Փիլիսոփայի հետ այցելում է Արղուն Խանին և բարեկամական դաշն է կապում։ Հայոց թագաւորը իր շքախումբով այցելում է նաև Ս. Թադէի, յատկապէս տեսնելու համար վանքը և վանահայր Տէր Տիրացու եպիսկոպոսին, որին յետոյ Մոնղոլները բռնում են, սոսկալի տանջանքների ենթարկում և վանքը կողոպտելուց յետոյ տաճարն էլ հիմնայատակ քանդում են։ Արղուն խանի օրով և նրա հրամանով 1254 թւին Հայաստանում կատարւում է մարդահամար աշխարհագիր։ Մոնղոլ գրագիրները մտնում էին հայոց տները և գրում էին տան անդամների անունները՝ ահ ու սարսափ տարածելով տներում։

1290 Թ.Ք.Յ. — Թադէի վանքի առաջնորդ է յիշւում Տիրացու եպիսկոպոսը։

1293 Թ.Ք.Յ. — Կաթողիկոսական ընտրութիւնների առիթով Ս. Թադէի վանքը խնդրակ են գալիս Թորոս և Թովմաս եպիսկոպոսները։

1314 Թ.Ք.Յ. — Յովհաննէս Երզնկայցին իր Մատթէոսի Աւետարանի և Դանիէլի Մեկնութիւնների մէջ Ս. Թադէի վանքը յիշում է իբրև թեմի կենտրոն։

1315 Թ.Ք.Յ — Յունւարի 2-ին Ռոստակէս գրիչը Ս. Թադէի վանքում աւարտում է Ներսէս Շնորհալու «Աւագմոսաց» գրքի ընդօրինակութիւնը, որը նւիրում է վանքին։ Ս. Թադէի վանքի առաջնորդ է յիշւում Զաքարիա եպիսկոպոսին։

1317 Թ.Ք.Յ. — Ադանայի 5-րդ ընդհանուր ժողովին մասնակ-

ցում է նաև Ս. Թադէի վանքի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը։

1319 Թ.Ք.Յ. — Երկրաշարժից կործանւում է Ս. Թադէի վանքը։ Փլւում են շրջակայ տները և զոհ են գնում 75 հոգի։

1321 Թ.Ք.Յ. — Յովհաննէս 22-րդ Պապը նամակ է գրում Ս. Թադէի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոսին։

Նոյն այս թւականին Յովհաննէս Երզնկացին Ս. Թադէի վանքի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոս Եւստացու 1) օժանդակութեամբ թարգմանում է Թովմա Աքուինացու մի գործը։

1329 Թ.Ք.Յ. — 1319 թւի գարնանը երկրաշարժից կործանւած տաճարը հիմնաւոր նորոգելու աշխատանքին է ձեռնարկում Ս. Թադէի առաջնորդ Զաքարիա արքեպիսկոպոս Եւստացին։ Զաքարիա արքեպիսկոպոսը 1315 թւից առաջնորդն էր Ս. Թադէի վանքի, որի ջանքերի շնորհիւ աւարտւում է հիմնաւոր նորոգութիւնը 1329 թւին։ Այս առթիւ տաճարի ներսում քարէ պատի վրայ քանդակւած մնում է հետեւեալ արձանագրութիւնը. —

«Այս Տաճար լուսակիր եւ երկնանման Առաքելական հաստատագոյն հիմամբ ի վերայ Ածարնակ Շիրմին Սուրբ Առաքելոյն Թադէոսի որ ըստ բազմաստեան Յանցանաց Մեր Զկործանումն եառ ի Շարժէ. իսկ ես նուաստ սպասաւոր նորին Զաքարիա Եպիսկոպոս որդի Պարոն Մանուէլայ, կարողութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան զառաջինն՝ ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց Քրիստոնէից որ եւ բազում եկե-

1) Վասպուրականի Մոկս գաւառում գտնւում է ԵՒՍՏ գիւղը։

ղեցիք քահանին վասն որոյ արձանագրեցաք բղ-յիշատակս մեր. առ ի յիշատակել զմեզ Առաջին մեծին Աստուծոյ եւ անարիւն զենման զառինն Աստուծոյ հանդերձ ծնողաւք եւ զարմիւք եւ զյաջորդն մեր աղբաւր որդին զՏէր Տիրացուն եւ զհարազատ եղբայրս մեր զՊետրոս եւ զՄարգիս որք ըստ կարողութեան նպաստաւորք եղեն ընչիւք։ Կատարումն թւին ՉԼԸ – 778 փրկչական թուական 1329։

1330 Թ.Ք.Ց. — *Թումակէս գրիչը Ս. Թադէի վանքում, Զաքարիա արքեպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ, ընդօրինակում է մի Աւետարան։ Միաբանութեան մէջ յիշւում է նաև Տիրացու վարդապետի անունը։*

1332 Թ.Ք.Ց. — *Ս. Թադէի վանքի առաջնորդ է յիշւում Զաքարիան, որ 500 դրամով օժանդակում է մի Աստուածաշնչի գրչութեան։*

(Շարունակելի)

Շնորհակալութեամբ Ստացանք

مجله «هور» با نهایت تشکر کتب و مجلات زیر را دریافت نموده است

1.- ԿԻՒՐՄՈՒԶԱՍՏՈՒՄ ՔՈՂՆԱՑԻՆ

Թարգմ. Դր. Աշոտ Մուրադխանեան
Թեհրան Տպ. Մոդեռն 1971

2.- ՆՈՐ ԷՋ — Թիւ 16 (Գիրք դրախանութեան)
Թեհրան Տպ. Մոդեռն 1971

3.- ԼՈՒԹ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ (Բան.) Ժիրայր
Թեհրան Տպ. Անի 1971

4.- ՄՇԱԿՈՅԹ ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔ Թիւ 1—3—1967
» » Թիւ 4—5—1970
Պարբերագիրք գրականութեան, արուեստի եւ գիտութեան Հալէպ, Տպարան Շիրազ

5.- ԲԱՆԲԵՐ ՀԱՅԳԵՒՈՐ Ամսաթերթ 1971 Թիւ 10
Մարսէյլ, Տպ. Արր. Վիկտոր

6.- ՁԱՅՆԱՄԷՋ Երկշաբաթաթերթ Թ. 1-2-3-4-5-6-7-8-9-10-11-12 15—6 Պէյրութ 1971

7.- ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ Թ. 1-2-3-4-5-6-7-8 Պէյրութ 1971

8.- ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ Թիւ 43—44 Պէյրութ 1971

9. ՔՆԱՐԻՆ Կրօնական հանդէս Թ. 595-596 Իսթանպուլ 1971

10.- ԱՓԻԿՈՔ Շաբաթաթերթ Թ. 34-35-36-37-38-39-40-41-42-43-44 Պէյրութ 1971

۱۱— آشور Պարսկերէն-Ասորերէն պարբերաթերթ
Թեհրան 1971 թիւ 31 — 35

۱۲— سلامت فکر مجله بهداشت روحی شماره چهاردهم ۱۳۵۰ تهران

۱۳— رامین مجله ماهانه داروسازی-پزشکی-علمی و اجتماعی تهران
شماره ۱۴۳ سال سیزدهم ۱۳۵۰ – تهران

۱۴— خاطرات وحید شامل گوشه‌هائی از تاریخ معاصر ایران
سال نهم – دوره جدید – شماره اول – تهران

۱۵— دنیای علم شماره مخصوص مهر ماه ۱۳۵۰ سال ۱۵ تهران

۱۶— زیبائی و زندگی ماهنامه علمی دختری شماره اول سال نهم شماره مخصوص ۱۳۵۰ تهران

هور

شماره مخصوص

دوهزارو پانصدمین سال بنیانگذاری شاهنشاهی ایران

شماره ۳-۴

سال اول   شهریور - مهر   ۱۳۵۰

Hoor Monthly

Proprietor and Director
Dr. Gaguik Hovakimian

2-nd. fl. No 94
Karimkhan Zand Ave.
Tehran - Iran
Tel: 834170

مجله هور

صاحب امتیاز ومدیر مسئول
دکتر گاگیك هواکیمیان

خیابان کریمخان زند کاشی ۹۴
طبقه دوم
تلفن ۸۳۴۱۷۰

قیمت تکشماره درایران ۶۰ ریال خارجه یك دلار
اشتراك سالانه درایران ۷۰۰ ریال خارجه ۱۲ دلار

چاپ وحید : تلفن ۴۳۳۶۹
گراورسازی ابن سینا تلفن ۳۱۶۵۱۲

مجلّه هور

سال اول — شهریور ـ مهرماه ۱۳۵۰ — شماره ۴ـ۳

سلطنت ایران وارث یک رژیم پادشاهی است که بیست‌وپنج قرن است در این کشور برقرار است و قدیمی ترین رژیم سلطنتی جهان بشمار میرود رژیم پادشاهی ایران در تمام این مدت اساس حیات ملی این کشور بوده است.

از مصاحبه شاهنشاه با نمایندگان رادیو تلویزیون امریکا

تهران ۳ مهر ۱۳۳۸

بیست وپنج قرن پیش ملت ما راه و رسم حکومت خود را بطور قطع برگزید و در طول قرون با تمام قوا از رژیم طبیعی خود دفاع کرد.

بنابراین طبیعی است که مردم ایران از هردسته وصنفی درجشن بزرگ ملی دوهزار وپانصدمین سال شاهنشاهی خود ، سهم شایسته ای بعهده داشته باشند.

از مصاحبه مطبوعاتی شاهنشاه

تهران ۶ آذر ۱۳۳۸

بقلم اسقف آرداك مانوکیان
خلیفه ارامنه تهران

جشنهای فرخنده دوهزار و پانصدمین سال بنیان گذاری شاهنشاهی ایران

بمناسبت بنیان‌گذاری شاهنشاهی ایران در چند هفته اخیر مراسم وجشنهای با شکوهی در سرتاسر کشور ، استانها و شهرستانها حتی دهکده ها و قصبات دور دست برپا گردید.

تهران پایتخت ایران با طرز بسیار زیبا و بی‌سابقه آذین بندی و چراغانی گردیده بود و در تمام خیابانها، سردرساختمانهای دولتی و مؤسسات ملی، مغازه‌ها حتی خانه‌ها بیرقهای سه‌رنگ افراشته شده و چراغهای رنگارنگ چون گردن‌بندهای الماس درخشندگی خاص داشت .

مردم بیادبود این واقعه مهم تاریخی غرق در شادی و مسرت گردیدند و با

تشکیل مجالس شادمانی در هر گوشه و کنار احساسات شور انگیز و غرور آمیز خود را در معرض نمایش قرار می‌دادند . اهمیت این یادبود تاریخی بـاندازه‌ای بود که حتی دربسیاری از کشورهای خارجه همزمان با این جشن‌ها مراسمی بر پا گردید بطوری که این تشریفات جنبه بین‌المللی بخودگرفته بود .

در این جشن‌ها و میهمانی‌ها گروهی از پادشاهان و رؤسای جمهور ، سران و سر کردگان شرق وعرب، بدعوت‌اعلیحضرت همایون شاهنشاه آریامهر، وهمچنین بسیاری از شخصیت‌ها و جماعتی ازایرانشناسان، هنرمندان وروزنامه‌نگاران خارجی و نمایندگان طبقات مختلف ملت‌ایران، شرکت جستند.

میهمانـان عالیقدر ایران‌گـذشته از شرکت در مراسم بزرگـداشت تأسیس قدیمی‌ترین امپراطوری‌های جهان، فرصت مناسبی یافتند تا از نزدیك شاهدترقیات شگفت انگیز فرهنگی و اجتماعی ، صنعتی و اقتصادی میهن عزیز ما گردند و این تحولات عظیم‌را که درمدت بسیارکوتاهی درتمام شئون کشورایران رخ داده ، با دیده اعجاب وتحسین بنگرند .

جشن‌های بـا عظمت تاریخی نخست از پاسارگاد آغاز گردید و شاهنشاه آریامهر در برابر آرامگاه کوروش بزرك و میهمانان‌عالیقدرضمن نطق تاریخی‌خود چنین فرمودند:

«دراین جهان پرآشوب ایران پیام آور آزادی و آزادگی و انسان دوستی‌و حامی عالیترین احـساسات بشری است . این شعله‌ئی را که تـو افروختی هرگـز درطوفانهای عظیم وسهمگین خاموش نشده و پیوسته‌فروزان مانده و از سرحدات ایران نیزگذشته است.

کوروش !ما امروز در برابر آرامگاه ابدی تو آمده‌ایم تا بتو بگوئیم آسوده

بخواب ، زیرا که ما بیداریم و برای نگهبانی میراث پرافتخار تو همواره بیدار خواهیم ماند..

سوگند یاد می‌کنیم آن پرچمی را که تو در ۲۵۰۰ سال پیش برافراشتی همچنان افراشته و در اهتزاز نگاه خواهیم داشت ..... »

پس از پایان این نطق هیجان انگیز و تاریخی اعلیحضرت ، رژه بزرگ در تخت جمشید شروع گردید و سپاهیان ۲۵ قرن گذشته که هردسته و فوجی نمودار عصرها و سلسله‌های گوناگون شهریاران ایران بودند، ازبرابر مدعوین گذشتند و گوئی صفحات‌تاریخ‌پرافتخار گذشته کشوررادر برابردیدگان میهمانان‌ورق‌می‌زدند ، چنانکه دنباله جشن‌ها باهمان شور وشعف‌ازتخت جمشید به‌تهران کشیده‌شد و مراسمی‌نیزدرگشایش میدان‌شهیادواستادیوم‌یکصدهزارنفری آریامهربرپاگردید ..

چیزی که بیش از همه براهمیت این یادبود تاریخی ایران می‌افزاید یادگارهای‌گرانبهائی‌است که برای‌ملت‌ایران از خودگذارده زیراگذشته ازساختمان ۲۲۰۰ آموزشگاه در دهکده‌ها وقصبات دور و نزدیک ، بسیاری مؤسسات عام ـ المنفعه از بیمارستان‌ها ، تأسیسات ورزشی،راهها و جاده‌های شوسه و غیره برای بهره‌برداری و استفاده عمومی حاضر و آماده گردیده است .

اینک باین مناسبت وظیفه خود می‌دانیم که مراتب سپاسگذاری خویش را حضور شاهنشاه آریامهر ترقی‌خواه تقدیم داشته واز خدای بزرگ مسئلت نمائیم که ایران عزیز برهبری عالیقدر معظم له و اجرای مواد انقلاب سفید روز بروزمراحل ترقی و تعالی راپیماید و درصف‌اول کشورهای‌مترقی جهان قرارگیرد.ونیزحضور علیاحضرت فرح شهبانوی نکوکار ایران که درکارگشائی درماندگان و حمایت‌از مستمندان‌و توجه‌خاص در پیشرفت آموزش و پرورش و فرهنگ‌وهنر ،بویژه‌رعایت

وسرپرستی کودکان، آنی فروگذاری نمی‌فرمایند ، ادعیه خالصانه خودرا تقدیم داشته و سلامتی وعمرطولانی والاحضرت محبوب ولیعهد رااز درگاه باری تعالی مسئلت می‌نمائیم و در پایان درود بی‌پایان خود را به شاهنشاهی ایران از کوروش کبیر تا شاهنشاهی ایران کنونی نثار می‌کنیم.

* * *

نظریات مورخین دربارهٔ کوروش دوم

«هردوت» مورخ یونانی و «ژوبستن» و همچنین «دیودوروس سیکیلیائی» می‌نویسند که کوروش ازطرف «توسیریس» ملکه ماساگدها پس از اسارت به قتل رسیده در حالی که «کتیزیاس» عقیده دارد که هنگامیکه بسرعلیه دراویش همان کشوربه نبرد پرداخته بوده بر اثر ضربه سرنیزه یك سوار هندی کشته شده است.

اما «کسنوفون» مینویسد که او در بستر خود با مرگ طبیعی درگذشت و برای دو فرزندش وصیت نامه‌ای باقی گذارده (۵۲۹ قبل ازمیلاد مسیح) و درپاسارگاد بخاك سپرده شد (۱) بطوریکه می‌بینیم مورخین یونانی درباره مرگ کوروش عقاید مختلفی اظهار میدارند ولی مدارك معتبر تاریخی دردست است که آرامگاه کوروش درپاسارگاد

---

۱ ـ به کتاب «An Historical and descriptive Account of Persia» By James B. Fraser Esq Edinburg, 1833 مراجعه شود ۱۰۷ صفحه

ونزدیکی تخت جمشید است اسکندر مقدونی دوقرن بعد از آرامگاه او دیدن کرد ولی « آریستوبول» نعش اورا دیده است .

وچه یساء«زوبستن» مورخ یونانی (دوقرن پس ازمیلاد) نوشته‌های هردوت را راجع به پایان زندگی کوروش مورد استفاده قرار داده است .

پس ازمرگ کوروش (درسنه۵۲۹) بعد از ۸۰–۱۰۰ سال که «هردوت» میزیسته نوشته است (تاریخ ۴۲۲–۴۸۰ قبل ازمیلاد مسیح) وکسنوفون ۳۶۰–۴۴۴ قبل از میلاد و «کتسیاس» که همزمان کسنوفون بوده چون Anabazies پزشك مخصوص آرتاکسرکس منمونی Artakssersk Mnemoni بوده که برعلیه او برادر کوچك کوروش جنگید و در تاریخ ۴۰۱ قبل از میلاد مسیح کشته شد .

بنابراین طبق نظریات سه مورخ «هردوت» و «دیودور سیلیسی» و «کتسیاس» کوروش کبیر در میدان جنگ کشته شده و باتمام این مراتب مرگ کوروش کبیر دوم بازهم درپرده اسرار مانده است .

زناشوئی کوروش

«کتسیاس» حکایت میکند که کوروش «آژدهاك» را از تخت و تاج سلطنت خلع نمود وبا دختر او بنام « آتیس » عروسی کرد و اگر چنین باشد میتوان گفت کورش فرزند «ماندان» بوده وبا خاله خود ازدواج نموده است.

بررسی و تحقیق نام کوروش

تراژدی نویس مشهور یونانی بنام «اسکیاس» (Eskilessa) (۴۵۶ – ۵۲۵) قبل از میلاد مسیح که تقریباً همزمان با کوروش (۵۲۹ قبل ازمیلاد مسیح) بوده است در کشور خود میگوید بگفته ایرانیان کلمه کوروش به معنی «آرو» (آفتاب) است و با کلمه (Hvare) بزبان زندی شباهت دارد .

و این واژه در زبان زندی به معنی « هور» است«حور»یاخور« Khore »و بزبان‌فارسی خورشید به معنی آفتاب است .

«هور» بزبان ارمنی همان کلمه hvare زبان زندی است .

و بنابر این « کیوروس » « Kurosse »یا کوروش‌نزدایرانیان با تغییرجزئی همان کلمه «هور» ـ خوروخور Khore یا کورمیباشدواصطلاح یونانیان Cyrus همان کلمه کیروس یا کیورس است و ریشه اصلی کیوروس معلوم نیست وهمینقدر میدانیم که اوبنام پدربزرگ خود کوروش اول نامیده شده است که بمعنا « آرو » (آفتاب)نیز میباشد .

نام‌رودخانه کر

نام رودخانه کر همچنین از نام کوروش‌گرفته شده است .

«استرابون» دربارهٔدریانوردی اکسوس (Okssousse) مینویسد که کالاهای بازرگانی که‌ازهندستان‌فرستاده میشد در بحر الخزر... تخلیه‌میشد سپس به Cyrus (رودخانه‌کر«Kour»تفلیس امروزه) وبعد تا دریای‌سیاه حمل میشد ... !

بنابراین رودخانه کر شهر تفلیس نیز از نام کیوروس گرفته شده‌است .

ونیز درپاسارگاد رودخانه بنام «کور آب» وررودخانه دیگری بنام «آراکس» وجود داشته است . بدین‌ترتیب در ایران سه رودخانه بنام آراکس‌یکی درپاسارگاد، دیگری‌درجنوب دریاچه‌ارومیه رضائیه فعلی وسومی «آراکس» (مادر) در ارمنستان بوده است .

آ. آموریان ـ ترجمه آرا هوانسیان

---

۱) کتاب Iran Antique صفحات ۸و۹ملاحظه فرمائید

۲) در تقویمهای‌قدیمی نام‌رودخانه‌کر Cyrus نوشته شده است .ماگراور نقشه را ارائه میدهیم ـ آ. آ.

شادباش ارمنی

کرده تجلیل این چنین از شاه شاهان ارمنی
کرده برپا محفلی پر شور و غوغا ارمنی

بر شهنشاهی کوروش این چنین جشنی فرح بربا نمود
با دلی پر عشق و روحی پاک و هم گویا زبان ارمنی

تخت و تاج شهریاران یک به یک بگذشت و رفت
آریامهرا، تو گشتی حافظ ایران و جان ارمنی

دادگر شاهی و رعیت پرور، نامی و هم عادل صفت
بهر ملک و ملت ایران و هم خرد و کلان ارمنی

تو گسستی رشته زنجیر از پای آن دهقان اسیر
آفرین گوید ترا از دل همی پیر و جوان ارمنی

با سپاه دانش و بهداشت بر کندی تو بیماری و جهل
شکر گوید ملت ایران ترا و روح پاک ارمنی

داده ای بر کارگر سهمی ز زور و کار خویش
گشت شادان خاندان و مرد کار ارمنی

شد همی آباد و عمران ملک ایران با ظهور انقلاب
عرضه میدارد سپاس و شکر شاها، پیروان ارمنی

کوروش و شه عباس و نادر، هم رضاشاه کبیر
شاد بادا روحشان ، با ذکر و دعای ارمنی

بهر استقلال ملک و شاه و پرچم خورشید و شیر
همچو سربازی بریزد خون خود بر خاک ایران ارمنی

زنده بادا شاه ایران و ولیعهد و فرح بانوی ما
باد جاویدان کشور ایران و ایرانی و نام ارمنی

آموزگار دبستان نوزائی ارامنه ـ جهانگیر بدخش
۲۰ مهرماه ۱۳۵۰

بقلم: دکتر هراند قوکاسیان
استاد دانشگاه اصفهان

مسافرت مظفرالدین شاه به ارمنستان

مأخذ: از کتاب خاطرات هراچیا آجاریان چاپ ایروان ۱۹۶۷

در اچمیاتزین ارمنستان خبری مبنی بر مسافرت شاه ایران ازطریق ارمنستان به اروپا انتشار یافت.

انعکاس این خبر در سرتاسر ارمنستان به ویژه در اچمیاتزین مقر پیشوای بزرگ روحانی ارامنه شادی و مسرت زایدالوصفی دربین مردم آن سامان بوجود آورد. تمامی مردم از کاتوغی‌گوس گرفته تا کوچکترین فرد ارمنستان برآن شدند تا باکوششی هرچه باشکوهتر از شاه ایران استقبال بعمل آورند.

برای این منظور «خلیفه کاراپت» مدیر مدرسه عالی اچمیاتزین از جانب کاتوغی‌گوس ماموریت یافت تاسرودی بمناسبت این تشریف‌فرمائی تنظیم واجراء نماید. اشعار این سرود را «هراچیا آجاریان» ادیب ومحقق دانشمند ارمنی می‌سراید و آهنگ آنرا «کومیتاس وارتاپت» موسیقیدان وآهنگساز شهیر ارمنی تنظیم می‌نماید.

پس از انتظار فراوان خبر میرسد که شاه ایران و همراهانش به ایروان پایتخت ارمنستان وارد می‌شوند .

کاتوغی‌کوس با شنیدن این خبر بی‌درنك بهمراهی چند تن از راهبان سرشناس و «هراچیا آجاریان» با تشریفات خاصی بسوی ایروان راهی می‌گردند تا با شاه ایران ملاقات کنند .

کاتوغی‌گوس و همراهانش پس از رسیدن به ایروان در برابر خانه استاندار آن شهر که شاه در آن اقامت داشت از کالسکه پیاده می‌شوند و براهنمائی عده‌ای از افسران روس و دیگر مسئولین برگزاری مراسم تشریف فرمائی به اطاق بزرگی که ملتزمین رکاب در آنجا نشسته بودند وارد می‌شوندو پس از چند لحظه به‌حضور مظفرالدین‌شاه که باقیافه‌ای جدی ومتین در حالیکه تاج سلطنت برسر و دستش را برروی صندلی مخصوص گذارده بود، باز میبابند .

دراین ملاقات میرزامحسن‌خان سفیر کبیر ایران درپطرزبورك که سمت‌مترجم مخصوص را نیز داشت‌در کنار شاه ایستاده بود .

در این هنگام کاتوغی‌گوس خطابه خیرمقدم خودرا باشورو اشتیاق قرائت می‌کند و «هراچیا آجاریان» متن آنرا بزبان فرانسه ترجمه میکند و میرزا محسن خان نیز برای شاه بفارسی برمیگرداند .

پس از پایان خیرمقدم شاه ایران از ابراز احساسات کاتوغی‌گوس پیشوای روحانی ارامنه تشکر می‌کند . آنگاه کاتوغی‌گوس می‌گوید :

« کلیسای وانك اچمیاتزین ، وانك عزیز پدران شما بوده قندیلی که آنها به این کلیسای عظیم اهداء کرده‌اند دربرابر صدر معبد آن همواره روشن است .»

سپس از حضور شاه تقاضا میکند تادربازگشت ازسفراروپا از کلیسای وانك اچمیاتزین نیز دیدن فرمایند . شاه ضمن ابرازخرسندی وسپاس باگذاردن دست برسینهٔ خود که نشانهٔ نهایت رضایت مندی بوده درپاسخ می‌گوید :

«وظیفهٔ منست جائی را که مورد علاقه و احترام نیاکانمان بوده از نزدیك بازدید کنم.»

پس از پایان مراسم این بازدید کاتوغی‌گوس و همراهانش باهمان تشریفاتی که آمده بودند به اچمیاتزین مراجعت می کنند .

اندکی پس ازعزیمت آنهامیرزامحسن‌خان بدستور شاه برای بازدید کاتوغی‌گوس به اچمیاتزین میرود. در این ملاقات چون پیشوای روحانی اطلاع‌مییابد که فرستاده شاه بزبان ترکی آشنائی دارد شخصاً باوی بزبان ترکی بصحبت می‌پردازد و به میرزا محسن‌خان می‌گوید تا نسبت به تعمیر اساسی کلیسای «سورب استپانوس ناخاوگا» واقع درمرز ایران وارمنستان اقدام نمایند وبااین ترتیب بازدید فرستادهٔ شاه ایران با کاتوغی‌گوس پایان مییابد .

سالی از این قضیه گذشت و شاه ایران دربازگشت از اروپا طبق قولی که به کاتوغی‌گوس داده بودند به اچمیاتزین وارد میگردند . این بار نیز از شاه ایران استقبال پرشوروپذیرائی بی‌نظیری که نشانهٔ دوستی ومودت دیرینه‌ایست که همواره میان دوملت دوست و همجوار ایران و ارمنستان وجودداشته بعمل میآید ، ضمناً سرود فارسی که ازمدتها پیش بمناسبت سفر شاه ایران بارمنستان تهیه وتنظیم شده بود توسط گروه هنری جوانان ارامنه بنحو بسیار جالب و قابل تقدیر اجراء می‌گردد .

دراین سفر ازطرف پیشوای روحانی ، ضیافت‌ها ومجالس مجلل وپرشکوهی بافتخار مظفرالدین‌شاه برگزار می‌گردد که ازهرحیث مورد توجه وامتنان شاه ایران واقع می‌شود .

درهنگام بازدید از صحن کلیسا ومعبد پرابهت اچمیاتزین کاتوغی‌گوس در کنارشاه دست‌بدست هم داده ودرزیرسایبان اختصاصی که پایه‌هایش بدست افراد روحانی بوده‌بامراسم وتشریفات بسیار دلپذیر از آثار تاریخی وتصاویر معبد دیدن

میکنند .ودرپایان بازدید باهمان تشریفات‌ازصحن کلیسا خارج میگردند .

شاه ایران ازاستقبال وپذیرائی بی‌ریای ارامنه باردیگر تشکرمیکنند و نشان افتخاری برسینهٔ کاتوغی‌گوس نصب کرده ودست او را بـاصمیمیت هرچه بیشتر می‌فشارند .

میگویند مظفرالدین‌شاه وقتی که ازسفر طولانی خود بایران مراجعت میکند اظهار میدارد :

« اگرچه در سفراروپا همه جا بااستقبال پرشوری روبرو شدیم ولی استقبال وپذیرائی‌دوتن ازپیشوازکنندگان‌را ازصمیم‌قلب‌یافتیم که‌هیچوقت ازخاطرما فراموش نخواهد شد. یکی کاتوغی‌گوس ارامنه دراچمیازین ارمنستان ودیگری شخصی ازارامنهٔ ایران مقیم باکو که کلید خانه‌اش را درجعبهٔ نقره‌ای بعنوان هدیه به‌ماتقدیم داشت .

بقلم آشوت میناسیان

درباره حافظ

درشماره اول ماهنامه هور مقاله‌ای تحت عنوان بالا باقلم شیوای سناتور محترم و ادیب شهیر جناب آقای علی دشتی نگاشته شده بود که موضوع آن (تجلی سیمای مسیح در اشعار حافظ) بسیار جالب است وامیدوار است بنحو کامل مورد استفاده هموطنان گرامی واقع گردد .

اولا ناگفته نماند که تالیفات جناب آقای دشتی بین طبقات تحصیل کرده ارمنیان ایران شهرت بسزائی دارند و بخصوص سبك درخشان گفتار ایشان همیشه مورد تحسین و تمجید بوده است . رساله شاعرانه ایشان بنام « نقشی از حافظ » نیز معروفیت داشته و بسیار جالب است ـ بخصوص درجائی که میفرمایند :

« مردی در ۷۹۱ بوجود آمد ... مردی باسم شمس الدین حافظ مرد ... از فردای آن روز ـ فردای ۷۹۱ که دیگر حافظی در کوچه‌های حقیر شیراز آمد و شد نداشت ... یك موجود تابناك و اثری در روح تمام کسانی که بزبان فارسی سخن میگفتند بوجود آمد. ماه تابنده‌ای طلوع کرد و از فراز ابرهای بلند سفید آسمان برما عشق و خیال پاشید » ... بسیار عالی و شاعرانه است ولی باید اضافه

شود که حافظ نابغه جهانی و متعلق بتمام مردم جهان است و از این حیث تمام مردم جهان از پرتو معرفت آن شاعر عالی مقام بهره‌مند شدند و من جمله ارمنیان ...

نفوذ زبان و ادبیات فارسی در ادبیات ارمنی متعلق به قرنهای ۱۳ و ۱۴ میلادی (مطابق با قرون هفتم و هشتم هجری) کاملا مشهود و هویداست و همان مطالب اشعار فارسی :

گل و بلبل ـ وفا و جفا ـ غم هجران ـ مدح شراب (حقیقی و مجازی) ـ شوق دیدار یار ـ تلخی غربت ـ شکایت از چرخ فلک ـ نفرت از ظلم و ستایش عدالت و غیره ... جلب توجه می نماید.

با آنکه در زبان ارمنی کلمات زیادی وجود دارد که با زبان فارسی مشترك یا از یك ریشه سانسکریت یا زندی و یا پهلوی دری اقتباس شده از قبیل هور ـ آزاد ـ داد ـ ناو ـ یار ـ نشان وغیره که عیناً مانند کلمات فوق فارسی تلفظ و همان معنی را دارند، کلمات زیادی نیز که با اختلاف جزئی تلفظ میشود در زبان ارمنی متداول است از قبیل ساهمان (بجای سامان) ـ چراك (چراغ) ـ تاگ (تاج) ـ دور (در) ـ آرژك (ارزش) ـ بازوك (بازو) ـ درام (درم) و غیره شعرای ارمنی زبان قرنهای نامبرده با این اقتباسات قدیم اکتفا نکرده کلمات فارسی و عربی متداول در زبان فارسی آنروز (قرن ۷ و ۸) را در اشعار خود بکار برده‌اند از قبیل دیوان ـ دفتر ـ حسرت ـ داغ ـ جگر ـ تیر و کمان ـ بلبل ـ زلف پریشان ـ سرو روان و صدها کلمات و اصطلاحات فارسی و عربی دیگر. آنها مانند شعرای ایرانی که کلمات عربی را بجا و بی‌جا مورد استفاده قرار میدادند، این روش رفته رفته بجائی رسید که زبان ارمنی مخلوطی از زبانهای ارمنی و فارسی و عربی گردید مخصوصاً یکی از شعرای ارمنی زبان در قرن ۱۵ و ۱۶ (مطابق قرن ۸ و ۹ هجری) بنام گریگوریس آختاماری **Grigoris Akhtamaretzi** که یکی از روحانیون عالی رتبه ارمنستان بود در استعمال کلمات و اصطلاحات فارسی و عربی چنان زیاده روی کرد که بعضی اشعار او مخلوط

زبان ارمنی و فارسی است از قبیل اشعار زیر که برای سهولت درك آن با حروف لاتین نوشته میشود :

Berkroutian bajak ev abi hayat

که دو کلمه اول بمعنی جام نشاط بزبان ارمنی‌ودو کلمه دیگر (آب حیات) بزبان فارسی است .

نمونه دیگر :

Zehi houkm ou hraman, Zehi sakhtadil

(زهی حکم و هراماں وزهی سخت دل)

که فقط یك کلمه آن (هراماں) بمعنی فرمان ارمنی وبقیه تمام فارسی است و اتفاقاً کلمه هراماں نیز اقتباس از کلمه **Framan** پهلوی است که از قرن پنجم میلادی بشکل (هراماں) داخل زبان ارمنی و بشکل فرمان وارد زبان فارسی شده است .

شاعر نامبرده حتی شعر ملمع ارمنی و فارسی سروده که متن آنها در مرور زمان و در نتیجه کثرت استنساخ تا اندازه‌ای تحریف شده و اینك بهمان صورت از نظر خوانندگان محترم میگذراند :

Mourghan goaftan ay blboule Kani kantches mek pah lre

که مصراع اول آن (مرغان‌گفتندای بلبل) فارسی ومصراع‌دوم بمعنی (چند فغان کنی لحظه‌ای خموش) بزبان ارمنی است و همچنین از اشعار او بیتی فارسی و بقیه ارمنی است و اینك چند نمونه از ابیات فارسی بهمان شکل تحریف شده :

Amri tou ra bachad deraz Blhoul hegou tou hay avay

عمر تورا باشد دراز بلبل بگو توبا آواز

Bachad ki chavi youssefi Qoinan-Enorassiday gouli ba bostan.

باشد که شوی یوسف کنعان　　ای نورسیده گلی به بوستان

در اشعار دیگر این بزرگوار بسیاری از اصطلاحات حافظانه است از قبیل- آب حیات ـ نافه تاتار ـ مرغ سحر ـ محراب ابروی یار ـ شب قدر (یعنی شب موعد و مبارک) ـ هدهدصبا و غیره اقتباس این کلمات و اصطلاحات حتماً ازشعر فارسی و احتمالا از حافظ است .

این قبیل علائم واثرات دراشعار شعرای ارمنی قرن ۱۶ و۱۷و۱۸ دیده میشود و مخصوصاً در اشعار معروف قرن ۱۸ بنام Sayatnova (سایات نوا) که درسه زبان ارمنی وگرجی و ترکی آذربایجانی شعر گفته روح اشعار فارسی کاملا مشهود است .

این اطلاعات از رساله آقای بابکن چوگاسزیان که از جوانان تحصیل کرده در تبریز میباشد و در سال ۱۹۴۶ به ارمنستان مهاجرت کرده اقتباس شده است رساله فوق الذکر تحت عنوان ارتباطات ادبی ارمنی و ایرانیان ودر سال ۱۹۶۳ از طرف آکادمی ارمنستان شوروی منتشر شده است . سرلوحه کتاب بزبان ارمنی از این قرار است .

Հայ-իրանական գրական առնչություններ.
Հեղինակություն Բ. Լ. Չուգասզյանի
Պետհրատ. Երևան 1963 թ.

ترجمه های مستقیم از حافظ بزبان ارمنی از اوایل قرن بیستم شروع شده است. ترجمه‌های مذکور درمطبوعات زبانهای اروپائی بطور پراکنده دیده میشود واغلب ترجمه‌ای از زبانهای آلمانی وانگلیسی است که حتماً تحریف شده است ـ در سال ۱۹۰۵ مجموعه‌ای از رباعیات وقطعات حافظ بترجمه ماکسودیان نامی در تبریز بچاپ رسید و نیز مجموعه ای شامل ترجمه ۵۹ رباعی و ۵۳ غزل و مثنوی (ساقی نامه) باتضمام اطلاعات مختصری ازشرح حال حافظ واوضاع واحوال قرن هشتم هجری باتوضیحات و لغت نامه در شهرایروان از طرف انتشارات دولتی ارمنستان شوروی در سال ۱۹۵۷ چاپ و منتشر گردید ضمناً دو قطعه شعر در مجموعه اشعار

بزرگترین شاعر معاصر ارمنی آودیك ایساهاکیان تحت عنوان از حافظ دیده میشود که ترجمه‌مطلع آنها ذیلا از نظرخوانندگان‌گرامی‌مجله هور میگذراند :

۱ - صبحگاهان به گلستان آمدم تابچینم گلی

ناگهان بگوش رسید ناله غمگین بلبلی

که ترجمه غزل زیر است :

رفتم بباغ صبحدمی تا چینم گلی آمد بگوش ناگهان آواز بلبلی

۲ - مطلع شعردوم باین شرح است : قدح شراب بدستم وگلی بسینه وشوق در دل ... که معلوم نشد اصل غزل کدام است .. ممکن است فقط الهامی از حافظ باشد .

